ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

Դ

ՈՐՈԳԻՆԵՄ

ՀՐԱՄԱՆԱՒ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՌԵԳՆԻ ԵՐԿՐՈՐԴԻ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԱՅՐԵՐ

Դ

ՈՐՈԳԻՆԵՍ

ԱՂՈԹՔԻ ՄԱՍԻՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2007

ՀՏԴ 25
ԳՄԴ 86.37
Ո – 772

Թարգմ. ֆրանսերենից՝
Պ. Շահբազյանի
Առաջաբանը՝
Եզնիկ արքեպս. Պեպրոսյանի

ՈՐՈԳԻՆԵՍ
Ո – 772 Աղոթքի մասին: - Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007.- 172 էջ:

ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ՝

«ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ» ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ISBN 978-99930-75-57-8 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2007թ.

ՈՐՈԳԻՆԵՍ
(185 -253/4)

Որոգինեսը պատկանում է մարդկության մեծագույն անձնավորությունների թվին: Նա Հին եկեղեցու ամենաբեղմնավոր գրողն է:

Եղել է Ալեքսանդրյան ոգեկան – մշակութային մթնոլորտի հարազատ զավակը և գործել այնպիսի մի ժամանակ, երբ փիլիսոփայության մեջ ծնվում էր նորպլատոնականությունը՝ Պլոտինի միջոցով, երբ կրոնական փնտրտուքների շրջանակում երևան են գալիս շեշտված ճգնողական հակումներ, երբ Եկեղեցու ծոցում իշխում էին երկու աստվածաբանական ուղղություններ. ավանդականը՝ Իրինեոսով և Հիպպոլիտոսով, և նորը՝ Կղեմես Ալեքսանդրացիով և Տերտուղիանոսով:

Կղեմես Ալեքսանդրացին իր ողջ աշխատանքով փորձեց ընդգծել փիլիսոփայության կարևորությունը քրիստոնեության համար՝ կարևոր համարելով քրիստոնեությունը բացատրել իր ժամանակի լեզվով և մշակութային ըմբռնումներով: Այս գործը շարունակում է Որոգինեսը: Նա, փիլիսոփայությունը ներառնելով քրիստոնեության մեջ, փորձել է հասնել հավատքի փիլիսոփայական հիմնավորմանը: Մինչ Իրինեոսը, Տերտուղիանոսը, Կիպրիանոսը զբաղվում էին հիմնականում այն խնդիրներով, որոնք առաջանում էին իրենց ժամանակի թելադրանքով, Որոգինեսը փորձում է ստեղծել սիստեմատիկ աստվածաբանություն՝ հանդես գալով իբրև մեծ քրիստոնյա փիլիսոփա:

Նա գրեթե իր ողջ կյանքը նվիրել է Ս. Գրքի ուսումնասիրությանը՝ քննական տեքստի կազմություն, լուծմունք, ճառեր, մեկնություններ: Նա Ս. Գրքի նկատմամբ ցույց է տվել չափազանց մեծ նվիրում՝ պաշտամունքի աստիճանի: Նրա

համար Ս. Գիրքը մարմնացած Լոգոսն էր, Տիրոջ ներկայությունը աշխարհում: Որոգինեսը համարվում է Ս. Գրքի տեքստի քննական ուսումնասիրության հիմնադիրը:

Կյանքը

Որոգինեսի մասին սկզբնաղբյուրները պահպանել են ավելի շատ տվյալներ, քան նրանից առաջ ապրած բոլոր հեղինակների մասին՝ միասին վերցրած: Ամենակարևոր սկզբնաղբյուրներն են Պամփիլոսի († 309) «Ջատագովություն Որոգինեսի» (307/9), Եվսեբիոս Կեսարացու «Եկեղեցական պատմություն», Հերոնիմոսի «Նշանավոր մարդկանց մասին» (54-62) և նամակ հմր. 44, Փոտի «Գրադարան», Գրիգոր Սքանչելագործի «Ներբողական խոսք Որոգինեսին» երկերը (239 թ.), ինչպես նաև իր իսկ գործերը:

Ծնվել է քրիստոնյա ընտանիքում 185 թ., Ալեքսանդրիայում: Նախնական կրթությունը և Ս. Գրքի ծանոթությունը ստացել է իր հոր՝ քերականության ուսուցիչ Լեոնիդեսի դպրոցում: Աշակերտել է Պանտենոսին և Կղեմես Ալեքսանդրացուն (Եվս., Ձ 14, 8-9, Ձ 6):

202 թ., Սեպտիմոս Սևերոսի հալածանքների ժամանակ, Որոգինեսի հայրը ձերբակալվում է և նահատակվում: Որոգինեսը ցանկանում է հետևել հորը և նրա հետ նահատակվել: Մայրը թաքցնում է նրա հագուստները. ամոթը՝ մերկ դուրս գալու, հաղթում է նահատակության փափագին և պահպանում 17-ամյա պատանու կյանքը: Հոր մահից հետո ընտանիքի հոգսը (մայրը և 6 փոքր եղբայրներ) ընկնում է նրա ուսերին: Հակառակ դրան՝ շարունակում է իր ուսումը Ալեքսանդրիայի Աստվածաբանական դպրոցում, մի ազնվափայլ տիկնոջ նյութական օժանդակությամբ: 206-210 թթ. զբաղվում է ուսուցչությամբ, նախ՝ անձնական նախաձեռնությամբ, ապա՝ Դիմիտրիոս եպս. Ալեքսանդրացու կարգադրությամբ՝ տեղի Աստվածաբանական դպրոցում:

Նա ապրում էր շատ պարզ, ժուժկալ կյանքով: Իր աշակերտներից ուսման վարձ չէր առնում, ապրուստը հոգում էր՝ ձեռագրեր արտագրելով: Քնում էր գետնին: Սխալ հասկանալով Մատթ., ԺԹ 12 հատվածը՝ իրեն ենթարկում է ներքինիության:

210 թ. շուրջ Պլոտինի հետ միասին աշակերտում է ժամանակի նշանավոր ուսուցիչ Ամմոնիոս Սակկային: Միաժամանակ շարունակելով իր ուսուցչությունը Աստվածաբանական դպրոցում՝ այն բաժանում է 2 բաժնի: Առաջին բաժինը վստահում է իր աշակերտ Հերակլասին, իսկ բարձրագույն բաժնում դասավանդում դիալեկտիկա, ֆիզիկա, մաթեմատիկա, երկրաչափություն, աստղագիտություն, փիլիսոփայություն և աստվածաբանություն:

Նրա հռչակը շուտով տարածվում է Եգիպտոսի սահմաններից դուրս. նրան աշակերտում էին ո՛չ միայն քրիստոնյաներ, այլ նաև հեթանոսներ և հրեաներ (Եվս., Ձ 3):

211/2 թթ. այցելում է Հռոմ, ուր ունկնդրում է Հիպպոլիտոսին: 225 թ. այցելում է Արաբիա, 229/30 թ., հավանաբար իր երկերի հարուցած աղմուկից խուսափելու համար, մեկնում է Պաղեստինի Կեսարիա, ուր, թեև աշխարհական, տեղի Թեոկտիստոս և Երուսաղեմի Ալեքսանդր եպիսկոպոսների թույլտվությամբ և հովանավորությամբ քարոզում է եկեղեցիներում: Ալեքսանդրիայի Դիմիտրիոս եպիսկոպոսն իր դժգոհությունն է հայտնում այս կապակցությամբ և հանձնարարում Որոգինեսին վերադառնալ: 231 թ. նա վերադառնում է Ալեքսանդրիա: Ալեքսանդր Սևերոսի մոր՝ Յուլիա Մամմեայի հրավերով 231/2 – ի ձմռանը այցելում է Անտիոք:

231/2 թ. Դիմիտրիոս Ալեքսանդրացին Որոգինեսին ուղարկում է Աթենք՝ պայքարելու հերետիկոսների դեմ: Այս ճամփորդությունը ճակատագրական է լինում Որոգինեսի համար: Ճանապարհին՝ Պաղեստինի Կեսարիայում, տեղի Թեոկտիստոս եպիսկոպոսի կողմից ձեռնադրվում է քահա-

նա՝ առանց Դիմիտրիոսի արտոնության, մի բան, որ Ալեքսանդրիայում առաջ է բերում անբարյացակամ կեցվածք Որոգինեսի դեմ: Դիմիտրիոսը կարգալույծ է հռչակում Որոգինեսին՝ պատճառաբանելով հիմնականում նրա ներքինիությունը (Փոտ, Գրադարան, 118): Իրականում Դիմիտրիոսի այս քայլը ուղղված էր Պաղեստինյան եպիսկոպոսների դեմ: Ի պատասխան այդ քայլի, ինչպես Պաղեստինի, այնպես էլ Արաբիայի, Փյունիկեի և Հունաստանի եպիսկոպոսները անտեսում են Ալեքսանդրիայի եպիսկոպոսի որոշումը: 234 թ. Որոգինեսը Ալեքսանդրիայի Աստվածաբանական դպրոցը հանձնում է Հերակլասին և մեկնում Պաղեստինյան Կեսարիա, ուր արժանանում է փառավոր ընդունելության և հիմնում նոր դպրոց: Այս դպրոցի շրջանավարտներից է Ս. Գրիգոր Սքանչելագործը: Կեսարիայի դպրոցում Որոգինեսը շարունակում է իր գործը.

ա. Փիլիսոփայական նախապատրաստում քրիստոնեության ընկալման համար,

բ. Ս. Գրքի մեկնություն,

գ. Աստվածաբանություն:

Իր աշակերտներից Ամբրոսիոսի նյութական օժանդակությամբ 234–250 թթ. գրում է բազմաթիվ մեկնողական և ջատագովական երկեր: Նա իր տրամադրության տակ ուներ սղագիրներ, որոնք գիշեր-ցերեկ գրի էին առնում նրա դասախոսությունները:

Այս տարիներին Որոգինեսը կատարում է նաև մի շարք ճամփորդություններ: 235 թ. այցելում է Կապադովկյան Կեսարիայի եպիսկոպոս Փիրմիլիանոսին, 239-40 թթ. այցելում իր ընկերոջը՝ Ամբրոսիոսին, Նիկոմեդիա, 240/42 թ. կրկին անգամ այցելում է Արաբիա, տեղի եպիսկոպոսների հրավերով՝ ուղղափառության բերելու համար Բոստրայի Բերիլոս եպիսկոպոսին, որ համարվում էր հայրաչարչարության աղանդի կողմնակից:

Որոգինեսը ձերբակալվում է 250 թ., Դեկոսի հալածանքների ժամանակ: Նա համարձակորեն խոստովանում է իր հավատքը: Թեև չի նահատակվում և ազատվում է բանտից, սակայն նրա տքնաջան աշխատանքները և բանտի չարչարանքները արդեն թուլացրել էին նրա մարմինը: Մահանում է 253/4 թթ. Փյունիկեի Տիրոս քաղաքում:

Երկերը

Որոգինեսը մարդկության ամենավաստակաշատ գրողներից մեկն է և եկեղեցու առաջին 4 դարերի ամենաբեղմնավոր հեղինակը: Նրա երկերը այնքան շատ էին, որ շուտով դրանց թիվը առասպել է դառնում: Եպիփան Կիպրացին ասում է, թե նա գրել է 6000 երկ (Պանարիոն, 64, 63): Հերոնիմոսը, որ տեսել է Եվսեբիոս Կեսարացու կազմած ցանկը, ասում է, թե դրանք շուրջ 2000 են, ընդ որում՝ հիշում է 800-ի անունները (Նամակ, 33): Անշուշտ, պետք է նշել այստեղ, որ նա առանձին գործեր համարում է ոչ թե մեկ, այլ 25 գործ, քանի որ բաղկացած է 25 պրակներից:

Դժբախտաբար Որոգինեսի ստեղծագործության մեծ մասը կորել է կամ չի պահպանվել հունարեն բնագրով:

Նա սկսել է ստեղծագործել 218 թ., 33 տարեկան հասակում: Շատ քիչ երկ է իր ձեռքով գրել (Վեցյունակը, նամակներ և մի քանի մեկնություններ): Երկերի մեծ մասը թելադրել է, սղագիրները գրի են առել և հանձնել վայելչագիրներին: Այս աշխատանքի վարձը վճարում էր նրա բարեկամ և աշակերտ Ամբրոսիոսը: Որոգինեսը վկայում է, թե ինքը ստուգել է սղագիրների աշխատանքը (P. Nautin, Origène. Sa vie et son oeuvre, Paris 1977, էջ 251):

Նրա երկերը կարելի է բաժանել մի քանի խմբերի՝ Քննական, Մեկնողական, Ջատագովական-Դավանաբանական, Բարոյական-Գործնական և այլն:

Ա. Քննական - Վեցսյունակ

Որոգինեսը համարվում է Ս. Գրքի տեքստի քննական վերակազմության հիմնադիրը: Ավելի քան 25 տարի (217/8-245) աշխատել է մի տիտանական աշխատության վրա, որի նպատակն է եղել սրբագրել Ս. Գիրքը և կազմել քննական սրբագրված տեքստ: Որպեսզի կարողանա վերականգնել Հին Կտակարանի (Յոթանասնիցի) նախնական օրինակը և, հատկապես, որպեսզի կարողանա ցույց տալ այդ տեքստի մաքրությունը, վեց սյուներով համադրել է 1) եբրայական տեքստը, 2) եբրայական տեքստը՝ հունատառ, 3) Ակյուղասի թարգմանությունը, 4) հրեա Սիմմաքոսի թարգմանությունը (Սեպտիմոս Սևերոսի օրոք), 5) Յոթանասնիցը, 6) Թեոդոտիոնի թարգմանությունը (180 թ.): Որոշ դեպքերում սյունակները 4-ն են, այլ դեպքերում՝ 7 կամ 8՝ համաձայն այն թարգմանությունների, որ օգտագործել է Որոգինեսը:

Որոգինեսի քննական աշխատանքը իր արտահայտությունը գտել է 5-րդ սյունակում, ուր օբելիսկի նշանով (÷) նշվում են այն բառերը, որոնք բացակայում են եբրայական բնագրում, մինչ այն բառերը, որ բացակայում են Յոթանասնիցում, և ներմուծել է այլ թարգմանություններից, նշել է աստղանիշով (*):

Որոգինեսի այս տիտանական երկի մի փոքրիկ մասն է միայն պահպանվել:

Բ. Մեկնողական

Որոգինեսը մեկնել է ողջ Ս. Գիրքը: Նրա մեկնողական երկերը բաղկացած են լուծմունքներից (Ս. Գրքի խրթին հատվածների բացահայտություն), ճառերից և մեկնություններից:

1) Լուծմունքներ

Հերոնիմոսը հիշում է Ելքի, Ղևտացվոցի, Եսայու, Սաղմոսաց 1-15 գլուխների, Ժողովողի և ըստ Հովհաննու՝ Ավետարանի լուծմունքները (Նամակ 33): Այս լուծմունքներից ոչինչ չի պահպանվել:

2) Ճառեր

Գրված 239-242 թթ.: Այս ճառերը քարոզներ են Ս. Գրքի հատվածների վերաբերյալ՝ արտասանված Ս. Պատարագի ընթացքում: Ըստ Սոկրատի՝ նա քարոզում էր ամեն չորեքշաբթի և ուրբաթ (Եկեղ. պատմ., 5, 22), մինչ ըստ Որոգինեսի կենսագիր Ռուֆինոսի՝ քարոզում էր ամեն օր: Նրա 574 ճառերից հունարենով պահպանվել են միայն 20 ճառեր Երեմիայի գրքի մասին (գրված՝ 242 թ.) և 1 ճառ Ա Թագավորաց ԻԸ 3-25-ի վերաբերյալ:

Ռուֆինոսի լատիներեն թարգմանությամբ պահպանվել են՝ 16 ճառ Օննդոցից, 13 ճառ Ելիցից, 16 ճառ Ղևտացվոցից, 28 ճառ Թվոցից, 26 ճառ Հեսու Նավեից, 9 ճառ Դատավորացից, 9 ճառ Սաղմոսացից. բոլորն էլ գրված՝ 239-242 թթ. միջև:

Լատիներեն, Հերոնիմոսի թարգմանությամբ, պահպանվել են՝ 2 ճառ Երգ Երգոցից, 9 ճառ Եսայիից, 14 ճառ Երեմիայից, 14 ճառ Եզեկիելից, 39 ճառ Ղուկասի Ավետարանից. բոլորն էլ գրված՝ 239 – 242 թթ.:

Հունարենով և լատիներենով պահպանվել են նաև բազմաթիվ հատվածներ զանազան ճառերից:

3) Մեկնություններ

Սրանք ընդարձակ մեկնողական գործեր են, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր պապիրուսե մի գլանակից, որով և կոչվում էին հատորներ կամ պրակներ: Մինչ ճառերը արտասանվում էին եկեղեցում և ունեին խրատաբարոյական բովանդակություն, մեկնությունները կատարվում էին լսարաններում, ուղղված էին աստվածաբանության գիտակներին և ուսանողներին, ունեին գիտական բնույթ և ամե-

նայն մանրամասնությամբ անդրադառնում էին բանասիրական, ծագումնաբանական, քննական, պատմական, աստվածաբանական և փիլիսոփայական խնդիրներին՝ օգտագործելով հիմնականում ալեգորիկ մեթոդը: Այս մանրամասնության փայլուն օրինակն է այն, որ Հովհաննու Ավետարանի «Ի սկզբանէ էր Բանն» նախադասության մեկնությունը ընդգրկում է ողջ Ա հատորը, մինչ 32 հատորները հասնում են մինչև ԺԳ 33-ի մեկնություն:

Որոգինեսի մեկնությունների 291 հատորներից պահպանվել են.

հունարենով՝

8 հատոր Մատթեոսի Ավետարանի մեկնությունից,

9 հատոր Հովհաննեսի Ավետարանի մեկնությունից,

լատիներենով՝

4 հատոր Երգ Երգոցի մեկնությունից,

14 հատոր Մատթեոսի Ավետարանի մեկնությունից,

10 հատոր Առ Եբրայեցիսի մեկնությունից:

Պահպանվել են նաև բազմաթիվ հատվածներ Ծննդոց, Սաղմոսաց, Երգ Երգոց, Եսայու, Եզեկիելի և այլ գրքերի մեկնություններից:

Գ. Ջատագովական - Դավանաբանական երկեր

Սկզբունքների մասին (Քրիստոնեական հավատքի և գիտության հիմնական տարրերը):

Այս երկը, որը Որոգինեսը չէր ցանկացել անգամ հրապարակել, նրա ստեղծագործության գլուխգործոցն է: Այն քրիստոնեական դավանաբանության առաջին գիտական ձեռնարկն է:

Երկը նրա՝ 220-230 թթ. դասավանդություններն են, որ գրի են առել նրա աշակերտները: Որոգինեսը աչքի է անցկացրել այն և օգտագործելի համարել միայն իր աշակերտների համար երկու պատճառով.

ա. չի կարողացել բավարար չափով մշակել այն հրապարակելու համար,

բ. կարծել է, որ խիստ դավանաբանական բովանդակությամբ այսպիսի մի գիրք ո՛չ բոլորի համար է:

Նրա աշակերտ, բարեկամ և հովանավոր Ամբրոսիոսը, երբ տեսնում է այն, այնքան է ոգևորվում, որ հրատարակում է առանց իր ուսուցչի գիտության: Այս երկում տեղ գտած մի շարք մտածումներ էլ պատճառ են դառնում հետագայում Որոգինեսի դատապարտությանը:

Բնագրից պահպանվել են ընդարձակ հատվածներ Ֆիլոկալիայում, հատկապես Գ և Դ հատորներից, և այլ հատվածներ Մարկելլոս Անկյուրացու երկերում և Հուստինիանոս կայսեր հակաորոգինեսյան հրովարտակում:

398 թ. Որոգինեսի շուրջ ծավալված վիճաբանությունները ծնունդ տվեցին այս երկի լատիներենի երկու թարգմանության: Մեկը կատարել է Հերոնիմոսը, բառացի՝ ցանկանալով ցույց տալ նրա չարափառությունը, մյուսը՝ Ռուֆինոսը՝ սրբագրելով երկում տեղ գտած թյուր մտածումները Սուրբ Երրորդության և այլնի մասին: Այս սխալները Ռուֆինոսը համարում է «այլ ձեռքի» կողմից արված խեղաթյուրում և սրբագրում է համապատասխան հատվածները Որոգինեսի այլ երկերից: Հերոնիմոսի թարգմանությունից պահպանվել են միայն փոքրիկ հատվածներ (Նամակ 124՝ առ Աբիտոս):

Այս՝ քրիստոնեական աստվածաբանության առաջին ամբողջական սիստեմատիկ աշխատությունը, բաղկացած է 4 հատորից.

ա. Աստուծո մասին, որը ներկայանում է իբրև ոգի (πνεῖμα) կամ միտք (νοῦς) կամ Միակ (μονάς), Լոգոսի մասին, Ս. Հոգու մասին, ոգեկան էակների նախատիեզերյան արարչագործության, նրանց անկման և վերականգնման մասին:

բ. Ներկա տիեզերքի արարչագործության խնդիրների, Հին և Նոր Կտակարաններում ներկայացված Աստվածների

նույնության, Լոգոսի մարմնացման, Հոգու բխման, հարության, դատաստանի և հավիտենական երանության մասին:

գ. Բանական էակների ազատության և ինքնիշխանության խնդիրների, հոգու և մարմնի միությունից բխող բարու և չարի միջև պայքարի մասին:

դ. Ամփոփում: Ս. Գրքի աստվածաշունչ լինելու խնդիրների և մեկնության կանոնների մասին:

Երկի ներածությունում քրիստոնեական վարդապետության աղբյուրները համարվում են Քրիստոսի խոսքը և առաքյալների խոսքը: Ճշմարտության չափանիշը եկեղեցական և առաքելական Ավանդությունն է: Առաքյալները ամեն ինչի մասին չէ, որ ասել են, ինչպես, օրինակ, հոգու, հրեշտակների, սատանայի մասին և այլն: Այդ հարցերի պատասխանները կարող է տալ գիտությունը:

Երկխոսություններ Հերակլիդասի հետ

Այս երկը գտնվել է 1941 թ. Տուրայում, հունարենով, Զ դարի մի պապիրուսի ձեռագրով:

Այն Որոգինեսի և Բոստրայի եպիսկոպոս Բերիլիոսի միջև հրապարակային բանավեճի արձանագրությունն է: Ինչպես հիշեցինք Որոգինեսի կենսագրության մեջ, Արաբիայի եպիսկոպոսների հրավերով, 240-242 թթ. շուրջ, Որոգինեսը մեկնում է Արաբիա, իբրև տիեզերական հեղինակություն ունեցող ուսուցիչ, քննելու համար Բոստրայի եպիսկոպոսի հայրաչարչար ուսմունքը: Բանավեճը տեղի է ունենում եկեղեցում, եպիսկոպոսների, քահանաների և ժողովրդի ներկայությամբ:

Ընդդեմ Կելսոսի (8 գիրք, շուրջ 246/249 թ.)

Այս երկը հին քրիստոնեական գրականության ջատագովական լավագույն գործերից մեկն է: Պահպանվել է հունարեն բազմաթիվ ձեռագրերով, որոնց հիմքը հանդիսանում է ԺԳ դարի Վատիկանի հունարեն № 386 ձեռագիրը: Մի այլ

ավանդություն է ներկայացնում Կահիրեի № 88747 պապիրուսը, որ պարունակում է Ա - Բ գրքերը միայն և շատ վատ վիճակի մեջ է:

Նորպլատոնական Կելսոսը 178 թ., Ս. Գրքի և քրիստոնեության երկար ուսումնասիրությունից հետո, գրում է 4 գրքերից բաղկացած հակաքրիստոնեական «Ճշմարիտ խոսք» երկը: Այն կորել է: Երկի 3/4-ը պահպանվել է Որոգինեսի միջոցով:

Կելսոսի երկը շուրջ 70 տարի աննկատ է մնացել թե՛ հեթանոսների և թե՛ քրիստոնյաների կողմից: Ապա ընկել է Ամբրոսիոսի ձեռքը, որը և խնդրել է իր առաջին ուսուցչին՝ հերքելու այն: Որոգինեսը նախ հրաժարվել է՝ պատճառաբանելով, թե լավագույն հերքումը լավ կրթությունն է, ապա տեղի է տվել իր բարեկամի խնդրանքին՝ նրան էլ նվիրելով այս աշխատությունը:

Նախ գրում է մի համառոտ հերքում, որը և դառնում է ներածություն ավելի ընդարձակ մեկնության համար:

Ստրոմատիս – (10 գիրք)

Նմանակել է Կղեմեսի համանուն երկին:

Պահպանվել են միայն հատվածներ:

Ըստ Հերոնիմոսի (Epist. 70,4 և Ad Magnum)՝ Որոգինեսը քրիստոնեական վարդապետության սկզբունքները հաստատել է հույն փիլիսոփաներ Պլատոնի, Արիստոտելի, Նումենեոսի և Կորնուտոսի ուսմունքներով:

Պահպանվել են հատվածներ հարության մասին երկերում և բնության մասին երկերից:

Դ. Բարոյական-Գործնական երկեր

Աղոթքի մասին

Գրել է 233/4 թթ.: Պահպանվել է հունարենով: Որոգինեսի լավագույն գործերից մեկն է: Հանդիսանում է պահպանված

հնագույն գիտական աշխատությունը աղոթքի մասին:

3-17 գլուխներում խոսում է աղոթքի մասին ընդհանրապես, 18-30 գլուխներում մեկնում Տերունական աղոթքը, իսկ 31–34-ում խոսում աղոթքի 4 տեսակների մասին՝ փառաբանական, գոհաբանական, խոստովանական և պատճառական:

Աղոթքը մարդու ազատ կամքի արդյունքն է, մինչ այդ կամքի բարի օգտագործումը նպաստում է Աստուծո կողմից իրերի բարենպաստ կարգավորմանը, հատկապես երբ մենք աղոթակից ենք ունենում Քրիստոսին:

Ծիսական աղոթքը ուղղված է միայն Հայր Աստծուն (15,1):

Նահատակության մասին

Գրել է 235 թ.՝ քաջալերելու համար Ամբրոսիոս սարկավագին և Կեսարիայի Պրոտոկտիոս քահանային, որոնք ձերբակալվել էին Մաքսիմինոս Թրակացու հալածանքների ժամանակ: Հորդորում է նրանց՝ անխախտ մնալ իրենց հավատքի մեջ և քաջությամբ ընդունել նահատակության պսակը, որն իրենց ուղղակի առաջնորդելու է դեպի երկնքի արքայություն:

Որոգինեսը այս երկում արտահայտել է մի նոր գաղափար, որ կարևոր դեր է խաղացել հետագայում ճգնողական կյանքի զարգացման համար. «Նահատակությունը միայն բացահայտ կերպով չի լինում, այլ նաև գաղտնի՝ ներքին պայքարով» (21):

Զատկի մասին

Գտնվել է 1941 թ. Տուրայում հայտնաբերված ձեռագրերից մեկում: Չի հրատարակվել վատ պահպանված լինելու պատճառով:

Ե. Նամակներ

Որոգինեսը գրել է բազմաթիվ նամակներ: Եվսեբիոս Կեսարացին կազմել է նրա նամակների ժողովածուն՝ բաղկացած ավելի քան 100 միավորից:

Ամբողջությամբ պահպանվել են միայն հետևյալ երկու նամակները.

Առ Հուլիոս Աֆրիկացի

Հուլիոս Աֆրիկացին Որոգինեսին ուղղած մի նամակով զարմանք է հայտնում, որ վերջինս «Երկխոսություն Ագնոմոնի հետ» երկում օգտագործել է Շուշանի պատմությունը՝ առանց անդրադառնալու, որ այն պարականոն է, քանի որ չկա եբրայական կանոնում և պետք է գրված լինի հունարենով:

Պահպանվել է նաև Հուլիոս Աֆրիկացու այս նամակը: Որոգինեսը այդ նամակի պատասխանը գրել է 240 թ., երբ գտնվում էր Ամբրոսիոսի տանը՝ Նիկոմեդիայում:

Որոգինեսը նշում է, որ պետք է եղած լինի նաև Շուշանի պատմության եբրայական տեքստը, քանի որ պահպանված է Թեոդոտիոնի հունարեն թարգմանությունը, և ապա շեշտում, որ Հին Կտակարանի կանոնի սահմանողը Եկեղեցին է, և ո՛չ թե եբրայական տեքստը:

Առ Գրիգոր Սքանչելագործ

Գրել է Գրիգոր Սքանչելագործի ուսման ավարտից քիչ անց՝ 239-243 թթ. միջև: Այս փոքրիկ նամակում նշում է, որ փիլիսոփայության ուսումնասիրությունը նախաուսուցողական բնույթ ունի, Ս. Գրքի ուսումնասիրությունը պետք է լինի հարատև և մշտական:

Նամակը պահպանվել է Ֆիլոկալիայում:

Աստվածաբանական հայացքները

Միացնելով գիտությունը առաքինության հետ, ոգեկանությունը՝ գաղափարների ընկալման կարողության հետ, ուսումնասիրությունը՝ մեթոդի հետ, մի հիմնավոր աստվածաբանական սիստեմի ստեղծման գործում հասել է այնպիսի բարձունքի, որին չի հասել ոչ ոք նրանից առաջ և շատ շատերը՝ նրանից հետո:

Որոգինեսը, փիլիսոփայական հակումներով հանդերձ, իսկական աստվածաբան է: Աստվածաբանության մեջ բնություն, էություն, ենթակայություն, համագո, աստվածամարդ և այլ տերմինների ներմուծումն արդեն բավական է, որպեսզի նա իր արժանի տեղը գրավի: Նրա նպաստը, սակայն, շատ ավելի ընդարձակ է, և նրա մտքի ազդեցությունը աստվածաբանական մտքի զարգացման գործում համարժեք չունի:

Աստված

Աստված նրա աստվածաբանության հիմքն է: Շատերը կարծում են, թե Որոգինեսը փիլիսոփայության աստծուն նույնացնում է Հայտնության Աստծու հետ: Այդ շատերից ոմանք այն համարում են կարևոր քայլ քրիստոնեական մտքի զարգացման մեջ, ուրիշներ այն համարում են քրիստոնեական ուղղափառության խեղաթյուրում: Իրականությունն այն է, սակայն, որ Որոգինեսը ոչ թե նույնացրել է, այլ մեկնել ազգակից տերմիններով, մինչ որոգինեսյան Աստված վավերական քրիստոնեական է:

Աստված, ըստ Որոգինեսի, Մեկ է, որ արտահայտվում է և հայտնվում: Նա պարզ, իմացական բնություն է, որ չի ընդունում ոչ մի հավելում կամ կցում, և Որը հանդիսանում է բոլոր ոգեկան էակների սկիզբը (Սկզբունքների մասին, Ա 1,6): Իբրև պարզ, իմացական բնություն, կարիք չունի մարմնական կամ զգացական տարածության, կամ մարմնական ձևի, որպեսզի կարողանա շարժվել և գործել: Նա անսահման է, անհուն, սակայն այդ չի նշանակում՝ առանց սահմանների, որովհետև այլապես զրկված կլիներ ինքնազգացողությունից: Ամենակարող է, սակայն չի կարող անարդար լինել, այլապես չէր կարող Աստված լինել (Ընդդեմ Կելսոսի, Գ 70): Ամեն ինչ սկսվում է Նրանով և Նրանով վերջանում, քանի որ Նա ամեն ինչի սկիզբն է ու վերջը: Նա անըմբռնելի, անընկալելի է: Մարդու միտքը, չկարողանալով ընկալել Աստծուն, ճանաչում է իր Արարչին Նրա ստեղծագործությունների գեղեցկությամբ:

Երրորդություն

Միակից Երրորդություն անցումը ժամանակի ընկալում չունի: Երրորդությունը հավիտենական իրականություն է և ոչ թե աստվածային տնտեսության կամ փրկչաբանության երևույթ, ինչպես որ ընդունում էին Տերտուղիանոսը և Հիպպոլիտոսը: Երրորդության հարաբերության համար Որոգինեսը օգտագործում է երեք տերմին՝ պլատոնական οὐσία-ն (էություն, բնություն), արիստոտելյան ὑποκρίμενον-ն (ենթատեքստ) և ստոիկյան ὑποστασις-ն (ենթակա), միշտ նույն իմաստով, նրանց յուրահատուկ գոյության իմաստով:

Առաջին տերմինը, սակայն, οὐσία-ն ցույց է տալիս ընդհանուր տարրը, որին մասնակից են երեք ենթակաները, իբրև նույն համագոյի երեք տեսակները (Ընդդեմ հրեաների, 24):

Հայրը՝ ըստ էության Աստվածը, մեծ է մյուսներից: Նա «Հայրն է աստվածության» (Մեկն. Հովհաննու, Բ 3, 20): Լոգոսը «երկրորդ Աստված» է (Մեկն. Հովհաննու, Ե 39): Նա Հայր Աստուծո պատկերն է, հավիտենական ծնունդ, որդի՝ ըստ էության և ոչ թե՝ ըստ որդեգրման (Սկզբունքների մասին, Ա 2,13), սակայն ծնունդ ոչ թե՝ ըստ անհրաժեշտության, այլ՝ ըստ Հոր ցանկության (Անդ., Դ 4): Այս կասկածելի մտածումը արդյունք է գնոստիկների՝ Լոգոսի անհրաժեշտա-

կան առաջացման գաղափարի հակադրության: Հայրը ծնել է Որդուն ո՛չ թե ἐφ ἅναξ - մի անգամ՝ եղած վերջացած, այլ «հավիտենաբար», հետևաբար նա չի առաջացել բաժանումով կամ անջատումով: Ծնվելով հանդերձ՝ միշտ Հոր մեջ է:

Որոգինեսը տարբերություն է դրել «Աստուծո պատկեր» և «ըստ Աստուծո պատկերի» արտահայտությունների միջև: Որդին Աստուծո պատկերն է, իսկ մարդը ստեղծվել է՝ «ըստ Աստուծո պատկերի», այսինքն՝ Աստուծո Լոգոսի պատկերի համաձայն:

Որոգինեսը մերժում է Որդու ենթակայությունը Հոր նկատմամբ, որը մատնանշել են Ս. Գրիգոր Սքանչելագործը և Մեծն Աթանասը:

Հոգին աստվածային դեմք է:

Որոգինեսը շեշտել է Երրորդության երեք դեմքերի ինքնությունը:

Արարչագործություն, Վախճանաբանություն

Արարիչ Աստված միշտ արարչագործել է: Եթե կար մի ժամանակ, երբ չկար արարչագործություն, ուրեմն և չկար արարիչ: Աստված երբեք չի թաքցրել իր ուժը, այն արտահայտել է միշտ արարչագործելով և հայտնվելով, քանի որ, լինելով կատարյալ սեր, միշտ ցանկացել է իր կողքին ունենալ էակներ, որոնց վրա տարածեր իր սերը:

Քանի որ Աստված հավիտենապես արարչագործում է, չի եղել մի ժամանակ, երբ չի եղել աշխարհը (տիեզերքը): Որոգինեսի այս պնդումը չի նշանակում, թե մի կոնկրետ աշխարհ (տիեզերք) հավիտենական է, այլ՝ թե այս աշխարհից առաջ եղել են այլ աշխարհներ, և թե այս աշխարհից հետո էլ պիտի լինեն այլ աշխարհներ: Այդ աշխարհները, սակայն, միմյանցից տարբեր են և փոփոխական: Մարդկային պատմությունն ունի իր նշանակությունը, սակայն մի պարզ դիպված է (էպիզոդ) նախաաշխարհային և հետաշխարհային

զարգացման սխեմայի մեջ: Նախ ստեղծվել է ոգիների՝ բանական և ազատ կամք ունեցող էակների աշխարհը: Սրանք անմահ են, քանի որ ստեղծվել են ի սկզբանե և գոյատևում են Աստուծո հետ: Ապրելով առաջին աշխարհում՝ շարունակում են ապրել նաև հաջորդ աշխարհներում: Այս էակները, ըստ բնության, ո՛չ բարի էին, քանի որ միակ բարին Աստված է, և ո՛չ չար, քանի որ չարիքը անգո է, իսկ նրանց բնորոշ հատկանիշը ազատ կամք ունենալն էր: Տարբերակելով բարիքը և ոչ բարիքը, նախընտրում են երկրորդը, որով և ստեղծվում է զգայական աշխարհը, իսկ նախկին էակները փոխվում են հրեշտակների, սատանաների և հոգիների:

Հետևաբար՝ մեղքը նախաաշխարհային երևույթ է:

Առաջին աշխարհի էակները հեռացան Աստծուց, որով և ընկան մեղքի մեջ: Նրանցից մեկը՝ սատանան, հեռանում է Աստծուց և մերժվում Աստուծո կողմից: Մյուսները, բացի նրանից, որ կազմում է Քրիստոսի հոգին, հետևում են սատանային: Հետևաբար, չենք կարող խոսել Ադամական՝ ժառանգական մեղքի մասին, քանի որ ամեն մի հոգի ունի մեղքը իր մեջ, որովհետև ինքն է մեղանչել աշխարհից առաջ:

Հոգիները, գոյություն ունենալով այս աշխարհից առաջ, մեղանչելով, ստանում են մաշկեղեն պատկեր, որոնց մեջ ամփոփվում են մեղքի հետ միասին, որով և առաջանում են մարդիկ:

Հրեշտակները և աստղերը, որոնք շատ քիչ էին հեռացել Աստծուց, ստանում են ավելի նուրբ, եթերային մարմիններ՝ մնալով Աստուծո ծառայության մեջ:

Իսկ Աստծուց ամենաշատ հեռացողները՝ սատանաները, նույնպես ստանում են մարմիններ, որոնք սակայն տեսանելի չեն իրենց մթության, սևության պատճառով:

Ներկա աշխարհը ստեղծվել է իբրև էակների պատժի մաքրման վայր: Բոլոր էակները պիտի փրկվեն, ոմանք՝ այս, ոմանք՝ հետագա աշխարհներում, և դարձյալ պիտի վերա-

դառնան իրենց նախնական վիճակին: Ապա կհաջորդի Քրիստոսի երկրորդ գալուստը և մարդկանց հարությունը, որոնք ոգեկան մարմիններով կհետևեն Քրիստոսին դեպի երկնային աշխարհ (Սկզբունքների մասին, Ա 6,1. Գ 4, 6. Գ 6,3. Ընդդեմ Կելսոսի, Ը 72):

Այս վերականգնումը չի նշանակի աշխարհի վերջը, որովհետև կծնվի այլ նոր աշխարհ:

Քրիստոս

Մեղքերի մաքրման դյուրության համար աշխարհ եկավ Քրիստոս:

Քրիստոսի հոգին՝ միակ էակը, որ կապված մնաց Աստծուն և չմեղանչեց, կապը դարձավ Լոգոսի և Քրիստոսի մարմնի, որով առաջացավ Աստվածամարդը. Քրիստոսի երկու բնությունները ո՛չ թե պարզապես հարաբերվում են միմյանց հետ, այլ միանում և կազմում են մի ամբողջություն (Ընդդեմ Կելսոսի, Ա 66). Քրիստոսի մարմինը մարմնացման առաջին վայրկյանից իսկ մասնակից, հաղորդակից է դառնում Լոգոսի աստվածությանը և աստվածանում հարությունից հետո:

Քրիստոս խոսքով և գործով ուսուցանում է ճշմարտությունը: Իր մահվամբ փրկագին է տալիս սատանային և զոհ՝ Աստծուն: Փրկության համար, սակայն, կարևոր է ամեն մեկի անձնական՝ մեղքից մաքրվելու պայքարը:

Եկեղեցի

Եկեղեցին քրիստոնյաների հավաքավայրն է, սրբերի ժողովը, Աստուծո հասարակությունը, պետությունը աշխարհի վրա, պետություն պետության մեջ և աշխարհ աշխարհի մեջ: Այն Քրիստոսի միստիկ մարմինն է: Եկեղեցուց դուրս չկա փրկություն. «Extra hanc domum, id est Ecclesiam, nemo salvatur» (Ճառք Հեսու Նավեի, Գ 5): Որովհետև միայն Եկեղեցին է պահպանում հավատի կանոնը:

Սրբագործման համար անհրաժեշտ միջոցներ են **Մկրտության և Զղջման** խորհուրդները:

Ս.Հաղորդությունը Քրիստոսի արյան զոհաբերման խորհուրդն ունի (Ճառք Հեսու Նավեի, Բ 1), իսկ մատուցվող հացը գոհաբանական աղոթքով դառնում է «Մարմին սուրբ... որ սրբացնում է առողջ զգացումներով, ընդունողներին» (Ընդդեմ Կելսոսի, Ը 33), և «Քրիստոսի մարմին» (Ճառք Ելիցի, ԺԳ 3): Փոխաբերաբար հացը Լոգոսն է, որ սնում է հոգուն:

Որոգինեսի տեղը Եկեղեցում

Ո՞րն է Որոգինեսի տեղը Եկեղեցում, կամ ավելի ճիշտ՝ որևէ տեղ ունի՞ Որոգինեսը Եկեղեցում: Այս հարցը տալիս են գրեթե բոլոր ժամանակակից հայրաբանները, որոնց առջև կանգնում է մի հսկա անձնավորություն, առանց որի դժվար է պատկերացնել դավանաբանական Աստվածաբանության և Ս. Գրքի ուսումնասիրության զարգացումը, և որը, սակայն, դատապարտվել է Ե կոչված Տիեզերական Ժողովում (553 թ)՝ Հուստինիանոս կայսեր 543 թ. հրովարտակի համաձայն:

Եկեղեցին մի կողմից սիրել է նրան, մյուս կողմից՝ դատապարտել, մի կողմից ընթերցել է նրան, մյուս կողմից՝ կորստյան մատնել նրա գրական ժառանգությունը:

Որոգինեսի անձի շուրջ խնդիրը սկսվել է դեռ իր կենդանության օրոք և շարունակվել ավելի քան 300 տարի: 231 թ. Ալեքսանդրիայում գումարված երկու ժողով արգելեց նրան դասավանդել (I ժողով) և կարգալույծ հռչակեց (II ժողով), քանի որ քահանա էր ձեռնադրվել այլ եպիսկոպոսական Աթոռի կողմից: Ալեքսանդրիայի այս որոշումները չընդունեցին մյուս եկեղեցիները: Ալեքսանդրիայի Աթոռն էլ չպնդեց իր որոշումների վրա:

Գ դարի վերջին և Դ դարի սկզբին Որոգինեսի դեմ դուրս եկան Պետրոս Ալեքսանդրացին († 311), Մեթոդիոս Օլիմպացին († 310/1) և Եվստաթիոս Անտիոքացին († 337թ. քիչ առաջ): Սրանց դեմ դուրս եկան, ի պաշտպանություն Որոգինեսի, Պամփիլոսը († 309) և Եվսեբիոս Կեսարացին († 339):

Այս հակամարտությունը վերսկսվեց Դ դարի վերջերին, երբ հակաորոգինեսյան շարքերը համալրեցին Դիոդորոս Տարսեցին († 390/4), Թեոդորոս Մոփսուեստացին († 428), Ապոլինարոս Լաոդիկեցին († 390թ. շուրջ), Եպիփան Կիպրացին († 403), Անաստաս Հռոմեացին (399-402), Թեոփիլոս Ալեքսանդրացին (385-412), Անթիպատրոս Բոստրացին († 455-ից հետո) և ուրիշներ:

Այս բուռն հակաորոգինեսյան շարժմանը դիմագրավեցին Եվագր Պոնտացին († 399), Դիդիմոս Կույրը († 398), Ռուֆինոսը († 410), Հովհան Երուսաղեմացին (386-417), Սինեսիոս Պտոլեմայեցին († 413/4), Պալլադիոսը († 431թ. առաջ), Սոկրատ պատմիչը († 439թ. քիչ անց) և ուրիշներ:

Եթե ուշադրություն դարձնենք վերոհիշյալ անուններին, պիտի տեսնենք, որ այն անձինք, որոնք մասնակցել են որոգինեսյան վիճաբանություններին, կարևոր դեր չեն խաղացել Եկեղեցու Ավանդության ձևավորման գործում: Այսպես, օրինակ, հակաորոգինեսականներից Մեթոդիոս Օլիմպացին, Դիոդոր Տարսեցին, Ապոլինարիոսը, Թեոփիլոս Ալեքսանդրացին և Թեոդորոս Մափսուեստացին Եկեղեցու Ավանդության ուղղափառ հետևորդներից չէին, իսկ Պետրոս Ալեքսանդրացին, Եվստաթիոս Անտիոքացին, Եպիփան Կիպրացին, Անաստաս Հռոմեացին և Անթիպատրոս Բոստրացին մեծ աստվածաբաններ չէին:

Գալով որոգինեսյան բանակին՝ նկատում ենք նույն երևույթը: Եկեղեցու ուղղափառ Ավանդությունից շեղված են եղել Եվսեբիոս Կեսարացին, Եվագր Պոնտացին, Դիդիմոսը, Սինեսիոս Պտոլեմայեցին և Սոկրատը, մինչ Պամփիլոսը,

Ռուֆինոսը, Հովհաննես Երուսաղեմացին և Պալլադիոսը աստվածաբանության մեջ իրենց խոսքը չեն ասել:

Կարևոր է այստեղ նշել, որ Եկեղեցու մեծ Հայրերը՝ Եկեղեցու Վարդապետները, այլ դիրք են ունեցել վերոհիշյալ հարցում: Խոսքը Մեծն Աթանասի († 373), Բարսեղ Կեսարացու († 379), Գրիգոր Աստվածաբանի († 390), Գրիգոր Նյուսացու († 394), Հովհան Ոսկեբերանի († 407), Իլարիոնի († 367), Ամբրոսիոսի († 397) և Վիկենտիոսի († 450թ. առաջ) մասին է: Վերոհիշյալ անձինք լայնորեն օգտագործում էին Որոգինեսի երկերը, թեև ծանոթ էին նրա սխալներին:

Աթանասը Որոգինեսի սխալները որակում է իբրև «մեծ ալեքսանդրացու» անձնական կարծիքներ (Նիկիայի մասին, 27,1-2), միաժամանակ օգտագործում նրա աստվածաբանական նվաճումները:

Բարսեղ Կեսարացին և Գրիգոր Աստվածաբանը կազմում են Որոգինեսի երկերի ծաղկաքաղը՝ ֆիլոկալիան՝ մի կողմից ցույց տալով իրենց մեծ սերը Որոգինեսի նկատմանբ, մյուս կողմից ընդգծելով նրա կարևորությունը Եկեղեցում, թեև երկուսն էլ ծանոթ էին նրա սխալներին:

Գրիգոր Նյուսացին ավելի շատ է ազդվել Որոգինեսի աստվածաբանական մտքերից, թեև մերժում է նրա որոշ հայացքները (օրինակ՝ հոգիների նախագոյությունը, «Մարդու կազմության մասին», 28, 29):

Նույն ձևով են վարվել նաև Արևմտյան Եկեղեցու Վարդապետներ Իլարիոնը, Ամբրոսիոսը և Վիկենտիոսը:

Հակառակ այս ամենի, որոգինեսյան պայքարը շարունակվում է Ե-Զ դարերում. արդեն անհատների միջև մղվող բանասիրա-աստվածաբանական պայքարից վերածվում է աստվածաբանական հակադիր հոսանքների պայքարի, որի մեջ են ներքաշվում նաև վանական խմբեր և ժողովրդական ամբոխներ՝ այս կամ այն կողմում, որոնք այդ հարցի հետ էին կապում իրենց ուղղափառ հավատքը և փրկությունը:

543 թ. Հուստինիանոս կայսրը հրովարտակով դատապարտում է Որոգինեսին և նրա ուսմունքը: Այս հրովարտակի հիման վրա էլ Որոգինեսը և նրա ուսմունքը դատապարտվում են 553թ. Ե կոչված Տիեզերական Ժողովում և ապա՝ կրկին անգամ, Զ կոչված Տիեզերական Ժողովում (680):

Այս դատապարտություններից հետո, անշուշտ, նվազում է մեծ ուսուցչի հեղինակությունը, և նրա շատ երկեր մատնվում են կորստյան, սակայն Որոգինեսը չի մոռացվում, շատերն են ընթերցում ու օգտագործում նրա երկերը՝ համարելով դրանք ընդունելի կամ անվնաս:

Եզնիկ արքեպս. Պետրոսյան

ԱՂՈԹՔԻ ՄԱՍԻՆ

Մարդը ոչինչ չի կարող անել առանց Աստծու օգնության

1. Կան իրողություններ, որոնք վեր են մեր իմացությունից. դրանք չափազանց մեծ են և անըմբռնելի մեր մտքի տկարության և սահմանափակության պատճառով: Միայն Աստծու բազմազան և միաժամանակ անսահմանափակ շնորհը, որը, ըստ նրա ծրագրի, գալիս հասնում է մեզ Քրիստոսի միջնորդությամբ և Սուրբ Հոգու ներգործությամբ, թույլ է տալիս մեզ դրանք ըմբռնել:

Հիրավի, մարդու համար անհնար է հասնել այն իմաստությանը, որն ստեղծել է ամեն ինչ, (որովհետև, ըստ Դավթի, Աստված ամեն բան ստեղծել է իմաստությամբ (Սաղմ. 104:24): Անկարելին կարելի է դառնում մեր Տեր Հիսուս Քրիստոսով, «որը մեզ համար եղավ Աստծուց եկած իմաստություն, արդարություն, սրբություն և փրկություն» (Ա Կորնթ., 1:30):

Արդարև, ո՞ր մարդը կարող է իմանալ Աստծու ծրագիրը:
Ո՞վ կարող է խելամուտ լինել, թե ի՛նչ է կամենում Տերը:
Մարդկանց մտածումներն անստույգ են, իսկ ծրագրերն՝ անհաստատ:
Եղծանելի մարմինը ծանրացնում է հոգին,
Իսկ հողեղեն այս վրանը ծանրացնում միտքը բազում հոգսերով:
Դժվարությամբ ենք հասկանում, ինչ որ տեղի է ունենում երկրի վրա,
Իսկ ո՞վ կարող է քննել այն, ինչ գտնվում է երկնքում: (Իմաստ., 9:13 -16):

Ո՞վ կկարողանա ժխտել, որ մարդու համար անհնար է գննել երկինքը: Բայց անկարելին կարելի է դառնում Աստծու անչափելի շնորհով: Նա, ով հափշտակվեց մինչև երրորդ երկինք, անկասկած հետազոտեց երկնային այդ երեք ոլորտները, քանի որ նա լսեց այնպիսի «անպատում խոսքեր, որ մարդուն արտոնված չէ դրանք կրկնել (Բ Կորնթ., 12:4):

Ո՞վ կհամարձակվի ասել, թե մարդը կարող է թափանցել Աստծու ծրագրերի մեջ: Եվ սակայն Աստված այդ կարողությունը մեզ շնորհում է Քրիստոսով... (բացթողում) Տիրոջ կամքով: Փրկիչը չի կամենում միայն մարդկանց ուսուցիչը լինել, այլ նաև դառնալ բարեկամը նրանց, որոնց Տերն էր նախապես: Նկատի ունենանք, որ «ոչ ոք չգիտե, թե ի՛նչ կա մարդու մեջ, եթե ոչ՝ մարդու հոգին, որ նրա մեջ է: Նույնպես ոչ ոք չգիտե, թե ի՛նչ կա Աստծու մեջ, եթե ոչ՝ Աստծու Հոգին (Ա Կորնթ., 2:11):

Ուրեմն, եթե ոչ ոք չգիտե Աստծուն բացի Աստծու Հոգուց, ապա մարդու համար անհնար է գիտենալ, թե ի՛նչ են Աստծու խորհուրդները: Մտածի՛ր, թե դա ինչպե՛ս կարող է դառնալ իրագործելի: «Ինչ վերաբերում է մեզ, - ասում է Առաքյալը, - մենք ոչ թե այս աշխարհի հոգին առանք, այլ այն Հոգին, որ գալիս է Աստծուց, որպեսզի ճանաչենք այն շնորհները, որ Աստված տվեց մեզ: Եվ մենք այդ մասին խոսում ենք մի լեզվով, որ մարդկային իմացությունից չէ, այլ մեզ ուսուցված է Հոգուց» (Ա Կորնթ., 2:13):

Ինչպե՞ս աղոթել և ի՞նչ խնդրել

2. Ո՛վ բարեպաշտ և կորովամիտ Ամբրոսիոս, և դու, ո՛վ քաջարի և անվեհեր Տատիանա[1], որ Սառայի նման արդեն բոլորել ես մայրության տարիքդ, միգուցե ինքներդ հարցնեք ձեզ, թե ինչո՛ւ, առաջադրելով ձեզ հետ խոսել աղոթքի մասին, այս ներածականում սկսում եմ հիշեցնել ձեզ, որ այն, ինչ անկարելի է մարդուս համար, դառնում է կարելի Աստծու շնորհով:

Ինձ թվում է, որ մեր տկար անձի համար անկարելի համարվող առաջադրանքներից մեկն է բանիմացությամբ խոսել և հստակորեն ցույց տալ, թե ինչո՛ւ և ինչպե՛ս պետք է աղոթել, թե աղոթքի մեջ ինչ է հարմար ասել Աստծուն, և որո՛նք են նպաստավոր պայմաններն աղոթքի համար (բացթողում):

Առաքյալն ինքը, վախենալով, որ իր հայտնությունների մեծությունը կարող է ավելի բարձր համարում առաջ բերել իր մասին, քան ինչ որ տեսնում են իր մեջ կամ լսում իրենից, չէր վարանում հայտարարել, որ ինքը չգիտեր, թե ինչպե՛ս պետք է աղոթել (Բ. Կորնթ., 12:6): «Մենք աղոթում ենք, - ասում է նա - և չգիտենք, թե ինչպե՛ս արժան է աղոթել» (Հռոմ., 8:26): Արդարև, բավական չէ աղոթելը, պետք է աղոթենք «ինչպես արժան է աղոթել», և խնդրենք, ինչ որ պետք է մեզ: Գիտենալով հանդերձ, թե ի՛նչ պետք է խնդրենք, միշտ մեզ պակասում է էական մի տարր, այլապես մենք չենք աղոթում ինչպես պետք է:

Ավետարանը մեզ սովորեցնում է, թե ի՛նչ պետք է խնդրել

Խնդրել, ինչ որ պետք է, և խնդրել, ինչպես պետք է. այս երկու կետերից առաջինը վերաբերում է աղոթքին որպես այդպիսին, իսկ երկրորդը՝ աղոթքի տրամադրությանը: Ա-հա, օրինակ, թե ի՛նչ է պետք խնդրել. «Խնդրեցեք էակա՛ն բաները, և երկրորդականները ավելի՛ով կտրվեն ձեզ[2] (Մատթ., 6:33):

«Խնդրեցե՛ք երկնային բաները, և դուք կստանաք նաև երկրային բաները: Աղոթեցե՛ք նրանց համար, որ զրպարտում են ձեզ» (Մատթ., 5:44): «Խնդրեցե՛ք հնձի տիրոջը, որ մշակներ ուղարկի իր հնձի համար» (Մատթ., 9:38): Աղոթեցե՛ք, որ փորձության մեջ չընկնեք» (Ղուկ., 22:40): Եվ՝ «Աղոթեցեք, որ ձեր փախուստը չլինի ձմռանը կամ շաբաթ օրը» (Մատթ., 24:20): «Աղոթելիս նույն բանը հաճախակի մի՛ կրկնեք» (Մատթ., 6:7): Եվ այսպես շարունակ:

Սուրբ գիրքը մեզ սովորեցնում է նաև, թե ինչպե՛ս պետք է աղոթել

Այժմ տեսնենք, թե ինչպե՛ս պետք է աղոթել. «Ուզում եմ, որ տղամարդիկ աղոթեն ամեն տեղ և սուրբ ձեռքեր բարձրացնեն դեպի երկինք առանց բարկության և վեճի: Ուզում եմ նաև, որ կանայք պատշաճ պահված ունենան, զարդարվեն ակնածությամբ և պարկեշտությամբ, չկրեն ո՛չ ոսկյա հյուսքեր, ո՛չ մարգարիտ, ո՛չ շքեղ զգեստներ, այլ, ինչպես վայել է աստվածապաշտությունը հանձն առած կանանց, զարդարվեն բարի գործերով» (Ա Տիմ., 2:8-10):

Մի այլ հատված մեզ սովորեցնում է, թե ինչպե՛ս պետք է աղոթել. «Եթե խորանի առջև քո ընծան մատուցելու լինես և այնտեղ հիշես, որ քո եղբայրը քո դեմ մի ոխ ունի, քո ընծան թո՛ղ խորանի առջև և գնա՛ նախ հաշտվիր քո եղբոր հետ և ապա կվերադառնաս մատուցելու քո ընծան» (Մատթ., 5:23): Արդարև, բանական մի էակ կարո՞ղ է Տիրոջը մատուցել ավելի թանկարժեք մի ընծա, քան հաճոյական այն աղոթքը, որ բարձրանում է մաքուր սրտից՝ զերծ ամեն հանցանքից:

Ահա մի հատված ևս աղոթելու ձևի մասին. «Մի՛ զրկեք միմյանց, այլ փոխադարձաբար համաձայնության եկեք միառժամանակ, որ աղոթքի նվիրվեք. ապա վերադարձեք ձեր համատեղ կյանքին, որպեսզի Սատանան, առիթից օգտվելով, ձեզ փորձության չմատնի ձեր անժուժկալության պատճառով» (Ա Կորնթ., 7:5): Անկարելի է աղոթել, ինչպես որ պետք է, եթե ամուսնության գործը (մի խորհուրդ, որի շուրջ պատշաճ է լռել) չի կատարվել հարգանքով, ոչ հաճախ և առանց կրքի. որովհետև փոխադարձ համաձայնությունը, որի մասին խոսվեց այստեղ, բացառում է անկարգությունը, վերացնում անժուժկալությունը և արգելում, որ Սատանան հաղթանակ տանի մեր անկումների վրա[3]:

Խոսենք միշտ աղոթելու ձևի մասին. «Եվ երբ դուք աղոթքի կանգնեք, թե մեկի դեմ մի բան ունեք, ներեցե՛ք» (Մարկ., 11:25): Ահա սուրբ Պողոս Առաքյալի խոսքը. «Ամեն տղամարդ, որ աղոթում կամ մարգարեանում է՝ գլուխը ծածկած, անպատվում է իր տիրոջը, և ամեն կին, որ աղոթում կամ մարգարեանում է գլխաբաց, անպատվում է իր տիրոջը» (Ա Կորնթ., 11:4-5):

Սուրբ Հոգին օգնություն է գալիս մեր տկար անձին

Պողոս առաքյալը գիտեր այս բոլորը: Նա կարող էր քաղել ուրիշ շատ կանոններ Օրենքից, մարգարեներից և ավետարաններից, որոնք լի են այս կանոններով, և առատորեն զարգացնել դրանք ճշգրտումներով: Բայց ոչ միայն համեստությունը, այլ նաև ազնվությունը նրան մղում են ընդունելու, որ ինքը որքան հեռու է դեռ գիտենալուց, թե ի՛նչ պետք է խնդրել և ինչպե՛ս պետք է խնդրել: «Մենք աղոթում ենք և աղոթքի մեջ չգիտենք ոչինչ խնդրել այնպես, ինչպես արժան է խնդրել» (Հռոմ., 8:26):

Նույն հատվածում նա մեզ սովորեցնում է, թե ինչպե՛ս

պետք է լրացնել այն կարևոր պակասը, որ առաջ է գալիս մեր տգիտությունից: Որպեսզի այդ թերությունը դարմանենք, «Սուրբ Հոգին աղոթում է մեր մեջ անպատում հառաչանքներով: Բայց նա, ով խորաքննում է սրտերը, ծանոթ է Հոգու ձգտումներին. գիտե, որ նա ըստ Աստծու կամքի է բարեխոսում ի նպաստ սրբերի» (Հռոմ., 8:26-27): Սուրբ Հոգին, որ երանելիների սրտում աղաղակում է՝ Աբբա, Հայր, կատարելապես գիտե, որ այս անցողիկ կյանքի ընթացքում մեղքի մեջ ընկածների հառաչանքներն ավելի շուտ հավելյալ տրտմություն են, քան սփոփանք: Ահա թե ինչու նա բարեխոսում է Աստծուն անպատում հառաչանքներով և իր գթության ու բարեհոգության մեջ իր վրա վերցնում մեր սեփական հառաչանքները:

Նրա իմաստությունը տեսնում է, որ մեր հոգին քարշ է տրված փոշու մեջ, բանտարկյալն է նվաստացած մի մարմնի, և Սուրբ Հոգին մեզ համար բարեխոսում է Աստծուն ոչ թե մեր հառաչանքների նման հառաչանքներով, այլ «այնպիսի անպատմելի հառաչանքներով, որ մարդուն տրված չէ դրանք կրկնել» (Բ Կորնթ., 12):

4. Սուրբ Հոգին, չբավարարվելով Աստծուն բարեխոսելուց, կրկնապատկում է իր թախանձանքները, և նրա թախանձանքները դառնում են ավելի ստիպողական: Կարծում եմ, որ նա հաղթանակի է առաջնորդում նրանց, ովքեր Պողոս առաքյալի նման կարող են ասել. «Այս բոլոր փորձություններից դուրս ենք գալիս փայլուն հաղթանակով» (Հռոմ., 8:37): Հավանական է, որ նա բարեխոսում է նրանց համար, ովքեր սահմանափակվում են հաղթանակով, առանց վնասելու իրենց հաղթանակին որևէ պարտությամբ, բայց նաև՝ առանց ավելի առաջ գնալու:

Սուրբ Հոգին անհրաժեշտ է աղոթքի համար

Աղոթքին վերաբերող այն հատվածին, թե՝ «Մենք չգիտենք աղոթել այնպես, ինչպես պետք է աղոթել, բայց Սուրբ Հոգին բարեխոսում է Աստծուն անպատում հառաչանքներով», արձագանքում է մի ուրիշ հատված. «Պիտի աղոթեմ Հոգով, բայց պիտի աղոթեմ նաև մտքով» (Ա Կորնթ., 14:15): Արդարև, մեր միտքը կարող է աղոթել միայն այն դեպքում, եթե նրան նախորդում է Սուրբ Հոգին, և եթե նա արձագանքում է Սուրբ Հոգուն: Նա կարող է չափով, ներդաշնակությամբ գովերգել, գովաբանել Հորը ի Հիսուս Քրիստոս այն դեպքում միայն, եթե միտքը, «որ քննում է ամեն ինչ մինչև աստվածային խորությունները», առաջինն ինքը չգովերգի ու չգովաբանի նրան, ում խորությունները քննել և դրանք սահմանագծել է իր կարողության համաձայն:

Կարծում եմ, որ Քրիստոսի աշակերտներից մեկը, գիտակցելով մարդկային տկարությունը, անկարող աղոթելու ինչպես պետք է, և բավարար չափով համոզված լինելով դրանում, լսելով Փրկչի՝ իր Հորն ուղղած աղոթքը բարձրագույն իմացության խոսքերով, հավանաբար երբ նա վերջացրել է իր աղոթքը, խնդրել է նրան՝ ասելով. «Տե՛ր, սովորեցրո՛ւ մեզ աղոթել, ինչպես Հովհաննեսը սովորեցրեց իր աշակերտներին» (Ղուկ., 11:1): Ավելի լավ է մեջբերել ամբողջ հատվածը. «Մի օր, ինչ-որ տեղ, Հիսուս աղոթքի էր կանգնած: Երբ նա վերջացրեց, նրա աշակերտներից մեկն ասաց նրան. "Տե՛ր, սովորեցրո՛ւ մեզ աղոթել, ինչպես Հովհաննեսը սովորեցրեց իր աշակերտներին. . . "»:

Նույնիսկ Քրիստոսից առաջ մարդիկ աղոթել են Սուրբ Հոգու ներշնչանքով

Մի մարդ, որ սնվել է Օրենքի պատվիրաններով, ջանասիրությամբ մշտապես լսել է մարգարեների խոսքը և հաճախել ժողովարան, կարո՞ղ էր աղոթել չիմանալ Տիրոջ աղոթելը տեսնելուց առաջ մի գեղեցիկ օր: Դա անհավանական է: Նա հավանաբար աղոթում էր հրեաների նման, բայց գիտակցում էր, որ աղոթքի մասին պետք է ունենար ավելի խորը ծանոթություն:

Ի՞նչ էին այդ մասին Հովհաննեսի ուսուցումներն իր աշակերտներին, որոնք Երուսաղեմից, ամբողջ Հրեաստանից և հարևան շրջաններից վազում էին մկրտվելու նրանից: Հավանական է, որ Հովհաննեսը, «որ ավելին էր, քան մի մարգարե», աղոթքի մասին ուներ փորձառություն, որ չէր հաղորդում բոլոր մկրտվածներին, այլ՝ միայն նրանց, որոնց գաղտնի սովորեցնում էր ի հավելումն մկրտության:

Մենք այդպիսի աղոթքների օրինակներ ունենք, որոնք ճշմարտապես ոգեղեն են, քանի որ Սուրբ Հոգին աղոթում է սրբերի սրտում, աղոթքներ, որ հարուստ են անպատմելի և հրաշալի ուսուցումներով: Այդպիսին է մասամբ Աննայի աղոթքը Թագավորաց առաջին գրքում. «...քանի որ նա [Աննան] հաճախակի կրկնում էր իր աղոթքները Տիրոջ ներկայությամբ, խոսում նրա հետ սրտի խորքից, առանց դիմելու որևէ գրվածքի»: 17-րդ Սաղմոսը վերնագրված է «Դավթի աղոթքը», իսկ 90-րդ Սաղմոսը՝ «Աստծու մարդու՝ Մովսեսի աղոթքը, երբ նա թախծության մեջ զեղուն սրտով արտահայտում է իր ողբը Տիրոջ առաջ»:

Սուրբ Հոգու կողմից ներշնչված և արված այս բոլոր աղոթքները լեցուն են աստվածային իմաստությամբ, այնպես որ կարող ենք ասել, թե դրանք խորհուրդներ են պարունակում. «Ով իմաստուն է, թող հասկանա այս բաները, ով խելացի է, թող իմանա սրանք» (Օսեե, 14:10):

Որոգինեսն աղոթում է, որ Աստված օգնի իրեն

Քանի որ շատ դժվար է խոսել աղոթքի մասին, նման մի մեծ նյութ հասկանալու և ըստ արժանվույն մեկնաբանելու համար մեզ հարկավոր է Հայր Աստծու լույսը, նրա Միածին Որդու՝ Բանի ուսուցումը և Սուրբ Հոգու օգնությունը: Պիտի աղոթեմ որպես մարդ (որովհետև ես ինձ անկարող եմ զգում սահմանելու աղոթքը) և աղոթքի մասին ճառախոսելուց առաջ պիտի աղաչեմ Սուրբ Հոգուն, որպեսզի նա հոգևոր կատարյալ ճանաչողություն շնորհի ինձ և բացատրի ավետարաններում ավանդված աղոթքների իմաստը: Այժմ մտնենք բուն նյութի մեջ:

Ի. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ԱՂՈԹՔԻ[4]

Աղոթք բառը Աստվածաշնչում

3. Եթե չեմ սխալվում, աղոթք բառը Աստվածաշնչում առաջին անգամ հանդիպում է այն ժամանակ, երբ Հակոբը, խույս տալով իր եղբոր՝ Եսավի բարկությունից, գնաց Միջագետք՝ ըստ Իսահակի և Ռեբեկայի: Ահավասիկ այդ հատվածը. «Հակոբն աղոթք անելով՝ ասաց. "Եթե Տեր Աստվածն ինձ հետ լինի և ինձ պահպանի այն ճանապարհորդության ընթացքում, որ հիմա կատարում եմ, եթե ինձ հաց տա ուտելու և հագուստ՝ հագնելու, և եթե ես ողջ առողջ վերադառնամ իմ հոր տունը, ապա Տերը կլինի իմ Աստվածը, իսկ այն քարը, որ ես կանգնեցրել եմ իբրև կոթող, կլինի ինձ համար Աստծու տուն: Այն ամենից, Տե՛ր, ինչ կտաս ինձ, քեզ համար տասանորդ կհանեմ"» (Ծնն., 28:20-22):

Այստեղ պետք է նշել, որ աղոթք բառը (որ շատ տեղերում տարբեր իմաստ ունի) լսվում է մեկից, որը մի ուխտ է անում, խոստանում է մի բան անել, եթե Աստծուց ստանա այս կամ այն բարիքը: Նույն բառը իր սովորական իմաստով գործածվել է, օրինակ, Ելից գրքում տասը հարվածներից երկրորդի՝ գորտերի հարվածից հետո. «Փարավոնը կանչեց Մովսեսին ու Ահարոնին և ասաց. "Աղոթեցե՛ք ինձ համար Տիրոջը, որպեսզի նա գորտերը հեռացնի ինձնից ու իմ ժողովրդից, և ես կարձակեմ ձեր ժողովրդին, որ նրանք գնան զոհ մատուցեն Տիրոջը"» (Ելք., 8:4):

Եթե մեկը դժվարանա հավատալ, որ փարավոնի կողմից գործածված աղոթեցե՛ք բառը ուխտ բառից զատ կարող է աղոթք բառի իմաստ ունենալ, թող կարդա շարունակությունը. «Մովսեսն ասաց փարավոնին. "Ասա՛ ինձ, ե՞րբ պետք է աղոթեմ քեզ համար, քո ծառաների և քո ժողովրդի համար, որպեսզի գորտերը վերանան քո մոտից և քո տներից այնպես, որ դրանք մնան միայն Նեղոս գետում"» (Ելք, 8:5):

Նկատի ունենանք, որ մժեղների համար, որոնք երրորդ հարվածն են կազմում, փարավոնը չի խնդրում աղոթել, և Մովսեսը չի աղոթում: Բայց չորրորդ հարվածի՝ շնաճանճերի ժամանակ, փարավոնն ասում է. «Աղոթեցե՛ք ինձ համար Տիրոջը»: Եվ Մովսեսը նրան պատասխանում է. «Ես կհեռանամ ու կաղոթեմ Աստծուն, և շնաճանճերը վաղն իսկ կհեռանան փարավոնի, նրա ծառաների ու ժողովրդի վրայից»: Եվ մի բոպե անց՝ «Մովսեսը Փարավոնի մոտից դուրս ելավ և գնաց աղոթելու» (Ելք, 8:28-29,30):

Հինգերորդ և վեցերորդ հարվածի ժամանակ փարավոնը աղոթք չի խնդրում, և Մովսեսն էլ չի աղոթում: Բայց յոթներորդ հարվածի ժամանակ «Փարավոնը, մարդ ուղարկելով, կանչեց Մովսեսին ու Ահարոնին և ասաց նրանց. «Այս անգամ էլ մեղք գործեցի. Տերը արդար է. ես և իմ ժողովուրդը ամբարիշտներ ենք. աղոթեցե՛ք Տիրոջը, որ դադարեցնի որոտը, կարկուտն ու կայծակը» (Ելք, 9:27-28):

Մի տող ներքևում՝ «Մովսեսը փարավոնի մոտից ելավ ու գնաց քաղաքից դուրս, ձեռքերը բարձրացրեց դեպի Տերը, և որոտը դադարեց» (Ելք, 9:33): Քիչ հետո մենք կտեսնենք, թե ինչո՛ւ, ինչպես վերևում, չի ասվել՝ «նա աղոթեց», այլ՝ «նա ձեռքերը բարձրացրեց դեպի Տերը»: Ութերորդ հարվածի ժամանակ փարավոնն ասում է. «Աղոթեցե՛ք ձեր Աստծուն, որ հեռացնի ինձանից այս աղետը: Մովսեսը դուրս ելավ փարավոնի մոտից և աղոթեց Տիրոջը» (Ելք, 10:17-18):

Աղոթք բառը՝ ուխտ բառի իմաստով

Շատ տեղերում մենք տեսանք, որ աղոթք բառը չուներ իր սովորական իմաստը, այլ նշանակում էր ուխտ, ինչպես Հակոբի պարագայում: Ղևտականում նույնպես գրված է. «Տերը խոսեց Մովսեսի հետ՝ ասելով. “Խոսի՛ր Իսրայելի որդիների հետ և կասես նրանց. երբ մի մարդ ուխտ անի և հոգեպես պարտավորվի Տիրոջ առաջ, եթե նա քսան տարեկանից մինչև վաթսուն տարեկան է, թող տա հիսուն սիկղ արծաթ՝ ըստ սրբարանում գտնվող կշեռքի չափի”» (Ղևտ., 27:1-3):*

Թվոց գրքում կարդում ենք. «Տերը խոսեց Մովսեսի հետ՝ ասելով. “Խոսի՛ր Իսրայելի որդիների հետ և կասես նրանց. այն տղամարդը կամ կինը, որ հանդիսավոր կերպով ուխտ է արել սուրբ կյանքով ապրելու և Տիրոջը նվիրվելու համար, պետք է հրաժարվի գինուց և ամեն տեսակ ոգելից խմիչքներից”» ու այն ամենից, որ շարունակվում է նազիրատի մեջ: Մի քիչ ավելի հեռու՝ «... և պիտի սրբացնի իր գլուխն այն օրը, երբ իր ուխտը սրբացված կլինի Տիրոջ առաջ» (Թվեր, 6:3): Մի քիչ ներքևում. «Այս է ուխտին վերաբերող օրենքը՝ ո՛ր օրը որ նա կատարած կլինի այն» (Թվեր, 6:13): Եվ մի քիչ ավելի հեռու՝ «Դրանից հետո նազիրացին (ուխտյալը) կարող է գինի խմել: Ահա այս է այն մարդու վերաբերյալ օրենքը, որը ուխտ է արել և Տիրոջը ընծա է մատուցել՝ կատարելու համար իր ուխտը, բացի այն ողջակեզներից, որ նա կարող է կատարել կամովին: Այն ամենը, ինչ նա կկամենա մատուցել ի սրտե, թող կատարի ըստ սրբության օրենքի» (Թվեր, 6:20-21):*

Թվոց գրքի վերջում ասվում է. «Մովսեսը Իսրայելի ցեղերի առաջնորդների հետ խոսեց՝ ասելով. “Ահա թե ինչ է հրամայել Տերը. երբ մի տղամարդ Տիրոջը ուխտ է անում կամ երդումով պարտավորվում է անել մի բան, թող չդրժի իր խոսքը, թող կատարի այն ամենը, ինչ դուրս է եկել իր բերանից: Եվ եթե մի կին ուխտ է արել Տիրոջը և երդումով կապվել է դրան դեռևս իր հոր տանը եղած ժամանակ, երիտասարդ հասակում, և եթե իր հայրը, գիտենալով այդ ուխտը և այն պարտավորությունը, որ նա հանձն է առել, լռություն պահի, ապա այդ կնոջ ուխտը և այն ամբողջ պարտավորությունը, որով նա կապված է եղել այդ ուխտին, մնում են ուժի մեջ”» (Թվեր, 30:2-5): Ապա հետևում են այն հրահանգները, որ վերաբերում են այդ կնոջը:

Առակաց գրքում աղոթք բառը գործածված է նույն իմաստով.

«Որոգայթ է մարդու համար «ուխտ եմ անում» աղաղակելը և ուխտից հետո դրա համար զղջալը» (Առակ., 20:25):

Նաև Ժողովողում. . «Ավելի լավ է ուխտ չանել, քան թե ուխտ անել և չկատարել այն» (Ժող., 5:4): Եվ վերջապես Գործք առաքելոցում. «Մեր մեջ կան չորս մարդիկ, որոնք հանձն են առել ուխտ անել» (Գործք, 21:23):

Աղաչանքին հոմանիշ աղոթք բառը նույնպես ունի այս երկու իմաստները

*4. Պատշաճ թվաց ինձ զատորոշել այն երկու նշանակությունները, որ Սուրբ Գիրքը տալիս է աղոթք (*euchè*) բառին: Նույն զատորոշումը կարելի է անել նաև մյուս՝ աղաչանք* (proseuchè) *բառի կապակցությամբ, որն իր սովորական աղոթք առումից բացի, կարող է ունենալ նաև ուխտի իմաստ: Այսպես, Թագավորաց առաջին գրքում կարդում ենք. «Հեղի քահանան նստել էր մի աթոռի վրա, Տիրոջ տաճարի դռան սեմի դիմաց: Աննան դառնացած հոգով աղոթեց Տիրոջը և առատ արտասուք թափեց: Ապա ուխտ*

արեց և ասաց. “Զորությունների՛ Տեր, եթե կամենաս նայել քո աղախնի վշտին, եթե հիշես ինձ ու մոռացության չմատնես քո աղախնին, եթե արու մի զավակ պարգևես քո աղախնին, ես նրան կնվիրեմ Տիրոջը քո կյանքի բոլոր օրերի համար, և նրա գլխին բնավ ածելի չի դիպչի”» (Ա Թագ. 1:9-11):

Այստեղ, խոստովանում եմ, հենվելով «աղոթեց Տիրոջը» և «ուխտ արեց» բառերի վրա՝ հաստատ կարող ենք ասել, որ եթե նա արեց թե՛ մեկը, թե՛ մյուսը, այսինքն՝ աղոթք և ուխտ, ապա «աղոթեց» բառը կարող է ընկալվել այն իմաստով, որ մենք սովորաբար տալիս ենք նրան, իսկ «ուխտ արեց» բառերը կարող են ունենալ նույն նշանակությունը, ինչ որ Ղևտական և Թվոց գրքերում: Արդարև, «ես նրան կնվիրեմ Տիրոջը իր կյանքի բոլոր օրերի համար, և նրա մազերին բնավ ածելի չի դիպչի» խոսքը, բառիս իսկական առումով, աղոթք չէ, այլ՝ ուխտ Հեփթայեի արած ուխտի նման, այն մարդու, որի մասին խոսում է Սուրբ Գիրքը. «Հեփթայեն ուխտ արեց Աստծուն՝ ասելով. “Եթե ուզում ես ամոնացիներին իմ ձեռքը մատնել, երբ ես հաղթական վերադառնամ նրանց մոտից, ապա իմ տան դռնից ինձ ընդառաջ դուրս եկող առաջին մարդուն ողջակեզ կմատուցեմ Տիրոջը”» (Դատ. 11:30 -31):

1. Առարկություններ աղոթքի դեմ և դժվարությունների լուծում

5. Այժմ ես ուզում եմ, ինչպես խնդրել էիք ինձ, աչքի անցկացնել այն մարդկանց փաստարկումները, որոնք պնդում են, թե աղոթքը ազդեցիկ չէ և հետևաբար անօգուտ, ապա կաշխատեմ պատասխանել դրանց: Նկատի ունեցեք, որ այսուհետև աղոթք բառը կգործածեմ իր ամենապարզ և ամենասովորական առումով. . . (բացթողում):

Այս կարծիքը[5] քչերն են պաշտպանում: Նրա պաշտպանները գրեթե գոյություն չունեն, որովհետև այն մարդկանց մեջ, որոնք ընդունում են, որ կա մի նախախնամություն և տիեզերքը ղեկավարող մի Աստված, հազիվ թե կարող ենք գտնել մեկին, որ մերժի աղոթքը: Այդպիսի կարծիքը հարմար է միայն նրանց, ովքեր ամբողջովին անաստված են, ուրանում են Աստծու գոյությունը կամ տալիս են նրա անունը առանց ընդունելու նրա նախախնամությունը: Միայն սատանայական զորությունը, հավակնելով Քրիստոսի անվան և Աստծու Որդու ուսուցումներին հակադրել ամբարիշտ վարդապետություններ, կարող է համոզել մի քանի մարդկանց, թե աղոթքն անօգուտ է: Այս կարծիքին պաշտպան կանգնած մարդիկ[6] բացարձակապես մերժում են զգայականը, չեն մոտենում ո՛չ մկրտությանը և ո՛չ էլ հաղորդությանը, խեղաթյուրում էին Սուրբ Գրքերը՝ պնդելով, թե դրանք աղոթք բառը չեն ընդունում իր սովորական իմաստով, այլ դրան տալիս են բոլորովին տարբեր իմաստ:

Առաջին առարկություն.

Աստծու կանխագիտությունը[7]

Ահա այն մարդկանց փաստարկումները, որոնք մերժում են աղոթքը՝ ընդունելով հանդերձ Աստծուն, որպես տիեզերքի Տիրոջը, ընդունելով նաև նրա նախախնամությունը (առայժմ զանց ենք առնում հերքել այն մարդկանց, ովքեր ուրանում են թե՛ Աստծուն և թե՛ նրա նախախնամությունը). «Աստված, - ասում են նրանք, - գիտե ամեն բան նախքան դրանց գոյություն ունենալը. տեղի ունեցող բաներից չկա ոչինչ, որ դուրս լինի նրա գիտությունից առանց նա-

խապես հայտնի լինելու նրան: Ուրեմն ի՛նչ միտք ունի աղոթքներ ուղղել նրան, ով նախքան մեր աղերսանքը գիտե, թե ի՛նչ բանի մենք կարիք ունենք. «որովհետև ձեր Հայրը գիտե, թե ի՛նչ է ձեզ պետք, նախքան որ դուք նրանից մի բան խնդրեք» (Մատթ. 6-8):

Արդար է, որ Հայրը և տիեզերքի ստեղծողը, որ սիրում է գոյություն ունեցող ամեն բան և իր ստեղծած բաներից ոչինչ չի ատում, մեզնից յուրաքանչյուրին տա այն, ինչին մենք կարիք ունենք՝ առանց սպասելու մեր աղոթքին, ինչպես մի հայր, որ հսկում է իր երեխաների վրա՝ առանց սպասելու նրանց խնդրանքներին, նրանք լինեն կա՛մ չափազանց փոքր՝ խնդրել կարողանալու համար, կա՛մ էլ նրանց անփորձությունը թելադրի իրենց խնդրել բաներ, որ անօգուտ են կամ վնասակար: Արդ, մենք շատ ավելի հեռու ենք Աստծուց, քան երեխաներն իրենց հոր սրտից:

Երկրորդ առարկություն.

նախասահմանվածությունը անօգուտ է դարձնում աղոթքը

Պետք է հավատանք, որ Աստված ոչ միայն գիտե ապագան, այլև տնօրինում է այն, և որ ոչինչ չի պատահում, որ նախապես տնօրինված չլինի նրա կողմից: Ով Աստծուց խնդրում է, որ ծագեցնի արևը, հիմարի տեղ կդրվի նրա համար, որ իր աղոթքով նա ուզում է ձեռք բերել մի բան, որ առանց իր աղոթքի էլ տեղի կունենա:

Նմանապես հիմարություն կլիներ աղոթքին վերագրել մի բան, որ առանց այդ աղոթքի էլ տեղի կունենար: Հիմարության ծայրագույն սահմաններն անցնել չէ՞ր նշանակի հավակնել, որ աղոթքով կարելի է արեգակն իր ամառային

փոփոխման շրջանից ետ տանել դեպի գարնանային շրջանը՝ ազատվելու համար հեղձուցիչ անտանելի շոգից և ձեռք բերելու ավելի մեղմ ու հաճելի մի ջերմություն: Երևակայել, թե աղոթքով կարող ենք խուսափել մեր մարդկային վիճակի բոլոր տհաճություններից, չի՞ նշանակում արդյոք խելագարության գագաթնակետին հասնել:

Երրորդ առարկություն.

Դետերմինիզմը մոր որովայնից

Եթե մեղավորները խոտորվել են «սկսած իրենց մոր որովայնից», եթե արդարն ընտրվել է Աստծուց «սկսած իր մոր որովայնից» (Գաղ. 1:15), ապա թե՛ մեկը և թե՛ մյուսը աշխարհ գալուց իսկ առաջ նախասահմանված են գործելու բարին կամ չարը, այնպես որ Աստծու ծրագիրը կատարվում է ըստ Աստծու ընտրության և ոչ թե մեր գործերի: Գրված է, որ «ավագը պիտի ենթարկվի ամենակրտսերին» (Հռոմ. 9:11,12). ուրեմն մենք իզուր ենք խնդրում մեղքերի թողություն. Սուրբ Հոգու զորությունը մեզ թույլ է տալիս ասել. «Ամեն ինչի կարող եմ Հիսուս Քրիստոսով, որը զորացնում է ինձ» (Փիլ. 4:13):

Ուրեմն, եթե մեղավոր ենք, ապա մերժված ենք մեր մոր որովայնից. եթե ընտրված ենք մեր մոր որովայնից, ապա կունենանք լավագույն բաժինը՝ առանց նույնիսկ այն խնդրելու: Հակոբն աղոթեց ծնվելուց առաջ, որպեսզի մարդարեն հայտնի, թե նա իշխելու է իր եղբոր վրա, իսկ եղբայրը ծառայելու նրան (Ծնն. 25:23): Ինչո՞ւ Մովսեսն աղոթում է 89-րդ Սաղմոսում, թե՝ «Աստված իր ապավենն է եղել, երբ դեռ չէին հաստատվել լեռները, չէին կազմվել երկիրն ու աշխարհը»:

Եփեսացիներին ուղղված թղթում գրված է բոլոր նրանց մասին, որոնք պետք է փրկվեն. «Հայրը նրանց ընտրեց Քրիստոսի միջոցով նախքան աշխարհի արարումը, որպեսզի սերը սուրբ և անարատ դարձնի նրանց իր աչքին: Նա նախասահմանեց մեզ դառնալու իր որդիները ի Քրիստոս» (Եփ. 1:5): Ովքեր ընտրվել են աշխարհի ստեղծումից առաջ, չեն կարող զուրկ մնալ այդ ընտրությունից և հետևաբար ոչ մի կարիք չունեն աղոթելու. կամ ովքեր ո՛չ ընտրված են, ո՛չ նախասահմանված, ապա նրանց աղոթքներն անօգուտ են: Նրանք կարող են իրենց աղոթքները կրկնել տասը հազար անգամ, միևնույն է, դրանք չեն լսվի: «Նրանց, որ առաջուց ընտրել էր, նախասահմանեց նաև կերպարանակից լինելու իր Որդու պատկերին... և նրանց, որ նախասահմանել էր, նրանց էլ կանչեց, և որոնց որ կանչեց, նրանց էլ արդարացրեց, և որոնց որ արդարացրեց, նրանց էլ փառավորեց» (Հռոմ. 8:29):

Ինչո՞ւ Հոսիան հոգնում է, ինչո՞ւ նա մտահոգվում է իմանալու համար, թե իր աղոթքը կլսվի՞, թե ոչ, նա, ում բազում սերունդներից ի վեր մարգարեն հայտնել էր իր անունով, նա, ում գործերը ոչ միայն կանխորոշված էին, այլև հայտնված ամբողջ ժողովրդին: Ինչո՞ւ Հուդան պիտի աղոթեր, քանի որ իր աղոթքը պիտի դատապարտեր իրեն որպես մեղավորի՝ տրված լինելով, որ Դավթի ժամանակից ի վեր նախատեսված էր, որ նա կորցնելու է իր պաշտոնը, և մեկ ուրիշն է փոխարինելու իրեն (Սաղմ. 109:8, Գործք 1:20):

Ուրեմն անտեղի է աղոթելը, քանի որ Աստված անհողդողդ և անդրդվելի է իր ծրագրերի մեջ՝ ասես նա ամենուրեք առաջուց կարգավորած չլիներ և սպասեր աղոթքի, որպեսզի ամեն ինչ տնօրիներ ըստ մարդկանց հարմարության և ըստ իր քմահաճույքի՝ առանց ոչինչ կանխատեսած լինելու:

Ամփոփում

Կարճ ասած՝ ահա բառացիորեն այն, ինչ դու գրել ես ինձ.

«Եթե Աստված կանխատեսում է ապագան, և եթե դա անհրաժեշտ է, ապա աղոթքն անօգուտ է: Ավելին, եթե ամեն ինչ Աստծու կամքով է շարժվում, և եթե նրա ծրագրերն անհողդողդ են ու չեն կարող փոփոխության ենթարկվել, ապա նույնպես աղոթքն անօգուտ է: Հարմար թվաց ինձ այս առարկությունները նշել նախքան պատասխանելն այն դժվարություններին, որ կարող է հարուցել աղոթքը»:

2. ՈՐՈԳԻՆԵՍԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Արտաքին շարժում, ներքին շարժում

6. Շարժման մեջ գտնվող մարմիններից մի քանիսը, ինչպես, օրինակ, անկենդան մարմինները, ունեն շարժման արտաքին դրդապատճառ և գոյություն ունեն միայն հարակցության ուժով, իսկ մյուսներն ունեն սեփական շարժում կամ հոգի: Այս վերջիններն իրենք ևս, երբ իրենց շարժումը չի բխում իրենց էությունից, այլ՝ արտաքին մի պատճառից, գոյություն ունեն, ինչպես առաջին տեսակի մարմինները, միայն հարակցության ուժով: Վերցնենք մի օրինակ. քարահանքից հանված քարերը կամ իր արմատից պոկված ծառը գոյություն ունեն միայն հարակցության ուժով և իրենց շարժումն ստանում են դրսից[8]:

Նույնիսկ կենդանիների և բույսերի մարմինները, որոնք փոխադրվում են մեկ տեղից մյուսը, չեն ենթարկվում ներքին մի շարժման իբրև կենդանիներ կամ բույսեր, այլ, ինչպես այն քարերն ու ծառը, որոնց մասին խոսեցինք, կորցնում են զարգանալու իրենց կարողությունը: Նույնիսկ շարժման մեջ դրվելով դրսից՝ նրանք հետևում են իրենց բնության դահավեժ ընթացքին և քայքայվում: Նրանք ունեն միայն քայքայման շարժում:

Այս երկրորդ տեսակի մարմիններն ունեն ներքին մի շարժում կամ հոգի, որ հատուկ է իրենց, կամ, ավելի ճիշտ արտահայտվելու համար, ունեն մի շարժում, որ անբաժան է իրենց բնությունից: Երրորդ տեսակը բաղկացած է կենդանիներից. նրանց շարժումը կոչվում է ինքնակամ շարժում:

Ինքնակամ շարժումից զրկված կենդանին կորցնում է կենդանու իր հատկությունը, այդ դեպքում նա նմանվում է այն բույսին, որը շարժվում է միայն իր բնությամբ, կամ այն քարին, որ իր շարժումն ստանում է արտաքին մի ազդակից: Այն էակը, որը ենթակա է ըստ էության ազատ իր սեփական շարժումին, անհրաժեշտորեն բանականությամբ օժտված էակ է:

Փորձառությունն ապացուցում է ազատությունը

Ովքեր պնդում են, թե ոչինչ կախված չէ մեր կամքից, հանդում են անհեթեթ եզրակացությունների. նախ այն բանին, որ մենք կենդանի էակներ չենք, այլ շարժման մեջ ենք դրված արտաքին մի ազդակի կողմից, որը փոխարինում է մեզ, որը գործում է, մինչ մենք երևակայում ենք, թե ինքներս ենք գործում:

Եթե մարդ կամենա գոնե մի քիչ մտածել իր սեփական փորձառության մասին, ապա առանց անպատկառության չի կարող ժխտել, թե ինքն է, որ ցանկանում է, ուտում, զբոսնում, ինքն է, որ մերթ ընդունում կամ մերժում է այս կամ այն կարծիքը որպես ճիշտ կամ սխալ կարծիք:

Եթե, ուրեմն, կան կարծիքներ, որ կարելի չէ ընդունել տալ, հակառակ դիալեկտիկայի և պերճախոսության բոլոր հնարանքներին, ապա կարելի չէ նմանապես համոզել մեկին, որը զուրկ է ազատ գործելու կարողությունից: Կա՞ արդյոք մի մարդ, որ կարծի, թե մարդկային միտքը ոչինչ չի կարող հասկանալ, մի մարդ, որ ապրի՝ տարակուսելով ամեն ինչից: Ո՞վ չի պատժի հանցանքի մեջ բռնված ծառային այն պատճառաբանությամբ, թե իր տեսածը սոսկ խաբուսիկ երևույթ է: Ո՞վ չի մեղադրի մի որդու, որ զանց է առնում իր պարտականությունները իր ծնողների հանդեպ:

Ո՞վ չի պախարակի և չի դատապարտի շնացող մի կնոջ, որպես ամոթալի արարքի անձնատուր մեղավոր մի անձի: Ճշմարտությունը, հակառակ բոլոր սոփեստություններին, մեզ ստիպում և պարտադրում է գործել, գովել, պարսավել և ընդունել, որ մենք իրոք ազատ ենք, և հետևաբար մեր գործերը արժանի են գովեստի կամ պարսավանքի[9]*:*

Մարդու ազատությունը, Աստծու կանխատեսությունը

Ընդունելուց հետո ազատ կամքի գաղափարը, որ հազար ու մի ձևերով մեզ մղում է փնտրելու առաքինին ու բարին կամ փախչելու արատից ու չարից, պետք է անհրաժեշտորեն ընդունել նաև, որ Աստված, նախքան ազատության կիրառումը և նախքան աշխարհի ստեղծումը, հավանաբար գիտեր, թե ինչպիսին էին լինելու մեր ընտրությունները: Նույնպես նա, ըստ մեր ազատ կամքի յուրաքանչյուր գործողության, կարգավորել է մեր ազատ շարժումների կամ իր նախախնամության միջամտության հետևանքը, պայմանով որ աստվածային կանխագիտությունը չգիտվի որպես պատճառ, այն եղելությունների և գործողությունների, որոնք բխում են հենց մեր ազատության իմաստից:

Ընդունենք նույնիսկ մի պահ, որ Աստված չգիտե ապագան. դա պատճառ չէր լինի սակայն, որ մենք նկատի չառնեինք այս կամ այն գործողությունը: Աստծու կանխատեսությունը պարզապես այնպես է անում, որ մեր ազատ գործողությունները օգտակարապես ներդաշնակվեն ամբողջ տիեզերքի հետ:

Աստծու կանխագիտությունը հաշվի է առնում մարդկանց աղոթքները

Ուրեմն, եթե Աստված գիտե մեր ազատ կամքի բոլոր գործողությունները, ապա նա իր նախախնամությամբ, ինչպես պատշաճ է, ամեն բան կարգավորում է մեզնից յուրաքանչյուրի համար՝ հաշվի առնելով մեր աղոթքը, մեր տրամադրությունը, մեր հավատը, մեր կամքը: Այսպես է, որ նա կազմակերպում է ամեն ինչ ըստ կարգի: «Ես կլսեմ, - կասի նա, - այս մեկի աղոթքը, որովհետև նա ջանասիրությամբ աղոթեց. չեմ լսի այն մեկի աղաչանքը, որովհետև նա արժանի չէ, որ ես նրան լսեմ, կամ խնդրում է մի բան, որ ոչ մի օգուտ չի տա իրեն կամ անարժան կլինի ինձ համար նրան շնորհել: Ես կշնորհեմ կամ չեմ շնորհի՝ ըստ յուրաքանչյուրի աղոթքի: Եթե մեկը վախենում է, որ մարդու անսխալական կանխագիտությունը դեպքերին կամ եղելություններին չի տա այն ընթացքը, որ անհրաժեշտ է, ես կպատասխանեմ նրան, որ Աստված անհրաժեշտորեն գիտե, թե այդ անհատը լրջորեն և հարատևությամբ չի ցանկանում բարին կամ փնտրում է չարն այն աստիճան, որ այլևս չի կարող դարձի գալ դրանից:

«Նաև ես այս կամ այն բանը կշնորհեմ նրան, - ասում է Աստված, - ով աղոթում է արժանավայել կերպով և առանց անփութության: Երբ այդ մեկն ինձ աղոթի հարատևությամբ, ես նրան կշնորհեմ շատ ավելին, քան նա խնդրում է կամ հույս ունի ստանալու: Հաճելի է ինձ իմ բարերարություններով հաղթել, գերազանցել նրան և շնորհել նույնիսկ ավելին, քան նա կարող է խնդրել»:

«Ես այդպիսի տրամադրություն ունեցողին կուղարկեմ իմ հրեշտակներից մեկին, որ աշխատի նրա հետ նրա փրկության համար: Այսուհետև նա կօժանդակի նրան:

Մեկ ուրիշին կուղարկեմ էլ ավելի հզոր մի հրեշտակ, որ իր զորությամբ կգերազանցի նախորդին: Մի երրորդի վրայից, որ նախապես առաջնորդվել էր սքանչելի ուսուցումով, բայց հետո շեղվել էր՝ վերադառնալու համար երկրային բաներին, ես կվերացնեմ այդ հավատարիմ առաջնորդին: Նրա մեկնումից հետո մի չար զորություն թակարդ կլարի նրա դեմ և նրան կգցի այս կամ այն մեղքի մեջ, որոնց նկատմամբ նա նախապես ցույց էր տվել ցավագին մի տրամադրվածություն»:

Աստվածաշնչական օրինակներ աստվածային կանխագիտության մասին

Այսպես է խոսում նա, ով ի սկզբանե կարգավորեց տիեզերքը. Ամոնը կծնի Հոսիային, որը չի ընդօրինակի իր հոր սխալները, այլ կհետևի իր բարեկամների խորհրդին և կբռնի այն ճանապարհը, որը տանում է դեպի առաքինություն: Նա կդառնա բարի իշխան և կկործանի Հերոբովամի պիղծ ձեռքերով կառուցված զոհասեղանը (Բ Թագ. 23:15):

«Ես գիտեմ, - ասում է Աստված, - որ Հուդան, երբ իմ Որդին գա բնակվելու մարդկանց մեջ, սկզբում կլինի բարի և հավատարիմ, բայց հետագայում կդառնա չար և կընկնի մեղքի մեջ՝ արժանանալով արդար պատժի»: Հավանական է, որ Աստծու Որդին ունի ապագայի մասին նույն կանխագիտությունը, ունի գեթ Հուդայի և ուրիշ խորհուրդների մասին, որովհետև նա մտքով տեսնում է այն, ինչ կպատահի Հուդայի հետ, տեսնում է այն ծանր հանցանքները, որ կգործի նա: Հուդայի ծննդից շատ առաջ նա գոչում է Դավթի բերանով. «Ո՛վ իմ օրհնության Աստված, մի՛ լռիր...» և շարունակությունը (Սաղմ. 109:1):

Նույնպես Աստված, իմանալով ապագան և գիտենալով այն եռանդը, որ ցուցաբերելու է Պողոս առաքյալը Ավետարանի համար, ասաց ինքն իր մեջ. աշխարհն ստեղծելուց և տիեզերքի կարգավորումը ձեռնարկելուց առաջ ես կընտրեմ նրան և կվստահեմ այն զորություններին, որոնք օգնում են մարդկանց փրկվելուն: Նա կլինի իմ ընտրյալը իր մոր որովայնից. ես կհանդուրժեմ, որ նա իր երիտասարդության ժամանակ, անգիտության արգասիք հանդիսացող նախանձահուզությունից տարված, աստվածապաշտության պատրվակով հալածի նրանց, ովքեր հավատում են Քրիստոսին. թող նա պահի նույնիսկ այն մարդկանց զգեստները, որոնք կքարկոծեն իմ ծառա Ստեփանոսին: Բայց երբ երիտասարդության խանդը մեղմացած կլինի նրա մեջ, նա, դարձի գալով, առիթ կգտնի դառնալու ավելի լավը, նա իրեն չի փառավորի իմ առաջ, այլ կասի. «Արժանի չեմ առաքյալ կոչվելու, քանի որ հալածեցի Աստծու Եկեղեցին» (Ա Կորնթ. 15:9):

Պողոսը աստվածապաշտության անվան տակ իր գործած սխալներից հետո կհասկանա իմ առատաձեռնության բարիքները և կասի. «Աստծու շնորհով եմ, ինչ որ եմ» (Ա Կորնթ. 15:10): Եվ երիտասարդության ժամանակ Հիսուս Քրիստոսի նկատմամբ իր ունեցած մեղավորության գիտակցությունը կարգելի նրան հպարտանալ այն հայտնություններով, որ անելու եմ իրեն (Բ Կորնթ. 12:7):

Աղոթք արևը ծագեցնելու համար

7. Պատասխանենք այն մարդկանց առարկությանը, որոնք աղոթում են արևը ծագեցնելու համար: Արեգակին կարելի է վերագրել մի տեսակ ազատություն, որովհետև նա լուսնի հետ միասին փառավորում է Աստծուն: Գրված է. «Արեգա՛կ և լուսի՛ն, գոհաբանեցե՛ք Աստծուն» (Սաղմ.

148:3): Նույնն է պարագան նաև բոլոր երկնային լուսատուներու համար. «Լու՛յս և աստղե՛ր, փառաբանեցե՛ք Տիրոջը»: Ինչպես ասացինք, Աստված օգտագործում է երկրագնդի վրա ապրող ամեն ինչի ազատ կարգավորությունը և այն տնօրինում բոլորի բարիքի համար: Ուրեմն պետք է մտածենք, որ Աստված օգտագործում է նաև արեգակի, լուսնի և աստղերի կամքը, նրանց մշտապես կայուն ու խոհական կամքը, որն անհրաժեշտ է երկնքի գեղեցկության և երկնային լուսատուների ներդաշնակ շարժման համար[10]:

Եթե ես իզուր չեմ աղոթում, երբ հարցը վերաբերում է այնպիսի բաների, որոնք կախում ունեն իմ ազատությունից, ապա առավել ևս զուր չէ իմ աղոթքը, երբ հարցը վերաբերում է աստղերի ազատ ընթացքին, որոնք շարժվում են հոգուտ տիեզերքի: Ճիշտ է, կարելի է ասել, որ երկրի վրա մեզ շրջապատող առարկաները որոշ զգայություններ են հաղորդում մեզ, որոնք առաջ են բերում մեր տկարությունը և մեր հակումը դեպի չարը՝ մղելով ասելու այս կամ այն բանը, կամ կատարելու այս կամ այն արարքը: Բայց երկնքում ի՞նչ բան կարող է առաջ գալ՝ փոխելու համար լուսատուների ընթացքը, որն այնքան օգտակար է աշխարհի համար, քանի որ դրանք բոլորն էլ հնազանդվում են տրամաբանող, ամեն մի տպավորության և ազդեցության անմատչելի մի Հոգու, և որոնք կազմված են եթերային շատ մաքուր մի գոյացությունից:

3. ԱՂՈԹՔԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆԸ

8. Ահա պատշաճ մի օրինակ, որ, ինձ թվում է, կքաջալերի մարդկանց, որ աղոթեն, և կվհատեցնի նրանց, երբ այն լքում կամ անտեսում են: Մարդ չի կարող երեխա ունենալ առանց կնոջ օգնության և առանց կատարելու մարմնական արարքը: Աղոթքի համար նույնպես գոյություն ունի մի նախապայման. մարդ չի կարող ձեռք բերել այս կամ այն շնորհը՝ առանց նախապես աղոթելու անհրաժեշտ տրամադրությամբ կամ անհրաժեշտ հավատով և աղոթելուց առաջ ապրելու անհրաժեշտ ձևով:

Պետք է խուսափել անընդհատ և անտեղի կերպով նույն բանը կրկնելուց, աննշան և անկարևոր խնդրանքներ անելուց, երկրային բարիքներ աղերսելուց և զայրացած ու խռոված հոգով աղոթքի մեջ մտնելուց: Անհնար է հասկանալ աղոթքի պահանջը առանց սրտի մաքրության: Ով աղոթում է, ձեռք չի բերի մեղքերի թողություն, եթե իր սրտի խորքից իր եղբորը չների այն վիշտը, որ նա պատճառել էր իրեն:

4. ԻՆՉՊԵՍ ՊԵՏՔ Է ԱՂՈԹԵԼ

Կարծում եմ, որ նա, ով աղոթում է ինչպես պետք է կամ արթնացնում բարի տրամադրություններ, մեծ օգուտ կստանա դրանից: Ով նվիրվում է աղոթքի, նախ և առաջ տրամադրվում է դրան՝ ինքն իրեն դնելով Աստծու առաջ: Նա խոսում է նրա հետ, ինչպես մեկի հետ, որն այնտեղ է և լսում է իրեն: Կան պատկերներ և հիշողություններ, որոնք խռովում են մարդուս երևակայությունը և տիրում նրա մտքին: Դրան հակառակ՝ շատ օգտակար է հիշել Աստծուն, որին հավատում ենք, որը ներկա է և թափանցում է մեր հոգու ամենագաղտնի շարժումների մեջ, մեր հոգու, որ ձգտում է հաճելի լինելու այդ Ներկային, որը տեսնում է իրեն, խորաչափում երիկամները և զննում սրտերը:

Մի պահ ընդունենք նույնիսկ, որ նա, ով իր սիրտն այդպես տրամադրում է աղոթքին, ուրիշ ոչ մի օգուտ չքաղի դրանից. այդ հոգեկան տրամադրվածությունն աղոթքին

ինքնին արդեն հանդիսանում է իսկական մի բարիք: Թե դա որքա՜ն սխալներից զերծ է պահում մարդուն, որքա՜ն բարի գործեր առաջ բերում, գիտեն միայն նրանք, ովքեր ունեն հանապազօրյա աղոթքի փորձառությունը: Եթե ականավոր և խելացի մի մարդու օրինակն ու հիշատակը մեզ մղում են ընդօրինակելու նրան և հաճախ կանգ են առնել տալիս դյուրագայթ մի զառիթափի վրա, որքա՜ն ևս առավել մեր ընդհանուր Հոր՝ Աստծու մասին մտածումը, միացած աղոթքին, օգնության է գալիս նրանց, ովքեր գիտեն լինել մի Աստծու առաջ, որի հետ խոսում են, և որը նրանց տեսնում է ու լսում:

Սուրբ Պողոսի վկայությունը

9. Սուրբ Գիրքը հաստատում է, ինչ որ մենք ցույց տվեցինք վերևում: Ով աղոթում է, պետք է «սուրբ ձեռքեր բարձրացնի դեպի երկինք» (Ա Տիմ. 2;8), պետք է ների ուրիշի գործած հանցանքներն իր հանդեպ և իր սրտից դուրս վտարի բարկության ու ոխակալության ամեն զգացում: Աղոթքի պահին նա իր մտքից պետք է վերացնի ամեն մտահոգություն, որ օտարոտի է կամ առնչություն չունի աղոթքի հետ: Հոգեկան անդորրության ինչպիսի՜ աղբյուր է աղոթքը: Պողոս առաքյալը Տիմոթեոսին ուղղած իր առաջին թղթում մի՞թե չի սովորեցնում՝ ասելով. «Ուզում եմ, որ տղամարդիկ ամեն տեղ աղոթեն և սուրբ ձեռքեր բարձրացնեն դեպի երկինք առանց բարկության և երկմտության» (նույն տեղը):

Կանայք, իրենց հերթին, մանավանդ երբ սկսում են աղոթել, պետք է հոգով ու մարմնով տրամադրվեն դրան, ցուցաբերեն հատուկ ակնածանք Աստծու հանդեպ, իրենց մտքից վերացնեն անպատշաճ և անոտի ամեն մտածում,

չզարդարվեն ոչ հյուսքերով, ո՛չ ոսկով, ո՛չ մարգարիտներով, ո՛չ մեծածախ ճոխ զգեստներով, այլ այն բանով, որը ուրիշներից զանազանում է բարեպաշտությունը հանձն առած կնոջը: Ո՞վ կվարաներ երջանիկ կոչել աղոթքի համար իր ներքին տրամադրվածությամբ այս կերպ զարդարված մի կնոջ:

Սուրբ Պողոսը նույն նամակում չի՞ գրել միթե. «Կանայք թող ունենան վայելուչ պահվածք, պարկեշտ և համեստ զարդարանք, չկրեն ո՛չ հյուսք, ո՛չ ոսկի, ո՛չ մարգարիտներ, ո՛չ շքեղ զգեստներ, այլ լինեն ինչպես վայել է այն կանանց, որոնք հանձն են առել բարեպաշտությունը և նվիրված են բարի գործերի» (Ա Տիմ. 2:9-10):

Դավիթն ինքը ևս խորհուրդ է տալիս, թե ինչպես պետք է տրամադրվել աղոթքին

Դավիթ մարգարեն խոսում է ուրիշ շատ տրամադրությունների մասին, որ արդար մարդը (Դավիթը) հանդես է բերում աղոթքի ժամանակ: Մենք չենք վարանի մեջ բերել այստեղ նրա խոսքերը, որպեսզի ցույց տանք աղոթքի նախապատրաստության օգտակարությունն այդ արդար մարդու համար, որն իր անձը վստահում է Աստծուն, եթե նույնիսկ ուրիշ ոչ մի օգուտ չքաղի աղոթքից. «Աչքերս բարձրացրի դեպի քեզ, Տե՛ր, - աղոթում է Դավիթը, - դու, որ բնակվում ես երկնքում» (Սաղմ. 123:1): Նաև՝ «Հոգիս դեպի քեզ եմ բարձրացնում, ո՛վ Աստված» (Սաղմ. 25:1): Աչքերը երկինք են բարձրացնում մտքում, երբ դրանք չեն կպչում երկրային բարիքներին և դրանցով չեն շլանում: Թող դրանք բարձրանան և հասնեն այնպիսի բարձրության, որ կարողանան ակնկառույց նայել միայն Աստծուն և խոսել նրա հետ խոնարհությամբ և համեստությամբ:

Այդ աչքերն արդեն լիացել են՝ առանց քողի, բաց երեսով նայելով Աստծու փառքին և պայծառակերպվելով հետզհետե ավելի շողարձակող նույն պատկերով (Բ Կորնթ. 3:18): Դրանք ասես մի շող, մի շառայլ են ստանում աստվածային հանճարից, ինչպես որ գրված է. «Դու քո երեսի լույսը ծագեցրիր մեզ վրա, ո՛վ Տեր» (Սաղմ. 4:7):

Վեր բարձրացած հոգին, որը հետևում է Սուրբ Հոգուն և անջատվում մարմնից, ոչ միայն հետևում է Սուրբ Հոգուն, այլև բնակվում է նրա մեջ, ինչպես որ գրված է. «Հոգիս դեպի քեզ եմ բարձրացնում, ո՛վ Աստված» (Սաղմ. 25:1): Այդ հոգին մի՞թե դուրս չի գալիս իր մարդկային վիճակից՝ դառնալու համար ոգեղեն մի բան:

Թշնամանքի ներումը աղոթքի նախապայման է

Թշնամանքի ներումը մեծագույն առաքինությունն է, այն աստիճան, որ համառոտակի այն պարունակում է ամբողջ Օրենքը՝ ըստ Երեմիա մարգարեի խոսքի. «Ես ոչինչ չպատվիրեցի ձեր հայրերին, երբ նրանց դուրս հանեցի Եգիպտացիների երկրից: Ահա թե ինչ եմ պատվիրում նրան. "Թող յուրաքանչյուր ոք իր սրտում ների իր ընկերոջը"» (Երեմ. 7:22-23, Զաք. 7:10): Եթե ներումով տրամադրվենք աղոթքի, ապա պահած կլինենք Փրկչի պատվերը. «Երբ ոտքի կանգնեք աղոթելու համար, թե մեկի դեմ մի բան ունեք, ներեցե՛ք» (Մարկ. 11:25): Այսպես անելով՝ մենք արդեն ձեռք բերած կլինենք բարիքների լավագույնը:

Պետք է մի կողմ դնել ամեն տրտունջ Աստծու դեմ

10. Ես միշտ խոսում եմ ենթադրաբար՝ նկատի ունենալով, որ մեր աղոթքի միակ արդյունքը կլինի այն, թե ինչպես պետք է աղոթել և ըստ այնմ էլ գործել: Պարզ է, որ նա, ով աղոթում է այս ձևով, ով ապավինում է նրան, ում կանչում է, մինչև կանչելը նա կլսի՝ «ահա ես եմ» ձայնը, պայմանով որ աղոթելուց առաջ իր միջից հեռացնի ամեն առարկություն նախախնամության դեմ: Սա է հետևյալ խոսքերի իմաստը. «Եթե դու քեզնից հեռացնես չղթաները, սպառնալից շարժումներն ու տրտունջի բոլոր խոսքերը» (Եսայի 58:9):

Արդարև, ով դեպքերն ու իրադարձություններն ընդունում է, ինչպես որ դրանք պատահում են, ազատ է ամեն տեսակ չղթայից. նա իր սպառնալից ձեռքը չի բարձրացնի Աստծու դեմ, որը կառավարում է ամեն ինչ մեր առաջադիմության համար: Նա թաքուն կերպով չի տրտնջա իր սրտում, երբ մարդիկ չեն լսում իրեն: Այդ տրտունջը հատուկ է այն ծառաներին, որոնք չեն համարձակվում բացեիբաց քննադատել իրենց տերերի հրամանները: Նրանք ծածուկ, գաղտագողի մռթմռթում են նախախնամության կարգադրությունների դեմ, կարծես ուզենային տիեզերքի Տիրոջից ծածկել իրենց դժգոհության պատճառը: Դա է, ըստ իս, իմաստն այն բանի, ինչ գրված է Հոբի գրքում. «Իր հետ պատահած այս բոլոր դժբախտությունների մեջ Հոբն իր շրթունքներով չմեղանչեց Աստծու առաջ» (Հոբ 2:10): Նախքան իր փորձությունը նրա մասին ասված է. «Այս բոլոր դեպքերի ժամանակ Հոբը չմեղանչեց Աստծու առաջ» (Հոբ 1:12): Երկրորդ Օրենքը նույնպես հետևյալն է ասում. «Զգո՛ւյշ եղիր, չլինի, թե սրտումդ հանկարծակի, ծածուկ մի չար խոսք ընկնի և ասես. "Մոտ է յոթներորդ տարին"» և շարունակությունը (Բ Օր. 15:9):

Աստծու աշխարհն օգնում է աղոթողին

Ով այսպես է աղոթում, բացի այս բոլոր բարիքները վայելելուց, ավելի արժանի է դառնում միանալու Տիրոջ Սուրբ Հոգուն, որը լցնում է տիեզերքը, երկինքն ու երկիրը: Այդ մասին է խոսում մարգարեն՝ ասելով. «Մի՞թե ես չե՞մ լցնում երկինքն ու երկիրը» (Եր. 23:24):

Ավելին, այն մաքրագործումը, որի մասին խոսեցինք, աղոթքին մասնակից է դարձնում Աստծու Որդուն, որը կանգնում է հենց նրանց մեջտեղում, ովքեր անգիտանում են նրա ներկայությունը, իր ականջը չի փակում ոչ մի աղոթքի առջև և աղոթում է իր Հորը աղոթողի հետ միասին, որի միջնորդն է ինքը: Արդարև, Աստծու Որդին Աստծուն մատուցած մեր նվերների քահանայապետն է, մեր բարեխոսը Հոր մոտ (Ա Հովհ. 2:1): Նա աղոթում է նրանց համար, ովքեր աղոթում են, դատապաշտպան է կանգնում նրանց, ովքեր դրա կարիքն ունեն: Բայց նա մերժում է այդ եղբայրական օգնությունը նրանց, ովքեր ջանասիրությամբ չեն աղոթում իր հետ: Նա իրը չի համարում այն մարդկանց դատը, որոնք անտեսում են իր պատգամը. «Պետք է միշտ աղոթել առանց երբեք վհատվելու» (Ղուկ. 18:1):

Ավետարանում կարդում ենք. «Մի առակ էլ ասաց նրանց՝ ցույց տալու համար, որ հարկավոր է միշտ աղոթել առանց երբեք ձանձրանալու. "Մի քաղաքում մի դատավոր կար"» և այլն (Ղուկ. 18:1): Եվ մի քիչ ավելի վերև՝ «Եթե ձեզնից մեկը մի բարեկամ ունենա և գնա նրա մոտ կեսգիշերին ու ասի նրան. "Բարեկա՛մ, ինձ երեք նկանակ հաց տուր, որովհետև իմ բարեկամներից մեկը ճանապարհորդությունից եկել է ինձ մոտ, և ես ոչինչ չունեմ նրան տալու» (Ղուկ. 11:5-6): Եվ մի քիչ ավելի հեռու՝ «Ասում եմ ձեզ, եթե նույնիսկ որպես բարեկամ վեր կկենա հաց տալու նրան, գեթ նրա թախանձանքի պատճառով վեր կկենա և կտա այն ամենը, ինչ որ պետք է նրան» (Ղուկ. 11:8):

Ով հավատում է Հիսուսի անսխալական խոսքին, կարո՞ղ է միթե չմղվել համառորեն աղոթելու հետևյալ բառերով. «Խնդրեցե՛ք, և ձեզ կտրվի... ով խնդրում է, ստանում է» (Մատթ. 7:7-8): Աստված, որ բարի է, կենդանի հաց է տալիս նրանց, ովքեր աղոթում են իրեն, և ոչ թե այն քարը, որ Սատանան որպես սնունդ ներկայացնում է Հիսուսին, նրա աշակերտներին և բոլոր նրանց, ովքեր Հորից ստացել են որդեգրության հոգի: Հայրը տալիս է, ինչ որ բարի է: Նա երկնքից բարիքներ է տեղացնում նրանց վրա, ովքեր ուզում են նրանից» (Մատթ. 7:11 և Ղուկ. 11:13):

Հրեշտակներն ու սրբերը օգնում են աղոթողներին

11. Քահանայապետը միակը չէ, որ իր աղոթքը միացնում է մեր աղոթքներին, երբ որ մենք աղոթում ենք, ինչպես պետք է: Հրեշտակներն իրենք էլ միանում են մեզ և երկնքում ավելի մեծ ուրախություն զգում մեկ մեղավորի համար, որը զղջում է, քան իննսունինը արդարների համար, որոնք կարիք չունեն զղջալու (Ղուկ. 15:7):

Նույնն է պարագան նաև արդար հոգիների համար, որոնք ննջել են:

Այսպես է, որ Ռափայելը Տոբիթի և Սառայի համար հոգևոր զոհ է մատուցում Աստծուն: Երբ նրանք վերջացնում են իրենց աղոթքը, Սուրբ Գիրքն ավելացնում է. «Ձեր աղոթքը լսելի եղավ Ամենաբարձրյալի առջև, և Ռափայելն ուղարկվեց բժշկելու երկուսին էլ» (Տոբ. 3:16-17): Իսկ Ռափայելն ինքը, հայտնելով նրանց այն առաքելությունը, որ ստացել էր Աստծուց իբրև պատգամաբերը նրա աստվա-

ծային կամքի, ասաց նրանց. «Երբ դուք աղոթում էիք, դու և քո նշանած Սառան, ես էի, որ ձեր թախանձանքները տանում հասցնում էի Աստծուն» (Տոբ. 12:12): Եւ մի քիչ ավելի հեռու՝ «Ես Ռափայելն եմ՝ մեկն այն յոթ հրեշտակներից, որոնք սրբերի աղոթքները ներկայացնում են Աստծուն և քայլում նրա փառքի առաջ» (Տոբ. 12:15): Այսպես, ըստ Ռափայելի, «բարի է աղոթքը, երբ նրան ուղեկցում են ողորմությունը, պահեցողությունը և արդարությունը» (Տոբ. 12:8):

Մակաբայեցվոց գիրքն ինքը Երեմիա մարգարեին ներկայացնում է որպես երևելի անձ իր պատկառելի տարիքով և արժանավորությամբ, մի մարդ, որ զարդարված է փառահեղ և զարմանալի մեծավայելչությամբ: Մեկ ուրիշ սուրբ, որ վախճանվել է նրանից որոշ ժամանակ առաջ, նրա մասին տալիս է հետևյալ վկայությունը. «Սա Երեմիան է՝ Աստծու մարգարեն. նա շատ է աղոթում ժողովրդի և սուրբ քաղաքի համար» (Մակաբ. 15:14):

Սրբերի սերը երկրագնդում բնակվող իրենց եղբայրների հանդեպ

Այն դեպքում, երբ ճանաչողությունը ներկա ժամանակում սրբերին տրվում է «աղոտ կերպով, ինչպես պատկերը հայելու մեջ», իսկ ապագա կյանքում այն լինում է պարզորոշ, «դեմ առ դեմ» (Ա Կորնթ. 13:12), անմիտ բան է նույն համեմատությունը չանել մյուս առաքինությունների համար, որովհետև ինչ որ պատրաստվում է այս կյանքում, իր ավարտին է հասնում մյուս կյանքում: Բոլոր առաքինությունների մեջ գլխավորը, ըստ Աստծու խոսքի, սերն է մերձավորի հանդեպ: Պետք է մտածենք, որ այն սրբերը, որոնք ննջեցյալ են դարձել, այն գործադրում են այն մարդկանց փոխարեն, որոնք պայքարում են դեռ երկրի վրա շատ ավելի լավ, քան նրանք, ովքեր, բաժանելով միևնույն վիճակը, կարող են օգնել ավելի թույլ եղբայրներին, որոնք պայքարում են իրենց նման:

Այն խոսքը, թե՝ «Եթե մի որևէ անդամ ցավ է զգում, նրա հետ ցավ են զգում բոլոր անդամները», և «Եթե մի անդամը փառավորվում է, նրա հետ ուրախանում են բոլոր անդամները» (Ա Կորնթ. 12:26), չի վերաբերում միայն այն եղբայրներին, որոնք միմյանց սիրում են երկրի վրա. նաև նրանք, որ ապրում են սերը ներկա կյանքից այն կողմ, կարող են ասել. «Իմ ամենօրյա մտատանջությունը բոլոր Եկեղեցիներն են»:

Կա՞ տկար մեկը, որի հետ ես էլ տկարացած չլինեմ, կա՞ ընկած մեկը, որի համար իմ սիրտը այրած չլինի» (Բ Կորնթ. 11:28-29): Քրիստոսն ինքը չի՞ ընդունում միթե, որ հիվանդ է լինում ամեն անգամ, երբ յուրայիններից մեկը հիվանդանում է, որ նրա հետ ինքն էլ է բանտարկվում, մնում առանց հագուստի, առանց երդիկի, որ ինքն էլ է տանջվում քաղցից և ծարավից: Ավետարանը կարդացողներից ո՞վ կարող է չիմանալ, որ Քրիստոսը տառապում է հավատացյալների տառապանքներով:

Հրեշտակները շարունակում են ծառայել Քրիստոսին

Որ հրեշտակները «մոտեցան և ծառայեցին նրան» (Մատթ. 4:11), դրանից չպետք է եզրակացնել, թե հրեշտակների այս մեծ պաշտոնատարը, երբ կարճ ժամանակով բաժանեց մեր վիճակը, իր հավատացյալների մեջ գտնվեց ոչ որպես «մեկը, որ բազմել սեղան է նստել, այլ որպես մեկը, որ ծառայում է» (Ղուկ. 22:27): Քանիներ կան դեռ, որ

պիտի ծառայեն Հիսուսին, որն ուզում է մեկ առ մեկ հավաքել բոլոր իսրայելացիներին (Եսայի 27:12 և Հովհ. 11:52), ի մի ժողովել բոլոր նրանց, որ ցրված են դրսում, և փրկել նրանց, որ երկնչում են իրենից և կանչում իրեն: Քանիներ կան դեռ, որ չեն գործակցում Հիսուսին ավելի արդյունավետ կերպով, քան առաքյալներն իրենք, Եկեղեցու բարգավաճման և ընդարձակման համար:

Հայտնության գրքում մի՞թե չէ գրված, որ հրեշտակները վերակացուներ են նշանակված Եկեղեցիների կառավարման համար (Հայտ. 1:20): Առանց պատճառի չէ, որ Աստծու հրեշտակները բարձրանում և իջնում են մարդու Որդու վրա (Հովհ. 1:51) և տեսանելի են այն աչքերին, որոնք լուսավորված են իմացության լույսով:

Ինչպես են հրեշտակները օգնում աղոթողներին

Հենց այն պահին, երբ աղոթողը բաց է անում իր բերանը, հրեշտակներն իմանում են, թե ի՛նչ են նրա կարիքները: Նրանք գործում են ըստ իրենց պաշտոնի և ըստ իրենց ստացած տիեզերական առաքելության: Վերցնենք մի համեմատություն, որպեսզի հասկանալի դարձնենք մեր միտքը: Մի բժիշկ, որ բարեգործ մարդ է, գտնվում է մի հիվանդի մոտ, որ աղոթք է արել բժշկվելու համար: Նա գիտե, թե ինչպես պետք է բժշկել հիվանդներին: Բնականաբար խնամում է նրան՝ վստահ լինելով, որ կատարում է Աստծու ծրագիրը, որը լսում է բժշկություն հայցողի աղոթքը:

Մի համեմատություն ևս. ահա մի մարդ, որ անսահման հարստության տեր է և միաժամանակ՝ առատաձեռն: Նա լսում է Աստծուն ապավինող աղքատ մի մարդու աղոթքը: Բնականաբար նա կօգնի այդ աղքատին՝ վստահ լինելով, որ այդպիսով կատարում է Աստծու հայրական կամքը, որը, աղոթքի պահին, դիտավորյալ կերպով իրար է մոտեցրել օգնություն խնդրողին ու նրան, ով կարող է օգնել, և առաջինին անտարբեր չի թողել երկրորդի նեղության նկատմամբ:

Այսպիսի հանդիպումները պատահականության արդյունք չեն, որովհետև նա, ով հաշվում է նույնիսկ սրբերի գլխի մազերը, աղոթքի պահին գոհունակությամբ է միացնում նրան, ով խնդրում է, և նրան, ով կարող է տալ: Հրեշտակները նույնպես, որոնք Աստծու պաշտոնյաներն ու սպասավորներն են, միշտ գտնվում են աղոթողի մոտ՝ ստանալու նրա համար այն, ինչ նա խնդրում է:

Յուրաքանչյուրի հրեշտակը, նույնիսկ նրանց, ովքեր փոքր են Եկեղեցում, մշտապես տեսնում է Հոր դեմքը, որ երկնքում է (Մատթ. 18:10) և զմայլանքով դիտում մեր Աբարչի աստվածությունը: Նա աղոթում է մեզ հետ, իր ամբողջ կարողությամբ գործում է մեզ հետ՝ մեզ համար ստանալու այն, ինչ մենք խնդրում ենք:

Աղոթքը պաշտպանություն է հակառակորդ ուժերի դեմ

12. Ես բարձր եմ գնահատում քրիստոնեական աղոթքի խոսքերը, որոնք հարուստ են առաքինությամբ, մանավանդ երբ մարդիկ աղոթում են հոգով և խոնարհությամբ: Աղոթքը բոցի նման ժայթքում է աղոթողի հոգուց և շրթներից, Աստծու զորությամբ քայքայում ցրում է հակառակորդ ուժերի կաթեցրած թույնը այն մարդկանց մտքում, որոնք անտեսում են աղոթքը կամ նկատի չեն առնում Հիսուսին հավատարիմ սուրբ Պողոսի պատվերը, թե՝«Պետք է անդադար աղոթել» (Ա Տիմ. 5:17):

Աղոթքը նետի նման ժայթքում է այն մարդու հոգուց,

որն աղոթում է գիտակցությամբ, մտքով և հավատով. այն մահացու հարված է հասցնում Աստծու թշնամի ուժերին, որոնք ուզում են մեզ գցել ուծացնող մեղքի մեջ:

Աղոթել անդադար, աղոթել որոշակի ժամերին

Առաքինության գործադրումը և հավատարմությունը Աստծու պատվիրաններին աղոթքի անբաժանելի մասն են կազմում: Հետևաբար նա՛ է անդադար աղոթում, ով աղոթքը միացնում է գործին և գործը՝ աղոթքին. դա «անդադար աղոթելու» միակ ձևն է, ինչ որ նշանակում է սրբի ամբողջ կյանքը դիտել որպես անընդմեջ մի երկար աղոթասացություն, որի մեկ մասն է կազմում միայն այն, ինչ մենք սովորաբար կոչում ենք աղոթք[11]*:*

Այս վերջինը պետք է վերանորոգվի առնվազն օրական երեք անգամ՝ ըստ Դանիել մարգարեի օրինակի, որը օրը երեք անգամ ծնրադրում և աղոթում էր այն ժամանակ, երբ մի մեծ վտանգ էր սպառնում իրեն (Դան. 6:10): Պետրոս առաքյալն ինքը ևս տանիք էր բարձրանում օրվա վեցերորդ ժամին աղոթելու համար: Զորս ծայրերից բռնված և երկրի վրա իջնող մեծ սփռոցի տեսիլքը նշում էր նրա երեք աղոթքներից երկրորդը (Գործք 10:9-10): Նրանից հետո Դավիթը հետևյալ ակնարկությունն է անում աղոթքի մասին.

«Առավոտից ի վեր դու լսում ես ձայնն իմ աղոթքի,

Առավոտից ի վեր կանգնում եմ ես քո առաջ և նայում եմ քեզ» (Սաղմ. 5:3):

Այս աղոթքներից երրորդի մասին մենք ունենք մի ակնարկություն ևս հետևյալ հատվածում. «Կարկառում եմ ձեռքերս իբրև երեկոյան պատարագ» (Սաղմ. 141:2): Գիշերային ժամն իսկ մենք չենք անցկացնում առանց աղոթելու, քանի որ Դավիթն ասում է մեզ. «Կեսգիշերին վեր եմ կենում գոհություն մատուցելու քեզ վասն արդար քո դատաստանների» (Սաղմ. 119:62): Գործք առաքելոցում նույնպես հիշատակված է, որ Պողոսն ու Փիլիպոսը «գիշերվա կեսին աղոթում ու օրհնում էին Աստծուն Շիղայի հետ. մյուս կալանավորները լսում էին նրանց» (Գործք 16:25):

Հիսուսի աղոթքը

13. Հիսուս ինքը ևս աղոթում է և իզուր չի աղոթում: Նա ստանում է այն, ինչ խնդրում է իր աղոթքում, մինչ առանց աղոթելու գուցե չստանար: Մեզնից ո՞վ թույլ կտար իրեն չաղոթել: Մարկոս ավետարանիչը տեղեկացնում է մեզ. «Հետևյալ օրը, առավոտյան, դեռ լույսը չբացված, նա վեր կացավ գնաց մի ամայի տեղ և այնտեղ սկսեց աղոթել» (Մարկ. 1:35):

Իր հերթին Ղուկաս ավետարանիչն ասում է. «Մի օր ինչ-որ տեղ Հիսուս աղոթում էր: Երբ նա վերջացրեց, աշակերտներից մեկն ասաց նրան. . . » (Ղուկ. 11:1): Մի ուրիշ տեղ՝ «Նա գիշերն անցկացրեց Աստծուն աղոթելով» (Ղուկ. 6:12): Ահա թե Հովհաննես ավետարանիչն ինչպես է նկարագրում Հիսուսի աղոթքը. «Այսպես խոսեց Հիսուս. հետո աչքերը երկինք բարձրացրեց և ասաց. ''Հա՛յր, ժամը հասել է, փառավորի՛ր քո որդուն, որպեսզի քո որդին էլ քեզ փառավորի''» (Հովհ. 17:1): Նաև՝ «Ես գիտեի, որ միշտ լսում ես ինձ» (նույնը, 11:42): Հիսուսի կողմից արտասանված և ավետարանչի կողմից պահպանված խոսքը հստակորեն ցույց է տալիս, թե նա, ով միշտ աղոթում է, միշտ էլ լսվում է:

Աստվածաշունչն աղոթքի բազում օրինակներ է տալիս մեզ

Կարիք կա՞ արդյոք հերթով մեջ բերելու այն մարդկանց օրինակները, որոնք, աղոթած լինելով ինչպես պետք է, Աստծուց ստացել են մեծամեծ բարիքներ: Աստվածաշունչը յուրաքանչյուրի վերաբերյալ տալիս է բազմաթիվ օրինակներ: Աննան, աղոթելով, ձեռք բերեց նորածին Սամվելին, որը համեմատվեց Մովսեսի հետ: Երեխա չունենալու պատճառով նա Աստծուն աղոթեց հավատով (Ա Թագ. 1:10): Եզեկիան ինքը ևս սերունդ չուներ. երբ Եսայուց իմացավ, որ պիտի մահանա, աղոթեց Աստծուն և հիշատակվեց Փրկչի ազգաբանության մեջ (Բ Թագ. 20:2, Մատթ. 1:9-10):

Նենգ Համանի դրդումով արքայի հրապարակած մեկ հրովարտակը բնաջինջ պիտի աներ Իսրայելի ժողովրդին, երբ որ Եսթերի և Մուրթքեի աղոթքը, ծոմապահության օգնությամբ, լսելի եղավ Աստծուն: Այդ օրվանից սկսած, բացի Մովսեսի կողմից հաստատված հանդիսություններից, հրեա ժողովուրդը նշում է Մուրթքեի պատվին կատարվող մի տոնի հիշատակը (Եսթ. 3:6, 4:16, 9:26):

Հուդիթը ջերմեռանդ մի աղոթք ուղղեց Աստծուն: Նա, Աստծու շնորհիվ, հաղթեց Հողոփեռնեսին և եբրայեցիների մեջ միակ կինը եղավ, որ չփոթության մեջ գցեց Նաբուքոդոնոսորի տունը (Հուդ. 13:4-9): Անանիան, Ազարիան և Միսայելը իրենց աղոթքով արժանացան Աստծու ողորմությանը, և Աստված իր հրեշտակի միջոցով ուղարկեց «ցողաբեր մի հողմ», որը պաշտպանեց նրանց կրակի մեջ այրվելուց (Դան. 3:50):

Բաբելոնի գբի մեջ Դանիելի աղոթքը փակեց առյուծների բերանը (նույնը, 6:10): Հովնանը ծովային հրեշի փորում իր հույսը չկորցրեց, որ Աստված կլսի իրեն: Նա կարողացավ դուրս գալ այնտեղից և ավարտել իր մարգարեական առաքելությունը Նինվեացիների մոտ (Հովն. 2):

Մեր անձնական փորձառության օրինակները

Մեզնից յուրաքանչյուրը չի՞ կարող միթե բարձրացնել առ Աստված գոհաբանական բազմաթիվ աղոթքներ, եթե ցանկանա երախտագիտությամբ հիշել այն բարիքները, որ ստացել է նրանից: Երկար ժամանակ ամլացած հոգիներ, ջանասիրաբար արտասանված մի աղոթքի շնորհիվ գիտակցեցին իրենց մտքի անկարողությունն ու իրենց իմացականության անպտղաբերությունը և ինչ-որ ձևով արգասավոր դարձան Սուրբ Հոգու կողմից և լույս աշխարհ բերեցին փրկության մի պատգամ՝ հարուստ ուսանելի խրատներով և ճշմարտությամբ:

Մենք շրջապատված ենք անտեսանելի թշնամիների մեծաթիվ բազմությամբ, որոնք ճգնում են մեզ շեղել Աստծու հանդեպ մեր ունեցած հավատից: Բայց մենք նրանց հաղթեցինք: «Ոմանք դիմում են ռազմակառքերին, մյուսները՝ երիվարներին, իսկ մենք Տիրոջ անունն ենք կանչում» (Սաղմ. 33:17):

Մեր թշնամիների առաջնորդն ինքը, որ իր համոզկեր և ստապատիր խոսքերով սարսափ է տարածում այն մարդկանց հոգիների մեջ, որոնք հավատացյալ են համարվում, հաճախ գետին է տապալվում նրա կողմից, ով ապավինում է Աստծուն և նվիրված է նրա փառաբանությանը (Հուդիթ նշանակում է գովաբանություն, փառաբանություն): Մեծ բազմություն են կազմում նրանք, ովքեր, ընկած լինելով դժվարահաղթ փորձությունների մեջ, որոնք ավելի կիզիչ են եղել, քան կրակը, մնացել են անվնաս և դուրս են եկել

այդ փորձություններից՝ առանց չնչին մի քերծվածք ստանալու, առանց նույնիսկ զգալու թշնամու կրակի ծուխը: Էլ ի՞նչ ասեմ:

Մեր դեմ մոլեգնած որքա՜ն վայրի գազաններ ասես (ուզում եմ ասել՝ վատ հոգիներ և չար մարդիկ) չեն փողոտվել մեր աղոթքով. նրանց ատամները չեն կարողացել հոշոտել մեր անդամները, որոնք դարձել են Քրիստոսի անդամներ: Հաճախ, ի պաշտպանություն իր սրբերի, Տերը կոտրատել է առյուծների կեռ ժանիքները, որոնք անվնաս են դարձել հոսող ջրի նման (Սաղմ. 58:7-8):

Մենք ճանաչում ենք շատ մարդկանց, որոնք լքել էին Աստծու օրենքը. մահը հաղթել և կուլ էր տվել նրանց: Բայց ապաշխարությամբ նրանք խուսափեցին մահվանից ու փրկվեցին, որովհետև չէին հուսալքվել: «Մահը կուլ էր տվել նրանց, բայց Աստված արցունքը սրբեց նրանց երեսից (Եսայի 25:8):

Աստվածաշնչական օրինակների հոգևոր մեկնաբանությունը

Ուզում էի նշել աղոթքի օգտակարությունը ցույց տվող այս բոլոր օրինակները: Սակայն պետք է հուսահատեցնեմ իրենց հոգևոր կյանքը Քրիստոսի մեջ փնտրող այն մարդկանց, որոնք խնդրում են երկրային խոտելի բարիքներ:

Այս ուսումնասիրությամբ կցանկանայի ընթերցողներին ներշնչել հոգևոր արժեքների ճաշակը, որ նշված օրինակները միայն կարող են թելադրել. որովհետև ով չի պայքարում «մարմնավոր զենքերով», բայց «Հոգով սպանում է մարմնավոր գործերը» (Բ. Կորնթ. 10:3, Հռոմ. 8:13), աղոթքի մեջ միշտ խնդրում է այն հոգևոր և խորհրդավոր բարիքները, որոնց անդրադարձանք: Ովքեր գիտեն բացահայտել Սուրբ Գրքի հոգևոր իմաստը, որպես հոգևոր արժեք ձեռք են բերում այն, ինչ թվում է, թե պատգամը խոստանում է նրանց, ովքեր աղոթում են[12]:

Ուրեմն պիտի փորձենք հոգևոր օրենքին տալ հոգևոր իմաստ, որպեսզի այն ամուլ չլինի մեր մեջ. այդպիսով մեր աղոթքը մեզ կբժշկի մեր ամլությունից, ինչպես բժշկեց Աննային և Եղեկիային. այն կազատի մեզ մեր հոգևոր խարդախ թշնամիներից, ինչպես ազատեց Մուրթքեին, Եսթերին և Հուդիթին:

Եգիպտոսի նման հրակեզ մեծ հնոցը ցույց է տալիս մեր երկրի պատկերը: Բոլոր նրանք, ովքեր փախչում են չարից իրենց կյանքի ընթացքում, ովքեր խուսափում են մեղքի այրուցքից, և որոնց սիրտը չի եռում հնոցի նման, պետք է գոհություն մատուցեն Աստծուն ճիշտ այն երիտասարդների նման, որոնք խարույկի վրա զգացին, թե ինչպես է երկնքից իրենց վրա փչում մեղմ զեփյուռը:

Ով լսելի է դառնում Աստծուն, երբ խնդրում է, թե՝ «Ով քեզ գոհություն է մատուցում, գազաններին մի՛ մատնիր» (Սաղմ. 74:19), ով Քրիստոսի շնորհիվ պաշտպանվում է թունավոր քարբից և իժից՝ կոխոտելով դրանք իր ոտքերի տակ, «ով ճզմում է առյուծին և վիշապին» (Սաղմ. 91:13) և ի գործ դնում այն հրաշալի կարողությունը, որ Փրկիչը տվել է նրան, որպեսզի համարձակ կերպով քայլի օձերի, կարիճների և թշնամի բոլոր զորությունների վրայից՝ առանց որևէ վնաս ստանալու (Ղուկ. 10:19), պետք է շնորհակալ լինի Աստծուն ավելի, քան Դանիելը, քանզի ազատվել է առավել սոսկալի և առավել վտանգավոր աղետներից, քան նա:

Բացի դրանից, ով որ գիտե, թե ո՛ր հրեշի խորհրդանիշն է այն կենդանին, որը կուլ տվեց Հովնանին, կհասկանա Հոբի հետևյալ խոսքը. «Թող նզովվեն նրանք, որ անիծում են

այն օրը, ով ուզում է զգետնել ահարկու հրեշին» (Հոբ 3:8): Եթե երբեք ինչ-որ անհնազանդությամբ նա ընկնի այդ հրեշի որովայնը, թող զղջա, թող աղոթի, և կփրկվի: Դուրս գալով այնտեղից և այնուհետև հնազանդվելով Աստծու կամքին՝ նա կկարողանա Սուրբ Հոգու բարյացակամության շնորհիվ քարոզել կորստյան մատնված նինվեացիներին և փրկություն ավետել նրանց, պայմանով որ չխափանեն Աստծու բարությունը և չփորձեն արգելք հանդիսանալ ապաշխարողներին:

Ինչ որ Սամվելն աղոթքով արեց շատ մեծ բան, Աստծու ճշմարիտ հավատացյալներից յուրաքանչյուրը, Սուրբ Գրքի ասելով, կարող է անել հոգեպես, եթե արժանի դառնա լսվելու նրանից: Արդարև, գրված է. «Այժմ ուշադի՛ր եղեք և տեսե՛ք այն հրաշագործությունը, որ Աստված անում է ձեր աչքերի առաջ: Չէ՞ որ այսօր ցորենի հնձի ժամանակ է: Ես պիտի կանչեմ Տիրոջը, և նա կուղարկի որոտ և անձրև» (Ա Թագ. 12:16-17): Եվ մի քիչ ավելի ներքև՝ «Սամվելը կանչեց Տիրոջը, և Տերն ուղարկեց այդ օրը որոտ և անձրև» (նույնը, 12:18):

Հիրավի, Տեր Հիսուս բոլոր սրբերին, իր բոլոր ճշմարիտ աշակերտներին ասում է. «Բարձրացրե՛ք ձեր աչքերը և տեսե՛ք. արտերն սպիտակել են և պատրաստ են հնձի համար: Այսուհետև հձվորն ստանում է իր վարձը և պտուղ է կուտակում հավիտենական կյանքի համար» (Հովհ. 4:35-36): Հնձի ժամանակ Տերը հրաշալի գործ է կատարում այն մարդկանց աչքերի առջև, ովքեր լսում են մարգարեներին, որովհետև ով որ, միանալով Սուրբ Հոգուն, կանչում է Աստծուն, երկնքից լսում է Աստծու ձայնը և ստանում իր ծարավը հագեցնող ջուրը: Այնպես որ, ով մեղքի մեջ դողում է Տիրոջ և նրա բարեսեր պաշտոնյայի առջև, հետո աղոթքի մեջ գտնում է վեհությունն ու սրբությունը:

Մենք նաև տեսնում ենք Եղիա մարգարեին, որը Աստծու կամքով բաց է անում ամբարշտության հետևանքով երեք տարի և վեց ամիս փակ մնացած երկինքը: Նույն զարմանահրաշ երևույթը կրկնվում է նրանց համար, ովքեր աղոթքի միջոցով ստանում են հոգևոր անձրև, որից զրկվել էին մեղքի պատճառով:

5. ԹԵ ԻՆՉ ՊԵՏՔ Է ԽՆԴՐԵԼ

Այժմ խորհրդածենք հետևյալ խոսքի մասին. «Խնդրեցե՛ք մեծ բաները, և փոքրերը ավելիո՛վ կտրվեն ձեզ. խնդրեցե՛ք երկնային բարիքները, և երկրայինները ավելիո՛վ կշնորհվեն ձեզ»: Բոլոր պատկերները, բոլոր երևույթներն ու կերպարանքները, ճշմարիտ և հոգևոր բարիքների հետ համեմատած, մնում են տկար և գետնաքարշ: Արդ, Բանն Աստված, որ մեզ հորդորում է ընդօրինակել սրբերի աղոթքները, հիշեցնում է մեզ, որ երկնային և կարևոր բարիքները նշանակություն են ստանում երկրային և համեստ արժեքներով: Կարծես նա ուզենար ասել՝ «Ուզո՞ւմ եք հոգեղեն լինել»:

Ձեր աղոթքների մեջ խնդրեցե՛ք երկնային բարիքները և, ձեռք բերելով դրանք, երկնքի թագավորությունից ժառանգություն կստանաք և, մեծանալով, կվայելեք առավել մեծ բարիքներ: Ինչ վերաբերում է երկրային ամենօրյա բարիքներին, որոնց կարիքն ունեք ձեր մարմնական պահանջների համար, Հայրը դրանք ձեզ կտա ավելիով, քան անհրաժեշտ է:

Աղոթքի չորս ձևերը սուրբ Պողոսի մոտ

Տիմոթեոսին ուղղված առաջին թղթում Պողոս առաք-

յալն օգտագործում է չորս բառեր, որոնք հատկանշում են աղոթքի չորս ձևերը: Հարկավոր է մեջբերել այդ հատվածը՝ տեսնելու համար, թե լավ հասկանո՞ւմ ենք այդ չորս բառերը: Ահավասիկ. «Արդ, ամենից առաջ հանձնարարում եմ մատուցել աղաչանքներ, աղոթքներ, բարեխոսություններ և գոհաբանություններ բոլոր մարդկանց համար» (Ա Տիմ. 2:1):

Ըստ իս, աղաչանքը այն մարդու աղոթքն է, որը խնդրում է թախանձանքով՝ ստանալու համար այն, ինչի կարիքն ունի: Աղոթքը, իր բուն իմաստով, մեկնում է ավելի ազնիվ մի զգացումից. փառաբանում է Աստծուն, և նրա առարկան ավելի վեհ է: Բարեխոսությունը ենթադրում է առավել մեծ վստահություն այն մարդու կողմից, որն այն ուղղում է առ Աստված: Գովաբանությունը երախտագիտություն է, որը միացած է աղոթքին ստացված բարիքների համար: Դրանով արտահայտվում է բարիքի մեծությունը նպաստընկալի աչքին, կամ բարերարին հայտնվում է նրա բարերարության մեծությունը:

Աղաչանքի օրինակներ

Աղոթքի առաջին ձևի որպես օրինակ, կարող ենք մեջբերել Գաբրիել հրեշտակի խոսքերը՝ ուղղված Զաքարիա քահանային, որը հավանաբար Աստծուց խնդրել էր Հովհաննեսի ծնունդը: Հրեշտակն ասում է. «Ապահո՛վ եղիր, Զաքարիա՛, քո աղաչանքը լսելի եղավ. քո կինը՝ Եղիսաբեթը, մի որդի կտա քեզ, որի անունը Հովհաննես կդնես»(Ղուկ. 1:13):

Տեսե՛ք նաև, թե ի՛նչ է գրվել Ելից գրքում ոսկե հորթի մասին. «Մովսեսն աղաչում էր Տեր Աստծուն և ասում. "Տե՛ր, ինչո՞ւ ես զայրացել քո ժողովրդի դեմ, որին քո մեծ զորությամբ դուրս բերեցիր Եգիպտացիների երկրից"» (Ելից 32:11): Երկրորդ Օրենքում ասվում է. «Ես երկրորդ անգամ աղաչեցի Տիրոջը, ինչպես առաջին անգամ. քառասուն օր և քառասուն գիշեր հաց չկերա և ջուր չխմեցի ձեր գործած բոլոր մեղքերի պատճառով» (Բ Օրենք 9:18): Եսթերի գրքում ասվում է. «Մուրթքեն, հիշելով Տիրոջ բոլոր գործերը, աղաչեց Աստծուն և ասաց. "Տե՛ր, Տե՛ր, ամենազո՛ր Թագավոր"» (Եսթեր 13:8): Եսթերն ինքը «աղաչում էր Իսրայելի Տեր Աստծուն՝ ասելով. "Տե՛ր իմ և Թագավո՛ր իմ... "» (նույնը, 14:3):

Աղոթքի օրինակներ

Աղոթքն իր բուն իմաստով գտնում ենք Դանիելի գրքում. «Ազարիան ոտքի ելավ, կրակի մեջ բացեց բերանը և այսպես աղոթեց՝ ասելով. . . » (Դան. 3:25): Ապա Տոբիթում՝ «Ես աղոթեցի վշտացած սրտով՝ ասելով. Դու արդար ես, Տե՛ր, քո բոլոր ճանապարհները ողորմություն են ու ճշմարտություն: Քո դատաստանը միշտ ճշմարիտ է և արդար» (Տոբիթ 3:1-2):

Դանիելից մեջբերված հատվածը ձեռագրում հրեաների կողմից նշանակված է եղել գրչագրական հատուկ մի նշանով, որովհետև այն չկա եբրայերեն բնագրում: Հրեաները ոչ կանոնական մյուս գրքերի շարքում մերժում են նաև Տոբիթի գիրքը: Կմեջբերեմ ուրեմն Աննայի խոսքը Թագավորաց առաջին գրքից. «Աննան աղոթեց Տիրոջը, հեկեկալով լաց եղավ և ասաց. "Զորությունների՛ Տեր, եթե կամենաս նայել քո աղախնի տառապանքին...» և այլն (Ա Թագ. 1:10-11):

Ամբակում մարգարեի գրքում կարդում ենք. «Ամբակում մարգարեի աղոթքը՝ երգով.

Տե՛ր, լսեցի քո ձայնը և վախեցա:
Տե՛ր, նայեցի քո գործերին ու զարհուրեցի:
Քեզ կճանաչեն քո կենդանիների մեջ:
Դու կհայտնվես, երբ տարիները մոտենան» (Ամբ. 3:1):

Այս վերջին օրինակը պարզ ցույց է տալիս, որ աղոթքը փառաբանությանը միացած մի աղերսանք է:

Նույնպես Հովնանի գրքում կարդում ենք. «Հովնանը կետի փորի միջից աղոթեց իր Տեր Աստծուն և ասաց. "Իմ նեղության մեջ ես աղաղակեցի Տիրոջը, և նա ինձ պատասխանեց: Դժոխքի խորքից դու լսեցիր իմ աղաղակները: Դու ինձ գցել էիր ծովերի ամենախոր անդունդները, և ջրի հոսանքներն ինձ պաշարեցին"» (Հով. 2:2-4):

Բարեխոսության օրինակներ

Ահա մի օրինակ աղոթքի երրորդ ձևի վերաբերյալ. Առաքյալը աղոթքը վերագրում է մեզ, բարեխոսությունը՝ Սուրբ Հոգուն, որն ավելի հզոր է ու վայելում է Աստծու վստահությունը, որին նա դիմում է. «Մենք աղոթում ենք և չգիտենք, թե ինչպես պետք է աղոթել, բայց Հոգին ինքը բարեխոս է լինում մեզ անպատում հառաչանքներով: Իսկ նա, որ քննում է սրտերը, գիտե Հոգու խորհուրդները, գիտե, թե ինքը բարեխոսում է ըստ Աստծու կամքի ի նպաստ սրբերի» (Հռոմ. 8:26-27): Սուրբ Հոգին բարեխոսում է թախանձանքով, իսկ մենք սոսկ աղոթում ենք:

Կարող ենք նմանապես բարեխոսություն կոչել Հեսուի աղոթքը: Նա ուզում էր կանգնեցնել արևը Գաբավոթի դիմաց. «Այն օրը, երբ Աստված ամորհացիներին մատնեց իսրայելացիների ձեռքը, երբ նրանց կոտորեց Գաբավոթում, և նրանք ջախջախվեցին Իսրայելացիների առջև, Հեսուն խոսեց Աստծու հետ և ասաց. "Թող արեգակը կանգնի Գաբավոթի վրա, իսկ լուսինը՝ Էլոմի ձորի վրա"» (Հեսու 10:12):

Դատավորաց գրքում, ինձ թվում է, Սամսոնը բարեխոսեց, երբ ասաց. «"Թող ես մեռնեմ փղշտացիների հետ". և նա այնպես ուժեղ սասանեց սյուները, որ տունը փուլ եկավ իշխանների և ամբողջ ժողովրդի վրա, որը գտնվում էր այնտեղ» (Դատ. 16:30): Սուրբ Գիրքը բացահայտ կերպով չի ասում, որ Հեսուն և Սամսոնը բարեխոսեցին, այլ՝ ասացին: Նրանց խոսքերը համարժեք են բարեխոսության, եթե լավ մեկնաբանենք գրվածքը:

Գոհաբանության օրինակներ

Մենք գոհաբանության մի օրինակ ունենք Տիրոջ հետևյալ խոսքի մեջ. «Գոհությո՛ւն քեզ, Հա՛յր, Տե՛ր երկնքի և երկրի, որ ծածկեցիր այս բանը իմաստուններից և գիտուններից և հայտնեցիր ամենից փոքրերին (Ղուկ. 10:21): Բնագրում «խոստովանեմ» բայն այստեղ համարժեք է «գոհանամ» բային:

Աղոթքի այս բոլոր ձևերը նախընտրաբար ուղղված են Քրիստոսին

Կարող ենք աղաչանքներ, բարեխոսություններ և գոհաբանություններ ուղղել նույնիսկ սրբերին: Վերջին երկուսը (բարեխոսություն և գոհաբանություն) ուղղվում են ոչ միայն սրբերին, այլև՝ մարդկանց: Աղաչանքն ուղղվում է միայն սրբերին, օրինակի համար՝ սուրբ Պետրոս և սուրբ Պողոս առաքյալներին, որպեսզի մեզ արժանի դարձնեն ստանալու մեղքերին թողություն տալու այն կարողությունը, որ տրված է իրենց: Այսուհանդերձ, եթե մենք վիրավո-

րել ենք մեկին, որը սուրբ չէ, ապա հենց որ գիտակցում ենք այդ բանը, կարող ենք խնդրել նաև նրան, որ մեզ նեբի մեր հասցրած վիրավորանքը:

Եթե մենք կարող ենք սրբերին ուղղել աղոթքի այս բոլոր ձևերը, ապա առավել ևս պետք է գոհություն մատուցենք Քրիստոսին, որը, Հոր կամքով, մեզ լիացրել է այնքան շատ բարիքներով: Մենք պետք է դիմենք նաև բարեխոսության՝ սուրբ Ստեփանոսի նման ասելով. «Տե՛ր, սա մեղք մի՛ համարիր նրանց» (Գործք 7:60) և ընդօրինակենք լուսնոտ երեխայի հորը, որն աղերսում էր. «Տե՛ր, աղաչում եմ քեզ, գթա՛ իմ որդուն» (Ղուկ. 9:38) կամ ինձ, կամ ուրիշ մեկին:

Աղոթքն ուղղվում է միայն Հայր Աստծուն

15. Եթե խորապես մտածենք, թե ինչ բան է աղոթքը, գուցե կանրադառնանք, որ պետք չէ աղոթել ոչ մի մարդու, նույնիսկ Քրիստոսին, այլ միայն Աստծուն՝ տիեզերքի Հորը, ում մեր Փրկիչն ինքը ուղղեց իր աղոթքը (ինչպես այդ մասին ասացինք վերևում) և մեզ սովորեցրեց աղոթել, որովհետև երբ նրան խնդրում ենք՝ ասելով՝ «Սովորեցրո՛ւ մեզ աղոթել», նա մեզ սովորեցնում է ոչ թե իրեն, այլ Հորն ուղղել աղոթքը. «Հա՛յր մեր, որ երկնքում ես» և այլն (Ղուկ. 11:1):

Արդարև, (ինչպես ես այդ ցույց եմ տվել այլուր)[13] եթե Որդին անջատ է Հորից իր էությամբ և իր անձով, ապա պետք է աղոթել Որդուն և ոչ թե Հորը, կա՛մ մեկին և մյուսին և կա՛մ միայն Հորը: Աղոթել Որդուն առանց Հորը՝ անմտություն կլիներ, կնշանակեր դեմ գնալ ակնհայտ իրականությանը: Եթե պետք է աղոթել երկուսին էլ, ապա մեր աղոթքի մեջ պետք է գործածենք հոգնակի ձևը, ինչպես՝ տվեք, շնորհեք, շնորհ արեք, փրկեք և այլն: Այս ձևակերպումները հաճելի չեն մեզ և Սուրբ Գրքով էլ չեն վկայված: Եզրակացնելով. պետք է աղոթել Աստծուն՝ տիեզերքի Հորը, բայց առանց նրան բաժանելու այն Քահանայապետից, ում նա հաստատեց երդումով. «Նա երդվեց և չի զղջալու. Դու հավիտենական քահանա ես՝ ըստ Մելքիսեդեկի կարգի» (Սաղմ. 110:4):

Հորն ուղղված աղոթքը պետք է անցնի Քրիստոսի միջնորդությունից

Սրբերն իրենց աղոթքների մեջ գոհություն են հայտնում Աստծուն Քրիստոս Հիսուսով: Ուղիղ և ճիշտ աղոթել՝ չի նշանակում աղոթել նրան, ով ինքն է աղոթում, այլ աղոթել նրան, ում մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, մեզ սովորեցրեց կանչել մեր աղոթքներում, այսինքն՝ Հորը: Դրան հակառակ, ոչ մի աղոթք չպետք է ուղղվի Հորը առանց նրան, ինչպես այդ հստակորեն ցույց է տալիս հետևյալ խոսքը. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, ինչ որ իմ անունով խնդրեք իմ Հորից, կտա ձեզ: Մինչև հիմա իմ անունով ոչինչ չխնդրեցիք. խնդրեցե՛ք և կստանաք, որպեսզի ձեր ուրախությունը լինի կատարյալ» (Հովհ. 16:23-24):

Հիսուս չի ասում՝ խնդրեցե՛ք ինձ, և ոչ էլ միայն՝ խնդրեցե՛ք իմ Հորից իմ անունով, նա կտա ձեզ: Մինչև այն օրը, երբ Հիսուս սովորեցրեց այս բանը, ոչ ոք չէր աղոթել Հորը Որդու անունով: Եվ Հիսուս իրավացիորեն կարող էր ավելացնել՝ «Մինչև հիմա իմ անունով ոչինչ չխնդրեցիք»: Ինչքա՜ն ճիշտ էր նրա խոսքը. «Խնդրեցե՛ք և կստանաք, որպեսզի ձեր ուրախությունը լինի կատարյալ»:

Եթե մեկը համոզի ինքն իրեն, որ պետք է աղոթել հենց Քրիստոսին, բայց նրան պաշտելու գաղափարից չփոթված՝

արդարանա Երկրորդ Օրենքում նշված հետևյալ խոսքով, թե՝ «Աստծու բոլոր հրեշտակները պետք է պաշտեն նրան», մենք ընդունում ենք, որ այդ խոսքը վերաբերում է Քրիստոսին: Բայց մենք կպատասխանենք նրան, որ Եկեղեցին ինքը, որ Եսայի մարգարեն Երուսաղեմ է կոչում, պաշտվում է թագավորների և իշխանուհիների կողմից, որոնք գրվածքում դարձել են «նրա խնամակալներն ու ծծմայրերը»:

«Ահա ես իմ ձեռքը բարձրացնում եմ ազգերի վրա
և իմ դրոշը կանգնեցնում կղզիներում:
Նրանք իրենց որդիներին իրենց գիրկն առած,
իրենց դուստրերին ուսերին դրած՝
ետ պիտի բերեն:
Թագավորները նրանց խնամակալներն են դառնալու,
իսկ իշխանուհիները՝ նրանց ծծմայրերը:
Երկրի երեսին պաշտելու են քեզ,
լիզելու են փոշին քո ոտքերի:
Այնժամ կիմանաս, որ ես եմ քո Տերը,
և ինձ ապավինողները չեն հիասթափվի»
(Եսայի 49:22-23):

Հիսուս ի՞նչ էր մտածում, երբ ասում էր. «Ինչո՞ւ ինձ բարի ես կոչում. բարի չէ ոչ ոք, այլ միայն՝ Աստված» (Մարկ. 10:18): Այս խոսքով կարծես նա ուզում էր ասել. «Ինչո՞ւ աղոթում ես ինձ. պետք է աղոթել միայն Հորը, ում ես աղոթում եմ, ինչպես դուք այն սովորում եք սուրբ Գրվածքներում: Դուք չպետք է աղոթեք Քրիստոսին, ում Հայրը հաստատեց ձեզ համար որպես քահանայապետ և դատապաշտպան: Դուք պետք է աղոթեք այդ քահանայապետի՛, այդ դատապաշտպանի՛ միջոցով, նրա՛ միջնորդությամբ, որը կարող է վշտակից լինել ձեզ և Աստծու շնորհով տանել ձեր նեղությունները, որը ձեզ նման ճանաչեց

նույն փորձությունները՝ բացի մեղքից:

Գիտակցե՛ք ուրեմն այն բարիքները, որ դուք ձեռք բերեցիք իմ Հորից, երբ, վերստին ծնվելով, իմ միջոցով ստացաք որդեգրության հոգին, որը ձեզ դարձնում է Աստծու որդիներն ու իմ եղբայրները (Հռոմ. 8:14-15): Արդարև, դուք կարդացել եք այն խոսքը, որ Դավթի բերանով ես ուղղել եմ Հորը, և որը ձեզ է վերաբերում. «Քո անունը հռչակում եմ իմ եղբայրներին, ժողովատեղում փառաբանում եմ քեզ» (Սաղմ. 22:23): Նրանք, ովքեր ունեցան նույն Հայրը, տրամաբանորեն իրենց աղոթքը չպետք է ուղղեն իրենց եղբորը: Ձեր աղոթքները, ինձ հետ և ինձանով, պետք է վերաբերեն միմիայն Հորը:

Աղոթք՝ վստահված Աստծուն

16. Ունկնդիր լինենք ուրեմն Հիսուսի ձայնին, աղոթենք Աստծուն նրա անունով, միաբան լինենք մեր լեզվով, աղոթելու մեր ձևի մեջ չբաժանվենք իրարից: Բաժանված չե՞նք լինի միթե, եթե մեզնից ոմանք աղոթեն Հիսուսին, մյուսներն՝ Աստծուն: Զափազանց պարզությունը սխալի մեջ կգցի նրանց, ովքեր մտածման պակասի կամ քննադատական ոգու հետևանքով աղոթում են որդուն Հոր հետ կամ առանց Հոր:

Թող մեր աղոթքն ուղղվի նրան, որպես Աստծու, մեր բարեխոսությունը՝ որպես Հոր, մեր աղաչանքը՝ որպես Տիրոջ, մեր գոհաբանությունը՝ որպես Աստծու, Հոր և Տիրոջ, բայց ոչ թե ստրուկների մի հոտի Տիրոջ: Հայրը, իրավամբ, Տերն է Որդու և բոլոր նրանց, ովքեր նրանով դարձել են նմանապես իր որդիները: Աստված մեռելների Աստվածը չէ, այլ՝ կենդանիների (Մատթ. 22:32): Նա առավել ևս Տերը չէ անտոհմ ստրուկների, այլ՝ ազատ մարդկանց, որոնք ձերբա-

զատված են սկզբնական մեղքի երկյուղից և որոնք, հանուն սիրո, ընդունում են այլապես երջանկացնող մի օտարացում, քան այն օտարացումը, որ առաջ է գալիս վախից: Աստծու սպասավորներն ու որդիները իրենց հոգում կրում են մի նշան, որ տեսանելի է միայն նրան, ով քննում է մարդկանց սրտերի խորքը:

Երկնային բարիքներ և երկրային բարիքներ

Աստծուց խնդրել երկրային սնոտի բարիքներ՝ նշանակում է վշտացնել նրան, ով մեզ պատվիրում է իրենից խնդրել երկնային, արժեքավոր բարիքներ և անարժան է համարում տալ այն, ինչ երկրային է ու չքոտի: Ձեզնից մեկը գուցե առարկի ինձ՝ ասելով, թե Աստված նյութական բարիքներ է շնորհում իր սրբերին՝ ի նկատի ունենալով նրանց աղոթքները կամ Ավետարանի այն խոսքը, թե երկրային և երկրորդական բարիքները խոստացված են որպես հավելյալ բարիք: Ահա իմ պատասխանը.

Երբ մեկը մեզ տալիս է նյութական մի առարկա, չենք կարող ասել, թե նա մեզ տալիս է այդ առարկայի ստվերը (որովհետև նա մտադրություն չունի բնավ մեզ տալու բաժանված երկու բաներ՝ առարկան և նրա ստվերը, այլ՝ տրված առարկան, որին անհրաժեշտորեն հետևում է նրա ստվերը): Նույնպես եթե որոշ բարձրությունից դիտենք այն կարևոր շնորհները, որ Աստված տալիս է մեզ, ապա կարող ենք ասել, որ նյութական բարիքները այն ստվերներն են միայն, որոնք սրբերի համար, նրանց օգտին և ըստ Աստծու տնօրինության ուղեկցում են հոգևոր շնորհներին, որ անսահման են և երկնային: Տերը միշտ իմաստությամբ է գործում, եթե նույնիսկ չգիտենք նրա տված շնորհներից յուրաքանչյուրի շարժառիթը:

Հին Կտակարանը լուսաբանում է Աստծու գործելու այս եղանակը

Աննայի հոգին, ավելի քան նրա մարմինը, ձեռք բերեց իր ամլության վախճանը իր որդու՝ Սամվելի ծննդով: Եզեկիայի սերունդը լույս աշխարհ եկավ ավելի շուտ Սուրբ Հոգուց, քան մարմնից: Եսթերը, Մուրթքեն և իսրայելացի ժողովուրդը ազատագրվեցին ավելի շուտ հոգևոր որոգայթներից, քան Համանի և նրա անօրեն գործակիցների նենգ դավադրությունից: Ավելի մեծ քաջություն հարկավոր եղավ Հուդիթին՝ հաղթելու համար թշնամուն, որն ատելությամբ էր լցված իր հոգու դեմ, քան պարտության մատնելու Հողոփեռնեսին:

Ո՞վ կվարաներ ընդունել, որ այն հոգևոր օրհնությունը, որ Իսահակը խոստացել էր բոլոր սրբերին և որ ասում էր Հակոբին, թե՝ «Թող Աստված տա քեզ երկնային ցողը», ավելի առատորեն կտրվեր Անանիային ու նրա ընկերներին, քան այն նյութական ցողը, որ հանգցրեց Նաբուքոդոնոսորի կողմից վառված կրակը: Դանիելը նախ փչրեց անտեսանելի առյուծների ատամները, որոնք հարձակվում էին իր հոգու վրա, և ապա միայն սանձեց տեսանելի առյուծների կատաղությունը, որի մասին խոսում է Աստվածաշունչը: Մեզնից ո՞վ խույս չի տվել մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի կողմից նվաճված հրեշից՝ աղոթելով Հովնանի նման, որը լցվել էր Սուրբ Հոգով և իր հերթին դարձել սուրբ:

Հոգևոր բարիքներն ու նրանց ստվերը

17. Զարմանալի չէ, որ նրանք, ովքեր ստանում են, այսպես ասած, նման ստվերներ գցող հոգևոր բարիքներ, հարկադրաբար ձեռք չեն բերում նույնօրինակ մի ստվեր, իսկ

ոմանք նույնիսկ ոչ մի ստվեր ձեռք չեն բերում: Ովքեր ուսումնասիրություններ են կատարում, նույն երևույթը գտնում են երկրային մարմինների մեջ: Արեգակնային ժամացույցի սլաքները օրվա որոշ պահերին ոչ մի ստվեր չեն գցում, իսկ այլ պահերին նրանց ստվերը նեղանում կամ երկարում է: Ուրեմն չպետք է զարմանանք, եթե երկնային իմաստությունը, որ մեզ տալիս է ամենաթանկագին բարիքները, մեզ անհայտ խորհրդավոր պատճառներով, ըստ հանգամանքների կամ ըստ այդ բարիքներն ստացողի տրամադրության, որոշի, որ այդ բարիքներին չուղեկցի ոչ մի ստվեր կամ ոմանց մոտ դրանց ուղեկցի ավելի մեծ կամ ավելի փոքր մի ստվեր:

Ով փնտրում է արևի բարերար ճառագայթները, դրանք ունենալուց հետո բնավ չի մտահոգվի դրանց ստվերով, քանի որ ձեռք է բերել էականը: Ի՞նչ նշանակություն ունի նրա համար ստվերի ներկայությունը կամ բացակայությունը, ստվերի ավելի երկար կամ ավելի կարճ լինելը: Նույնն է պարագան նաև մեզ համար. եթե մենք ունենք հոգևոր բարիքները, եթե Աստծու կողմից լուսավորված ենք, թե ի՛նչ միջոցներով կարելի է ստանալ ճշմարիտ հարստությունները, ապա մեզ համար կարևորություն չունի այնքան աննշան ու չնչին մի բան, ինչպիսին ստվերն է. երկրային բոլոր բարիքները, մարմնական բոլոր հրապույրները ներկայացնում են սոսկ թեթև և անցողիկ մի ստվեր՝ համեմատած փրկության և սրբության այն հարստությունների հետ, որ մեզ շնորհում է տիեզերքի Արարիչը: Ինչպե՞ս կարելի է համեմատել նյութական բարիքները «խոսքի և գիտության հարստությունների հետ» (Ա Կորնթ. , 1:5): Ո՞ր մարդը, եթե միայն նա խելքը չի կորցրել, կշեռքի մեջ կդներ մսի և ոսկորի հետ կապված մարմնի առողջությունը մտքի առողջության, բանականության ուժի և դատողության ազատության հետ: Մարմնական բոլոր տառապանքները, Աստծու շնորհած լույսի համեմատությամբ, ներկայացնում են միայն մի խայթվածք, ոչ իսկ մի խայթվածք:

Ով ուշադիր նայում է Աստծու Որդու սիրելի նշանածի գեղեցկությանը (ուզում եմ ասել՝ նրա ծաղկած հոգու գեղեցկությանը, որ գերազանց է, քան երկինքն ու երկիրը), կկարմրի, նույն «գեղեցկություն» բառը գործածելով մի կնոջ, մի երեխայի կամ մի տղամարդու համար, որովհետև մարմինն ունակ չէ ճշմարիտ գեղեցկության, քանի որ ապականություն է: Ամեն մարմին նման է դաշտային խոտի, և այն փայլը, որ շլացնում է մեր աչքերը, երբ նայում ենք կնոջ կամ մի փոքրիկ երեխայի մարմնի գեղեցկությանը, կարող ենք համեմատել, ըստ մարգարեի խոսքի, վաղանցուկ մի ծաղկի հետ. «Ամեն մարմին նման է խոտի, և նրա ամբողջ գեղեցկությունը նման է դաշտային ծաղկի: Խոտը չորանում է, ծաղիկը՝ թառամում. բայց Աստծու խոսքը մնում է հավիտյան» (Եսայի 40:6-9):

Ո՞վ կխոսի դեռ ազնվության մասին այն իմաստով, որ մարդիկ այս բառը սովորաբար գործածում են՝ բնորոշելու համար Աստծու որդիների ազնվությունը: Նա, ով տեսել է Քրիստոսի թագավորությունը, ունայնություն չի՞ համարի երկրի բոլոր թագավորությունները: Երբ մենք մտքի աչքերով հստակորեն տեսնենք (գոնե այն չափով, որ մարմնի մեջ դեռևս բանտարկված հոգին կարող է տեսնել) հրեշտակների բանակը և նրանց մեջ՝ հրեշտակապետերին, որոնք Տիրոջ զորքի առաջնորդներն են, տեսնենք նաև այն տերությունները, իշխանություններն ու զորությունները, որոնք իշխում են երկնքում, երբ հասկանանք, որ մի օր կկարողանանք փառքով հավասարվել նրանց Հայր Աստծու մոտ, ինչպե՞ս կարող ենք չարհամարհել (թեև այս պատ-

կերները իրականության դիմաց ստվերից էլ աղոտ լինեն), որպես անարժան և անպետք բաներ, այն ամենը, որոնցով հիանում են տգետ և խակամիտ մարդիկ, ու չվախենալ, որ կկորցնենք ճշմարիտ իշխանություններն ու աստվածային զորությունները:

Ուրեմն պետք է աղոթենք. պետք է աղոթենք, որպեսզի ձեռք բերենք էական, իսկապես մեծ բարիքները՝ երկնային բարիքները, և Աստծու կամքին թողնենք տնօրինել այդ բարիքներին ուղեկցող ստվերները, որովհետև, նախքան մեր խնդրանքը, Նա գիտե, թե ի՛նչ բանի կարիք ունենք մենք:

II. ՀԱՅՐ ՄԵՐ-Ի ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

18. Մենք բավականաչափ բացատրեցինք այն ամենը, ինչ վերաբերում է աղոթքին՝ ըստ այն իմացության, որ ստացել ենք Աստծուց Հիսուս Քրիստոսով (Հուսով եմ նաև՝ Սուրբ Հոգով. ընթերցողին է մնում դատել այդ մասին): Այժմ պիտի շարունակենք մեր առաջադրանքը և վերլուծենք մեր Տիրոջ սովորեցրած աղոթքի բովանդակությունն իր ամբողջ խտությամբ:

«Հայր մեր»-ի երկու տարբերակների համեմատությունը

Ամենից առաջ նկատենք, որ Մատթեոս և Ղուկաս ավետարանիչները երկուսն էլ վերարտադրել են աղոթքի բանաձևը, որ մենք օգտագործելու ենք այստեղ: Ահա Մատթեոսի բերած բնագիրը.

Հա՛յր մեր, որ երկնքում ես,
Թող սո՛ւրբ լինի քո անունը,
քո թագավորությո՛ւնը թող գա.
քո կա՛մքը թող լինի երկրի վրա,
ինչպես որ երկնքում է՛:
Մեր հանապազօրյա (հոգևոր) հացը տո՛ւր մեզ այսօր,
Ների՛ր մեզ մեր պարտքերը,
Ինչպես որ մենք ենք ներել մեր պարտապաններին,
և մի՛ տար մեզ փորձության,
այլ փրկի՛ր մեզ չարից (Մատթ. 6:9-13):
Եվ ահա Ղուկասի բերած բնագիրը.

Հա՛յր, սուրբ թող լինի քո անունը:
Քո արքայությո՛ւնը թող դա:
Մեր հանապազօրյա (հոգևոր) հացը տո՛ւր մեզ ամեն օր:
Ների՛ր մեզ մեր մեղքերը,
քանզի մենք ներում ենք մեր բոլոր պարտապաններին:
Եվ մի՛ տար մեզ փորձության (Ղուկ. 11:2-4):

Նրանք, ովքեր գտնում են, որ աղոթքի այս երկու բնագրերը նույնական են, պետք է դիտել տանք, որ որոշ թվով նմանություններ չպետք է ծածկեն տարբերությունները, ինչպես դա հաստատելու ենք մեր վերլուծությամբ:

Ավելին, հնարավոր չէ ընդունել, որ Հիսուս Քրիստոս սովորեցրած լինի նո՛ւյն աղոթքը «լեռան վրա, որտեղ նա վերադարձավ ժողովրդի բազմության առաջ, երբ որ սկսեց ուսուցանել իր մոտ գտնվող աշակերտներին» (Մատթ. 5:1), որովհետև Երանիների մասին իր քարոզի համատեքստում և դրան հաջորդող պատգամներում է, որ Մատթեոսը ներկայացնում է աղոթքը, և միաժամանակ, ըստ Ղուկասի, այն վայրում, «որտեղ իր աղոթքը վերջացնելուց հետո նրա աշակերտներից մեկն ասում է նրան. ''Սովորեցրո՛ւ մեզ աղոթել, ինչպես Հովհաննեսը սովորեցրեց իր աշակերտներին''» (Ղուկ. 11:1):

Ինչպե՞ս կարելի է ընդունել, որ նույն քարոզը կրկնված լինի այնպես, ինչպես որ կա, այստեղ՝ առանց որևէ հարցումի պատասխանելու, և այնտեղ՝ ի պատասխան աշակերտներից մեկի խնդրանքի: Մեզ կասեն դուցե, թե երկու աղոթքներն էլ նույն բովանդակությունն ունեն, թե դրանք նույնն են, նախ՝ արտասանված և պարզաբանված ժողովրդի բազմությանը, ապա՝ կրկնված մի աշակերտի, որ կարող էր բացակայած լինել այն պահին, երբ Հիսուս արտասանել էր Մատթեոսի կողմից մեջ բերված քարոզը, կամ այն մոռացած լինել ժամանակի ընթացքում: Անկասկած նախընտրելի է այս երկու աղոթքները համարել տարբեր՝ իրենց ընդհանուր կետերով հանդերձ: Մարկոսի մոտ ինչքան էլ փնտրենք այդ նույնությունը, միևնույն է, այնտեղ չենք գտնի նմանօրինակ աղոթքի ոչ մի հետք:

Նախապատրաստություն աղոթքի

19. Վերևում ասացինք, որ աղոթքին պետք է նախորդեն կամ ուղեկցեն որոշ տրամադրություններ: Մովսեսի կողմից մեջ բերված աղոթքը վերլուծելուց առաջ տեսնենք ուրեմն, թե ի՛նչ է ասում մեր Փրկիչը աղոթքի մասին ընդհանրապես. «Երբ աղոթեք, չլինե՛ք կեղծավորների նման, որոնք սիրում են ժողովարաններում և հրապարակների անկյուններում աղոթել ոտքի կանգնած, որպեսզի մարդկանց երևան: Ճշմարիտ եմ ասում ձեզ, ա՛յդ իսկ է նրանց վարձը: Այլ դու, երբ ուզենաս աղոթել, մտի՛ր քո սենյակի ամենածածուկ անկյունը, բանալիով փակի՛ր քո դուռը և աղոթի՛ր քո Հորը, որ ներկա է. և քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կհատուցի քեզ հայտնապես:

Աղոթք անելիս նույն բանը հաճախակի մի՛ կրկնեք, ինչպես հեթանոսները, որոնք կարծում են, թե իրենց շատ խոսքերի պատճառով լսելի կլինեն, մի՛ նմանվեք նրանց, որովհետև ձեր Հայրը գիտե, թե ինչ բանի կարիք ունեք, նախքան որ դուք նրանից մի բան խնդրեք: Արդ, դուք այսպե՛ս աղոթեցեք» (Մատթ. 6:5-9)

Հաճախ մեր Փրկիչը սնափառությունը համարում է մահացու մեղք: Նա նույն վերաբերմունքը ցույց է տալիս նաև այստեղ՝ աղոթքի ժամանակ արգելելով ընդօրինակել կեղծավորների վարմունքը, որովհետև կեղծավորություն է մարդկանց առջև գոռոզանալ բարեպաշտությամբ և առատաձեռնությամբ: Հիշեցե՛ք. «Դուք ինչպե՞ս կարող եք հա-

վատալ, երբ մեկդ մյուսից եք փառք առնում և չեք որոնում այն փառքը, որ գալիս է միակ Աստծուց» (Հովհ. 5:44):

Արհամարհե՛ք այն ամբողջ փառքը, որ մարդկանցից է գալիս, թեկուզ դա լինի մի գեղեցիկ արարքի վարձը. որոնեցե՛ք այն փառքը, որ ճշմարտապես արժանի է այդ անվանը, այն փառքը, որ միայն Աստված է շնորհում այն մարդկանց, որոնք արժանի են դրան, և շնորհում այնպիսի առատաձեռնությամբ, որ գերազանցում է ամեն արժանիք: Այսպես, ուրեմն, մի արարք, որ ինքնին գեղեցիկ է և արժանի ամեն դրվատանքի, արժեքազրկվում է հենց որ մենք այն կատարում ենք երևալու և մարդկանց կողմից փառավորվելու համար: Աստված չի վարձատրում այդպիսի արարքը:

Եթե Հիսուսի ամեն մի խոսքը ճշմարիտ է, ապա այն խոսքը, որ նա երդումով է արտասանում, առավել ևս ճշմարիտ է: Արդ, նրանց մասին, ովքեր թվում է, թե բարի գործ կատարում են մարդկանց կողմից փառք ձեռք բերելու համար, կամ սիրում են աղոթել ժողովարաններում և հանրային հրապարակների անկյուններում, որպեսզի երևան մարդկանց, այդպիսիների մասին նա ասում է. «Ճշմարիտ եմ ասում ձեզ, ա՛յդ իսկ է նրանց վարձը» (Մատթ. 6:5):

Նույնն է Ավետարանում հիշված մեծահարուստի պարագան. իր մահկանացու կյանքի ընթացքում նա ձեռք էր բերել շատ ունեցվածք: Այդպիսի առատ ունեցվածք նա այլևս չի կարող ձեռք բերել անդենական կյանքում: Ով իր վարձն ստանում է նրա համար, որ առատաձեռն է եղել կամ աղոթել է, այդպիսի մեկը Հոգո՛վ չի ցանել, այլ՝ մարմնով. ուրեմն նա կհնձի ապականություն և ոչ թե հավիտենական կյանք: Մարմնո՛վ է ցանում նա, ով ողորմություն է տալիս փողով ու թմբուկով, ժողովարաններում և քառուղիներում, որպեսզի գովաբանվի մարդկանցից ինչպես մեկը, որ սիրում է ոտքի կանգնած աղոթել ժողովարաններում և հանրային հրապարակներում ի ցույց մարդկանց՝ բարեպաշտության և սրբության համբավ ձեռք բերելու համար:

Աղոթքը քառուղիներում

Ովքեր հետևում են լայն և ընդարձակ ճանապարհին, որը տանում է դեպի կորուստ և որը, իրականում, խոտորնակ և մանվածապատ ճանապարհ է (երբե՛ք ուղիղ, այլ միշտ բեկված), որևէ օգուտ չեն կարող ստանալ՝ աղոթելով հանրային հրապարակների անկյուններում: Ցուցամոլությունն ու պարծենկոտությունը նրանց մղում են տնկվել կանգնել ոչ միայն մեկ տեղ, այլ՝ հազարավոր տեղեր: Այդ տեղերում իրենց աստվածային կոչումից շեղված մարդիկ հիանում են նրանցով և այդպիսիներին դասում երանելիների շարքին՝նրանց խաբուսիկ բարեպաշտության համար:

Որքա՜ն մարդիկ, մինչև անգամ աղոթքի մեջ, թվում են «ավելի շուտ հեշտասեր, քան աստվածասեր» (Բ Տիմ. 3:4): Ակնարկում եմ նրանց, որոնք աղոթքը զուգակցում են հարբեցողությանը և խնջույքներին, այսինքն՝ նրանց, որոնք ոտքի կանգնած աղոթում են հանրային հրապարակների անկյուններում, որովհետև բոլոր նրանք, ովքեր փնտրում են լայն ճանապարհը, անպայման շեղվում են Հիսուս Քրիստոսի ճանապարհից:

Աղոթել եկեղեցում, աղոթել ժողովարանում

20. Տարբերություն կա եկեղեցու և ժողովարանի միջև: Եկեղեցին չունի ոչ մի արատ, ոչ մի խորշոմ կամ նման բաներից ոչինչ: Նա սուրբ է և անարատ (Եփ. 5:27): Նրա մոտ

տեղ չկա պոռնկորդու, ներքինու կամ ամորձատվածի համար, առավել ևս եգիպտացու կամ իդումեացու համար, ոչ էլ նրանց զավակների, եթե ոչ նրանց երրորդ սերնդի համար: Մովաբացիներն ու ամոնացիները այնտեղ չեն մտնելու «մինչև նրանց տասներորդ սերունդը կամ հավիտենապես» (Բ Օրենք 23:1, 3:7-8): Ժողովարանը, որի մասին ես մտածում եմ, այն ժողովարանն է, որը կառուցվել է հռոմեացի մի հարյուրապետի կողմից Հիսուսի գալստից առաջ: Աստծու Որդին այնտեղ վկայեց իր հավատի մասին, որը իր նմանը չուներ ամբողջ Իսրայելում:

Տարբերությունը, ասում եմ, այն է, որը բաժանում է ժողովարաններում աղոթել սիրողին (ինչ որ գրեթե համարժեք է հանրային հրապարակների անկյուններում աղոթելուն) և սրբին: Այս վերջինը ոչ միայն սիրում է աղոթել, այլ սիրում է միայն աղոթքը, բայց ոչ թե ժողովարաններում, այլ՝ եկեղեցիներում, ոչ թե ճանապարհների քառուղիներում, այլ՝ ուղիղ ճանապարհի վրա, որը նեղ է ու խորդուբորդ, ոչ թե մարդկանց երևալու, այլ՝ գտնվելու համար իր Տիրոջ՝ Աստծու ներկայությամբ: Նա նման է Սուրբ Գրքում հիշատակված այն արու զավակին, որը մտածում է իր փրկության տարվա մասին և հարգում հետևյալ պատվիրանը. «Տարին երեք անգամ քեզ մոտ գտնվող բոլոր արուները ներկայանալու են Տեր Աստծու առջև» (Բ Օր. 7:16):

Աղոթել սենյակում ծածուկ

Այժմ պետք է վերլուծենք հետևյալ արտահայտությունը: Մի բան, որ սոսկ արտաքին նշմարանք է, երևույթ, չի կարող կոչվել գեղեցիկ. դա անհաստատ մի ներկայություն է, մի պատկեր, որ գրավում է մարդուս երևակայությունը, բայց խաբուսիկ է: Թատրոնում, բեմահարթակի վրա դերասանները այլ բան չեն անում, քան կատարում են միայն մեկ ուրիշի դերը: Նույնն է պարագան նաև նրանց համար, ովքեր ուզում են արդար երևալ. դրանք արդարության խեղկատակներ են, որոնք իրենց աճպարարի դերն են կատարում իրենց թատերաբեմերում, այսինքն՝ ժողովարաններում և փողոցի անկյուններում:

Կատակերգու չէ նա, ով չի ծածկվում փայլուն, կեղծ պաճուճանքներով, այլ փնտրում է միայն իր խղճի վկայությունը այլապես պահանջկոտ մի բեմահարթակում, որ այն ծածուկ սենյակն է, ուր նա մտնում է և արգելափակվում իր կուտակած բոլոր հարստություններով, որոնք իր իմաստության և ճանաչողության գանձն են կազմում: Այնտեղ, առանց դուրս նայելու, միանգամայն կտրվելով արտաքին աշխարհից, փակում է իր զգայարանների դռները՝ շեղվելու համար զգայականից և արգելելու, որ այն կլանի իր միտքը: Այնուհետև նա կանչում է Հորը, որը ոչ միայն չի հեռանում և չի լքում այդ օթևանը, այլ բնակվում է այնտեղ իր միածին Որդու հետ: «Ես և իմ Հայրը, - ասում է Հիսուս, - կգանք նրա մոտ և այնտեղ կհաստատենք մեր օթևանը» (Հովհ. 14:23):

Աղոթել այս ձևով՝ ակնհայտ իրողություն է, նշանակում է կանչել ոչ միայն ճշմարիտ Աստծուն, այլև Հորը, որը մեզ համարում է իր որդիները: Նա չի լքում մեզ, այլ բնակվում է մեր մենարանում, հսկում նրա վրա, ավելացնում մեր գանձերը, պայմանով որ խնամքով փակվի դուռը:

Հարկավոր է աղոթել՝ խուսափելով շատախոսությունից

21. Աղոթել՝ չի նշանակում հաճախակի կրկնել նույն բանը, այլ՝ խոսել Աստծու հետ: Մենք նույն բաներն ենք

կրկնում, երբ զգույշ չենք լինում ինքներս մեր նկատմամբ, ուշադրություն չենք դարձնում մեր արտասանած խոսքերին, երբ աղոթելիս տարվում ենք այնպիսի գձուձ և պախարակելի գործերով, խոսքերով և մտքերով, որոնք անարժան են Աստծու սրբությանը: Աղոթքի մեջ շատախոս եղողը հայտնվում է ավելի տհաճ և դժվարին կացության մեջ, քան ժողովարանի այն աշակերտը, որի մասին խոսվեց վերևում: Նա բռնում է այնպիսի մի ճանապարհ, որն ավելի աղետաբեր է, քան հանրային հրապարակները, նա նույնիսկ իր առաքինությամբ չի փրկում արտաքին երևույթները: Ավետարանի խոսքով՝ միայն հեթանոսներն են «բարբաջում», որոնք չգիտեն խնդրել երկնային բարիքները և վազում են նյութական և զգայական բարիքների հետևից: «Հեթանոսի նման շաղակրատել» է նշանակում երկրային և սնոտի բարիքներ խնդրել Տիրոջից, որը բնակվում է երկնքում և երկնքից էլ վերև գտնվող օթևաններում:

Ցրվածությունից դեպի միակ բարին

Ով շատ է խոսում, դատարկ է խոսում, ով դատարկ է խոսում, շատ է խոսում: Չկա միություն նյութի և մարմինների մեջ: Ինչ որ մի է երևում՝ մասնատվում, բաժանվում, ստորաբաժանվում է անհուն և անսահման մասերի, որոնք կորցրել են միության հատկությունը: Մեկ է բարին, բազում է չարը, մեկ է ճշմարտությունը, բազում է սխալը: Մեկ է ճշմարիտ արդարությունը, բազում են նրա նմանակները: Մեկ է Աստծու իմաստությունը, բազում է «այս աշխարհի իշխանների իմաստությունը» (Ա Կորնթ. 2:16): Մեկ է Աստծու խոսքը, բազում են Աստծուն օտար խոսքերը:

Ով բազմապատկում է իր խոսքերը, չի խուսափում մեղքից, ով կարծում է, թե լսելի է դարձել բազում խոսքերով, պատրանքով է օրորվում: Ուրեմն զգուշանանք հեթանոսներին նմանվելուց, որոնք իրենց աղոթքը ունայնությամբ և խոսքերի առատությամբ են լցնում այն օձի օրինակով, որի մասին խոսում է սաղմոսերգուն (Սաղմ. 58:4): Աստված բոլոր մարդկանց ընդհանուր Հայրն է, նա գիտե իր զավակների կարիքները, երբ հարցը վերաբերում է իր Հայրական գիտության արժանի բարիքներին:

Ով չգիտե Աստծուն՝ չգիտե Աստծուն արժանի բաները, չգիտե իր ճշմարիտ կարիքները: Ինչ որ նա պահանջում է, դա հաճախ արատի պահանջն է: Սրան հակառակ, ով ձգտում է բարձրագույն և աստվածային արժեքներին, դրանք կստանա նրանից, ով միաժամանակ Աստված է և Հայր, քանի որ նա գիտե, թե ինչ է մեզ պետք, նախքան որ մենք մի բան խնդրենք նրանից:

Մենք բացատրեցինք, թե Տիրոջ աղոթքով ի՛նչ է մեջ բերված Մատթեոսի ավետարանում: Այժմ տեսնենք, թե ի՛նչ է բուն աղոթքը:

ՀԱՅՐ ՄԵՐ. . .

22. Տեղին է խնամքով քննել, թե արդյոք Հին Կտակարանում գոյություն ունի՞ գոնե մեկ աղոթք, ուր Աստված կանչված լինի Հայր անունով: Մինչև հիմա, հակառակ մեր բոլոր պրպտումներին, այդպիսի աղոթք դեռ չենք գտել: Չենք ուզում ասել, որ Աստված այնտեղ Հայր չի կոչվել, կամ ճշմարիտ հավատացյալները Աստծու որդիներ չեն կոչվել:

Բայց ոչ մեկ տեղ աղոթքի մեջ Աստված չի կանչվել որպես Հայր՝ ըստ նրա հանդեպ լիակատար վստահություն ներշնչող այն արտահայտության, որ մեր Փրկիչը փոխանցել է մեզ:

Պատահում է հաճախ, որ Աստված կոչվի Հայր, իսկ նրա խոսքին անսացողները՝ որդիներ, ինչպես, օրինակ, Երկրորդ Օրենքում. «Դու լքեցիր քեզ ծնած քո Աստծուն, մոռացար քեզ ստեղծած քո Տիրոջը» (Բ Օր. 32:18): Եվ տակավին՝ «Մի՞թե նա չէ՞ քո Հայրը, որ ժառանգեց քեզ, արարեց քեզ և ստեղծեց» (Բ Օր. 38:6): Եվ մի քիչ ներքև՝ «Իմ որդիները կորցրեցին հավատը» (Բ Օր. 32-10): Եսայի մարգարեի գրքում կարդում ենք. «Ես զավակներ ծնեցի, որդիներ մեծացրի, իսկ նրանք ինձ լքեցին» (Եսայի 1:2): Մաղաքիայում՝ «Որդին պատվում է իր Հորը, և ծառան երկնչում է իր Տիրոջից: Արդ, եթե ես ձեր Հայրն եմ, ապա ո՞ւր է իմ պատիվը, իսկ եթե ձեր Տերն եմ, ո՞ւր է այն հարգալից երկյուղը, որ պարտական եք ինձ» (Մաղ. 1:6):

Ուրեմն, եթե Հայր են կոչում Աստծուն, իսկ որդիներ՝ նրանից ծնվածներին, որոնք հավատում են նրա խոսքին, ապա դուրս է գալիս, որ Հին Կտակարանում ոչ մի տեղ որոշակի և հավաստի կերպով հաստատված չէ հորից որդի այդ ծննդակարգը: Մեր մեջ բերած հատվածները ցույց են տալիս, որ այդ որդիները, որոնց մասին խոսվում է, ավելի շուտ հպատակներ են, քան որդիներ: Արդ, Պողոս առաքյալի վկայության համաձայն՝ «Որքան ժամանակ որ ժառանգը դեռահաս է, ոչնչով չի տարբերվում ծառայից, թեպետև ամեն ինչի տեր է. նա դրվում է խնամակալների և վերակացուների ձեռքի տակ մինչև իր հոր կողմից սահմանված տարիքը» (Գաղ. 4:2 և 3): Մեր Տեր Հիսուս Քրիստոսի մարդեղությամբ հասել է ժամանակների լրումը, երբ որդեգրություն են ստանում բոլոր նրանք, ովքեր բարեհաճ են և բարյացակամ, ինչպես որ ուսուցանում է սուրբ Պողոսը. «Դուք չստացաք ծառայության հոգի վերստին երկյուղի մեջ ընկնելու համար, այլ ստացաք որդեգրութեա՛ն հոգի, որը մեզ աղաղակել է տալիս՝ Աբբա՛, Հա՛յր» (Հռոմ. 8:15):

Իսկ սուրբ Հովհաննեսի ավետարանն ասում է. «Իսկ բոլոր նրանց, ովքեր ընդունեցին նրան, իշխանություն տվեց լինելու Աստծու որդիներ, նրանց, որոնք հավատում են իր անվանը» (Հովհ. 1:12): Այս որդեգրության հոգու պատճառով սուրբ Հովհաննեսի Ընդհանրական թուղթը Աստծու զավակների մասին անում է հետևյալ հաստատումը. «Ամեն ոք, ով Աստուց է ծնված, մեղք չի գործում, որովհետև նա իր մեջ կրում է աստվածային սերմը. նա չի կարող մեղանչել, որովհետև Աստծուց է ծնված» (Հովհ. Ա Ընդհ. 3:9):

Երրորդության ծավալը

Այժմ խորհրդածենք սուրբ Ղուկասի կողմից մեջ բերված խոսքերի իմաստի մասին. «Երբ դուք աղոթքի կանգնեք, ասացե՛ք՝ Հա՛յր»: Եթե մենք հարազատ, օրինական որդիներ չենք, ապա զգուշանանք Նրան տալ այս անունը: Այդ դեպքում մենք փորձության մեջ կընկնենք՝ մեր բոլոր մեղքերի վրա ավելացնելով նաև ամբարշտության մեղքը: Ահա՛ այս մասին իմ մտածումը. սուրբ Պողոսը կորնթացիներին ուղղած իր առաջին թղթում ասում է. «Ոչ ոք չի կարող ասել՝ «Հիսուս Տեր է», եթե ոչ՝ Սուրբ Հոգու ներգործությամբ, և ոչ ոք, ով խոսում է Աստծու Հոգու ներգործությամբ, չի ասի՝ նզովյալ է Հիսուս» (Ա Կորնթ. 12:3): Սուրբ Հոգի և Հոգի բառերը հոմանիշ են: Դա նշանակում է, որ «Սուրբ Հոգու ներգործությամբ Տեր ասելը» այնքան էլ պարզ չէ: Հազարավոր կեղծավորներ, հերետիկոսների մի ամբողջ բանակ և երբեմն նույնիսկ դևեր, որոնք պարտվել են Տիրոջ անվան զորությամբ, բարձրաբարբառ գործածել են այս արտահայտությունը: Ոչ ոք չի համարձակվի հաստատել, թե դրանք բոլորն էլ ասել են՝ «Տեր Հիսուս՝ Սուրբ Հոգով»:

Նրանք չէին կարող ճշմարտապես ասել՝ Տեր Հիսուս, որովհետև նրանք, ովքեր ծառայում են Բան Աստծուն, և որոնց գործերը չեն հռչակում ուրիշ Տեր, նրա՛նք միայն ճշմարտապես հաստատում են, որ Հիսուս Տեր է: Եթե այս այսպես է արդարների պարագայում, ապա, սրան հակառակ, մեղավորներն իրենց օրինազանցություններով հայհոյում են Բան Աստծուն, և նրանց գործերը մեծաբարբառ աղաղակում են՝ նզովյալ է Հիսուս:

Բայց նրանք՝ Աստծուց ծնվածները,որոնք մեղք չեն գործում և իրենց մեջ կրում են աստվածային սերմը, հեռանում են մեղքից և իրենց կյանքով ու վարմունքով հայտարարում. «Հա՛յր մեր, որ երկնքում ես»: Սուրբ Հոգին ինքն է միանում նրանց հոգուն՝ հաստատելու համար, որ նրանք Աստծու որդիներ են, նրա ժառանգները և ժառանգակիցները Քրիստոսի: Նրանք տառապում են Նրա հետ և հույս ունեն փառավորվելու (Հռոմ. 8:16-17):

Այսպիսիք, իրենց վարքի պատճառով, կես-բերան չեն ասում՝ Հա՛յր մեր: Նրանք իրենց ամբողջ սրտով, որ աղբյուր է բարի գործերի, «հավատում են՝ հասնելու համար արդարության» և կատարյալ միաբանությամբ «խոստովանում բերանով՝ հասնելու համար փրկության» (Հռոմ. 10:10):

Հոր պատկերը

Նաև նրանց բոլոր գործերը, բոլոր խոսքերն ու բոլոր մտածումները, որ Բանն Աստված կերպարանավորում է իր նմանությամբ, արտացոլում են այն անտեսանելի Աստծու և Արարչի պատկերը, որն «իր արեգակը ծագեցնում է չարերի ու բարիների վրա և իր անձրևը թափում արդարների և մեղավորների վրա» (Մատթ. 5:45): Այդպիսով նրանք իրենց մեջ կրում են Աստծու պատկերը:

Սրբերը, ուրեմն, Պատկերի պատկերն են. Որդին լինելով Պատկերը՝ նրանք այնուհետև արտացոլում են Նրա ծննդակարգը ոչ թե պարզապես և արտաքին նմանությամբ, այլ ներքին խորունկ նմանությամբ: Նրանք կերպարանափոխվում են հոգեկան վերանորոգությամբ և ի վերջո ներքուստ սերտորեն նմանվում Նրան, ով հայտնվում է փառավոր մարմնի մեջ:

Եթե այսպիսին է այն մարդկանց դիմանկարը, որոնք ճշմարտապես ասում են «Հա՛յր մեր, որ երկնքում ես», ապա ակնհայտ է, որ նա, ով մեղք է գործում, ինչպես սուրբ Հովհաննեսն է արտահայտվում իր Ընդհանրական թղթում, այդ՝ Սատանայից է, «որովհետև Սատանան մեղանչող է ի սկզբանե» (Ա Հովհ. 3:8): Աստծու սերմը, որ մնում է վերածնված մարդու հոգու մեջ, մեղքի դեմ վնասազերծում է այն մարդկանց, որոնք վերարտադրում են իր Որդու պատկերը: Բայց Սատանայի սերմը ապականում է մեղանչող մարդկանց, և նրա ներկայությունն արգելք է լինում հոգեկան վերականգնման: Քանի որ որդին հայտնվեց խորտակելու համար Սատանայի գործերը, մեր հոգիներում Բան Աստծու ներկայությունը ի վիճակի է խորտակելու մեր մեջ Սատանայի գործերը, պոկելու մեր միջից վատ սերմը և մեզ դարձնելու Աստծու որդիներ: Զերևակայենք, ուրեմն, որ մենք սովորեցինք պարզապես աղոթքի մի բանաձև՝ այն արտասանելու համար որոշակի ժամին: Եթե իսկապես իրագործում ենք այն, ինչ ասացինք պատվիրանի մասին, ապա պետք է աղոթել անդադար, մեր ամբողջ կյանքը պիտի լինի չընդհատվող մի աղոթք և պիտի հռչակի մեր Հորը, որ երկնքում է: Մեր քաղաքն այլևս չպիտի լինի երկրի վրա, այլ՝ երկնքում, որ Աստծու թագավորությունն է, քանզի Աստծու թագավորությունը հաստատված պիտի լինի այն բոլոր մարդկանց մեջ, որոնք կրում են երկնային

Բանի պատկերը իրենց հոգիներում, և այդպիսով իրենք ևս պիտի դառնան երկնայիններ:

ՈՐ ԵՐԿՆՔՈՒՄ ԵՍ. . .

Աստված կապված չէ մի տեղի հետ

23. Ասված է՝ սրբերի Հայրը երկնքում է: Պետք է զգուշանալ Աստծուն պատկերացնել պարփակված մարմնավոր ձևի մեջ և երկնքում բնակվելիս: Եթե երկնքի Աստվածը պարփակված լիներ, ապա նա ավելի փոքր կլիներ, քան իրեն շրջապատող երկինքը: Ընդհակառակը, նրա աստվածության անպատմելի զորությունը շրջապատում և կրում է գոյություն ունեցող ամեն բան: Որոշ արտահայտություններ, եթե տառացիորեն վերցնենք, թվում են հաստատել, որ Աստված գտնվում է ինչ-որ մի տեղի սահմանների մեջ: Բայց հարկավոր է այդ արտահայտությունները հասկանալ ավելի լայն իմաստով՝ չխախտելով Աստծու հոգևոր բնությունը: Օրինակ՝ սուրբ Հովհաննեսի ավետարանում կարդում ենք. «Զատկի տոնից առաջ, իմանալով, որ իր ժամը հասել է այս աշխարհից անցնելու իր Հոր մոտ, Հիսուս, որ յուրայիններին սիրել էր այս աշխարհում, իր սիրո մասին նրանց տվեց բարձրագույն մի վկայություն» (Հովհ. 13:1): Եվ ավելի ներքև՝ «Իմանալով, որ Հայրը ամեն բան հանձնել էր իր ձեռքը, և որ ինքը Աստծուց էր եկել և վերադառնում էր Աստծու մոտ. . . » (Հովհ. 3:3): Նաև՝ «Լսեցիք, որ ձեզ ասացի, թե գնում եմ և կվերադառնամ ձեզ մոտ: Եթե ինձ սիրեիք, ապա պիտի ուրախանայիք, որ գնում եմ Հոր մոտ» (Հովհ. 14:28): Ավելի ներքև՝ «Այժմ ես գնում եմ նրա մոտ, ով ինձ ուղարկեց, և ձեզնից ոչ ոք ինձ չի հարցնում, թե՝ ո՞ւր ես գնում» (Հովհ. 16:5): Եթե այս

խոսքերը հասկանայինք նյութեղեն մի տեղի իմաստով, ապա հարկ կլիներ նույն իմաստով հասկանալ նաև հետևյալ խոսքը. «Հիսուս պատասխանեց նրան. եթե մեկը սիրում է ինձ, իմ խոսքը կպահի, և իմ Հայրը նրան կսիրի. և մենք նրա մոտ կգնանք ու նրա մոտ կօթևանենք» (Հովհ. 14:23):

Այս վերջին բառերից չպետք է հասկացվի Հոր և Որդու տարածքային տեղափոխությունը մեկի մոտ, որը սիրում է Հիսուսի խոսքը: Բանն Աստված, զիջողությամբ, խոնարհվեց իր բարձրության մեջ, երբ որ եկավ մարդկանց մոտ: Ասվում է, որ նա այս աշխարհից գնում է իր Հոր մոտ, որպեսզի մտահայեցողությամբ մենք նրան դիտենք իր բնության կատարելության մեջ, իր կամավոր անէացումից անդին, իր փառքի լրումի մեջ: Եթե նրան ընդունենք որպես առաջնորդի, ապա նա մեզ էլ կփրկի մեր բոլոր թշվառություններից: Այժմ թող նա գնա Նրա մոտ, ով ուղարկեց նրան. թող Բանն Աստված բաժանվի աշխարհից և վերադառնա իր Հոր մոտ:

Ավետարանի վերջում սուրբ Հովհաննեսը գրում է. «Ինձ մի՛ պահիր, որովհետև դեռ Հորս մոտ չեմ բարձրացել» (Հովհ. 20:17): Այս խոսքը պետք է հասկանալ իր խորհրդավոր իմաստով. հոգևոր իմացությունը թույլ է տալիս Աստծուն առավել արժանի ձևով հասկանալ Որդու համբարձումը դեպի Հայրը, հասկանալ ավելի շուտ որպես հոգո՛ւ բարձրացում, քան մարմնի:

Ես բացատրեցի «Հա՛յր մեր, որ երկնքում ես» խոսքը, որպեսզի մերժեմ պարզունակ ըմբռնումն այն մարդկանց, որոնք Աստծուն երևակայում են երկնքում ինչ-որ տեղ, և որպեսզի մերժեմ այն սխալ կարծիքը, թե Աստված գտնվում է նյութական մի վայրում (ինչ որ նշանակում է, թե նա մարմին ունի և այդ պատճառով էլ բաժանելի է, նյութական և ապականացու): Արդարև, ամեն մարմին բա-

ժանելի է, ապականացու, նյութական: Անհրաժեշտ է ուրեմն իմանալ, որ Աստված ունի նյութից տարբեր մի բնություն:

Քրիստոսի մարդեղությունից առաջ Սուրբ Գիրքը, բազմաթիվ առիթներով, կարծես ասում է, թե Աստված կապված է մի տեղի հետ: Անօգուտ չի թվում այստեղ մեջ բերել այդ հատվածներից մի քանիսը՝ լուսաբանելու համար այն մարդկանց, որոնք գերագույն էակին պատկերացնում են պարփակված ամփոփ և սահմանափակ մի վայրում:

Նախ Ծննդոց գրքից. «Ադամը և Եվան, - ասում է Աստվածաշունչը, - երեկոյան լսեցին Տեր Աստծու՝ դրախտում շրջագայելու ոտնաձայնը: Ադամն ու իր կինը թաքնվեցին Տեր Աստծուց դրախտի ծառերի մեջ» (Ծնն. 3:8): Նրանց, ովքեր չեն թափանցում Սուրբ Գրքի գանձերի մեջ և նույնիսկ չեն թակում նրա դուռը. ներս մտնելու համար, հարց ենք տալիս, թե ինչպե՞ս Տեր Աստված, որը լցնում է երկինքն ու երկիրը և որը, ըստ իրենց ըմբռնման, մարմնապես ունի երկինքը իբրև իրեն գահ և երկիրը՝ իբրև իր ոտքերի պատվանդան, կարող է պարփակվել երկնքի ու երկրի համեմատությամբ այդքան ամփոփ մի վայրում, թե ինչպե՞ս այդ դրախտը, որ նրանք պատկերացնում են որպես նյութեղեն մի բան, չի լցված Աստուծով, այլ մեծ է այն աստիճան, որ Տերը կարողանա շրջագայել այնտեղ և լսել իր ոտնաձայնը:

Առավել ևս անճիշտ է մտածել, որ Ադամն ու Եվան թաքնված լինեն Աստծուց դրախտի ծառերի մեջ, որովհետև իրենց անհնազանդությունը պատճառ էր դարձել, որ վռնդեն Տիրոջից: Արդարև, չի ասվում միայն, թե նրանք ուզում էին թաքնվել, այլ նրանք իսկապե՛ս թաքնվեցին: Ըստ այս մարդկանց մտածման՝ Աստված ինչպե՞ս կարող էր հարցնել. «Ո՞ւր ես»:

Ծննդոց գիրքը բացատրելիս մենք երկարորեն քննարկել ենք այս հարցերը: Որպեսզի լռությամբ չանցնենք այնպիսի լուրջ մի հարցի վրայից, ինչպիսին այս հարցն է, բավական է այստեղ հիշեցնել Երկրորդ Օրենքում Աստծու մասին հիշատակված խոսքը. «Ես կբնակվեմ և կշրջագայեմ նրանց մեջ»: Նրա շրջագայությունը սրբերի մեջ նման է այն շրջագայությանը, որ նա կատարել է դրախտում. բոլոր մեղավորները թաքնվում են Աստծուց, փախչում են նրա այցելությունից: Այսպես, «Կայենը, փախչելով Տիրոջ առջևից, գնաց բնակվեց Նայիդ երկրում՝ Եդեմի դիմաց» (Ծնն. 4:16): Աստված բնակվում է երկնքում, ինչպես բնակվում է սրբերի մեջ, խոսքը վերաբերի երկնային մարդու պատկերն իր մեջ կրող սրբին թե Քրիստոսին, որը տանում է երկնքի փրկված բոլոր լուսատուներն ու աստղերը, և կամ այն սրբերին, որոնք գտնվում են երկնքում՝ ըստ սաղմոսերգուի խոսքի. «Աչքերս դեպի քեզ բարձրացրի, Տե՛ր, դու, որ բնակվում ես երկնքում» (Սաղմ. 123:1), նաև ըստ ժողովողի. «Ոչինչ չասեք անխորհուրդ կերպով, և թող ձեր սիրտը չշտապի բնավ հապճեպ խոսքեր արտաբերել Աստծու առջև, քանզի Աստված երկնքում է, իսկ դուք՝ երկրի վրա» (Ժող. 5:11): Այս խոսքերն արտահայտում են այն հեռավորությունը, որ մարմնավոր սահմանների մեջ արգելափակված էակներին բաժանում է Նրանից, ով հրեշտակների հետ միասին գտնվում է սուրբ զորությունների և հենց իր՝ Քրիստոսի մոտ: Այս վերջինը թվում է, թե իրոք Աստծու թագավորությունն է, որը, այլաբանորեն, կոչվում է երկինք, իսկ նրա Եկեղեցին՝ իր ոտքերի պատվանդանը, որը, այլաբանորեն, կոչվում է երկիր:

Հին Կտակարանից մենք մեջ բերեցինք մի քանի խոսքեր (որոնք թվում է, թե Աստծուն կապում են մի տեղի հետ), որպեսզի մեր ընթերցողներին հնարավոր եղած չափով հա-

մոգենք, որ Աստվածաշունչը պետք է մեկնաբանել իր հոգևոր բարձր իմաստով, երբ այն թվում է մեզ սովորեցնել, թե Աստված գտնվում է ինչ-որ մի տեղ: Հարմար գտանք այս բանը ցույց տալ «Հա՛յր մեր, որ երկնքում ես» խոսքի կապակցությամբ՝ Աստծու էությունը հակադրելու համար բոլոր արարածներին:

ԹՈՂ ՍՈ՛ՒՐԲ ԼԻՆԻ ՔՈ ԱՆՈՒՆԸ. . .

24. Այս նախադասությունը կարող է նշանակել. կա՛մ ինչ որ խնդրվել է, տակավին ձեռք չի բերվել, և կա՛մ՝ ով արդեն ձեռք է բերել, խնդրում է, որ այն մնա: Սակայն «Թող սո՛ւրբ լինի քո անունը» խոսքը, որ Մատթեոսը և Ղուկասը մեզ հրավիրում են ասել, արտահայտում է, որ Հոր անունը տակավին չի սրբացվել: Բայց մեզ կառարկեն՝ ասելով, թե՝ ինչպե՞ս մարդ կարող է խնդրել, որ Աստծու անունը սրբացվի, ասես այն սրբացված չլիներ: Տեսնենք, ուրեմն, թե ի՛նչ է նշանակում Աստծու անունը:

ԱՆՈՒՆԸ

Անունը ցույց է տալիս անվանվող էակի սեփական և աներկբայելի բնությունը: Այսպես՝ Պողոս առաքյալի սեփական բնությունը ցույց է տալիս, որ նրա հոգին, նրա միտքը և մարմինը այսպիսին են կամ այնպիսին: Այս սեփական և անհաղորդելի հատկանիշը, որը ցույց է տալիս, թե ոչ մեկ էակ, ոչ մեկ մարդ նման չէ Պողոսին, արտահայտված է Պողոս անունով: Մարդկանց մոտ այս սեփական հատկանիշները (այսինքն՝ անունները) կարող են փոխվել: Աբրամը կոչվեց Աբրահամ, Սիմոնը՝ Պետրոս, Սողոսը, որ հալածում էր Հիսուսին, կոչվեց Պողոս: Աստծու համար, որ

բնավ չի փոխվում, որ անփոփոխելի է, կա միայն մեկ անուն՝ որ է՝ն՝ հիշատակված Ելից գրքում: Մենք բոլորս ջանում ենք խորհրդածել Աստծու մասին՝ հասկանալու համար նրա բնությունը (հազվադյուտ, ավելի քան հազվադյուտ են այն մարդիկ, որոնք կարող են հասկանալ նրա սրբությունը): Հիսուսի աղոթքը մեզ սովորեցնում է, որ սուրբ է Աստված, որպեսզի մենք բացահայտենք նրա սուրբ էությունը որպես Արարիչ, Նախախնամող, Դատավոր, որն ընտրում է և լքում, ընդունում և մերժում, վարձատրում և պատժում յուրաքանչյուրին ըստ իր արժանիքի: Ահա թե ինչն է բնորոշում սեփական հատկանիշն այն գերագույն էակի, որը, ըստ իս, կոչվել է Աստված:

Այսպես՝ Ելից գրքում կարդում ենք. «Զուր տեղը չպիտի արտասանես քո Տիրոջ՝ Աստծու անունը» (Ելից 20:7): Երկրորդ Օրենքում՝ «Թող իմ խոսքն սպասվի ինչպես անձրև, իմ պատգամները տարածվեն ինչպես ցող, ինչպես խոտի վրա տեղացող անձրև և ինչպես ջրի կաթիլ մարգախոտի վրա. որովհետև ես կանչեցի անունը Տիրոջ» (Բ Օր. 32:2-3): Սաղմոսների գրքում՝ «Պիտի հիշեն քո անունը դարեդար» (Սաղմ. 45:18): Ով ջանք չի թափում Աստծու մասին իր ըմբռնումը ներդաշնակելու արդարության գաղափարի հետ, նա զուր տեղն է արտասանում իր Տեր Աստծու անունը:

Այդ անվան չնորհիվ խոսքերն ունենում են անձրևի ազդեցություն և կարող են պտղաբեր լինել ունկնդիրների հոգու համար: Դրանք մխիթարում են ցողի նման, զորացնում ունկնդիրներին ինչպես բարերար անձրև կամ արգասավորող ջրի կաթիլ: Մարդը մտածելով, որ իր գործը հաջող ավարտի հասցնելու համար կարիք ունի Աստծուն, մտովի կանչում է անունը Նրա, Ով միակն է, որ բաշխում է բոլոր բարիքները: Հասկանալ կամ բացահայտել Աստծու

խորհուրդները՝ նշանակում է ավելի շուտ հիշել աստվածային բաներ, քան սովորել դրանք, մինչդեռ մեզ թվում է, թե դրանք սովորել ենք մարդուց[14]:

Ի՞նչ է նշանակում սրբացնել

Ով աղոթում է, պետք է մտածի և խնդրի, որ սրբացվի Աստծու անունը՝ ըստ սաղմոսերգուի խոսքի. «Պանծացնենք նրա անունը մեր մեջ» (Սաղմ. 33:4): Սաղմոսերգուն խնդրում է մեզ, որ ներդաշնակվենք նույն ոգով, որպեսզի շտապենք խորացնել մեր մեջ Աստծու ճշմարիտ, վսեմ գիտությունը: Պանծացնել Աստծու անունը մեր մեջ՝ նշանակում է մասնակցել աստվածային մագնիսական հոսանքին՝ ծնվելով նրանից, նշանակում է իշխել թշնամիների վրա, որոնք այլևս չեն կարող հրճվել մեր սայթաքումներով ու անկումներով: Այդպես է, որ պանծացված է լինում Աստծու ուժը, ինչպես այդ ցույց է տալիս 30-րդ սաղմոսը. «Պանծացնում եմ քեզ, ո՛վ Տեր, քանզի դու ինձ բարձրացրիր և չթողեցիր, որ թշնամիներս չարախնդան ինձ վրա»: Աստծուն պանծացնում ենք՝ բարձրացնելով նրան նվիրված մի տաճար՝ ըստ նույն սաղմոսի վերնագրի. Սաղմոս. օրհներգ Դավթի տաճարի նավակատիքի առթիվ:

Ինչ վերաբերում է «Թող սո՛ւրբ լինի քո անունը» խոսքին և նրան հաջորդող մյուս խնդրանքներին, պետք է ավելացնել, որ սրբազան մատենագիրների մոտ բայի հրամայական եղանակը հաճախ փոխարինվում է ըղձականով, ինչպես, օրինակ, սաղմոսների մեջ. «Թող պապանձվեն ստախոս շրթունքները, որոնք անպատկառություն են տարածում արդարության դեմ» (Սաղմ. 31:19), փոխանակ ասելու՝ «Երանի պապանձվեն»: Նաև Հուդային վերաբերող հատվածում. «Վաշխառուն թող հափշտակի ողջ ունեցվածքը նրա, և ոչ ոք թող չլինի, որ աջակցի նրան» (Սաղմ. 109:11-12): Այս ամբողջ սաղմոսը մի աղոթք է, որ Հուդայի վրա է կանչում բոլոր չարիքները: Այս քերականական կանոնին ծանոթ չլինելու պատճառով Տատիենը[15] *սրբապիղծ ենթադրություններ է արել Աստծու մասին: Այսպես է, որ «Թող լույս լինի» խոսքը նա հրամանի փոխարեն հասկանում է որպես մի խնդրանք, մի աղոթք և ամբարշտորեն բացատրում է, թե Աստված իբր խավարի մեջ էր և աղերսում էր:*

Հարկավոր է հարցնել նրան, թե ինչպե՛ս է հասկանում հետևյալ խոսքերը. «Թող երկիրն աճեցնի դալար բույս», «Թող երկրի տակ գտնվող ջրերը հավաքվեն մի տեղ», «Թող ջրերն արտադրեն ողջ կենդանիներ, որ լողան ջրի մեջ», «Թող երկիրն արտադրի կենդանի մի հոգի» (Ծնն. 1:11, 9, 20, 24): Աստված կխնդրի՞, որ երկրի տակ գտնվող ջուրը հավաքվի ինչպես մի զանգված, որպեսզի այն մնա հաստատուն անջրպետի վրա: Կամ կխնդրի՞, որ երկիրը սերմ աճեցնի, որպեսզի վայելի հողի բարիքները: Ի՞նչ կարիք ունի նա լույսի, կենդանիների, ձկների, որպեսզի ցանկանա, որ դրանք ստեղծվեն: «Թող լույս լինի» արտահայտությունը հրաման է և ոչ թե իղձ: Հրամայական եղանակով կազմված աղոթքի այս խոսքի կապակցությամբ ինձ անհրաժեշտ թվաց հիշեցնել Տատիենի մեկնաբանությունը, որովհետև նա խեղաթյուրել է բազմաթիվ մարդկանց մտքերը, որոնք ընդունել են նրա սրբապիղծ ուսուցումը: Մենք ինքներս ենք ճանաչել նրանց դեռ ոչ շատ առաջ:

ՔՈ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԹՈՂ ԳԱ. . .

25. «Քո թագավորությո՛ւնը թող գա»: Ըստ մեր Տիրոջ և Փրկչի խոսքի՝ «Աստծու թագավորությունը դրսից տե-

սանելի կերպով չի գալիս, և չեն ասի, թե՝ ահավասիկ այստեղ է կամ այնտեղ, այլ Աստծու թագավորությունը ներսում, մեր մեջ է» (ներսում բառը նշանակում է մեր բերանում, մեր սրտում) (Ղուկ. 17:20-21): Ակնհայտ է, ուրեմն, որ ով աղոթում է, որպեսզի Աստծու թագավորությունը գա, նա իրավացիորեն աղոթում է, որ Աստված բարձրանա, պտղավորվի, ավարտվի իր մեջ: Այն բոլոր սրբերի մեջ, որոնք Աստծուն ընդունում են իբրև թագավոր և հնազանդվում նրա հոգևոր օրենքներին, Տերը բնակվում է նրանց մեջ, ինչպես լավ խնամարկված մի քաղաքի մեջ: Հայրը ներկա է, և Քրիստոս թագավորում է Հոր հետ նրանց անարատ հոգում՝ ըստ վերևում մեր հիշատակած խոսքի. «Մենք նրա մոտ կգանք և նրա մեջ կհաստատենք մեր օթևանը» (Հովհ. 14:22):

Ի՞նչ է նշանակում Աստծու թագավորությունը

Իմ կարծիքով Աստծու թագավորություն նշանակում է բանականության[16] երանավետ վիճակ, տրամախոհություն, խելացի դատողությունների կարգ, նշանակում է Քրիստոսի թագավորությունը, փրկության այն խոսքերը, որոնք ուղղվում են ունկնդիրներին որպես արդարության և մյուս առաքինությունների կատարյալ գործեր, որովհետև Աստծու Որդին Խոսք է և Արդարություն: Ընդհակառակը, այս աշխարհի իշխանը ճնշում, կեղեքում է մեղավորներին, քանի որ բոլոր մեղավորները այս չար դարի ստրուկներն են. նրանք անձնատուր չեն լինում նրան, «ով կամովին իր անձը տվեց մեր մեղքերի համար, որպեսզի մեզ պոկի դուրս հանի ներկա աշխարհի ապականությունից՝ ըստ Աստծու և մեր Հոր կամքի», ինչպես գրված է գաղատացիներին ուղղված թղթում (Գաղ. 1:4):

Ովքեր բռնությամբ կեղեքված են այս աշխարհի իշխանի կողմից նրա համար, որ մեղանչել են ազատորեն, գտնվում են մեղքի իշխանության տակ: Պողոս առաքյալը մեզ պատվիրում է թոթափել մեղքի լուծը. «Թող մեղքն այլևս չթագավորի ձեր մահկանացու մարմիններում՝ հնազանդեցնելու համար ձեզ իր մոլի ցանկություններին» (Հռոմ. 6:12):

Ինչպե՞ս խնդրել մի բան, որ արդեն կա

Գուցե մեզ առարկեն «Թող սո՛ւրբ լինի քո անունը» և «Քո թագավորությո՛ւնը թող գա» երկու խնդրանքների կապակցությամբ՝ ասելով, որ եթե խնդրենք՝ հավաստի լինելով, որ հաջողությամբ կլսվենք, ապա պարզ է, որ ոմանց համար Աստծու անունը սրբացված կլինի և նրա թագավորությունը կգա: Բայց այդ դեպքում ինչպե՞ս նրանք կարող են դեռ շարունակել խնդրել բարիքներ, որոնք արդեն եկել են, ասելով՝ «Թող սո՛ւրբ լինի քո անունը, քո թագավորությո՛ւնը թող գա»:

Մենք կպատասխանենք այս առարկությանը: Ով աղոթում է՝ ստանալու համար գնոսը (բարձրագույն գիտություն), միշտ իրավունք ունի դրանք խնդրելու, որովհետև նա կստանա գնոսի և իմաստության առավել հարուստ գանձեր, որոնք թույլ կտան նրան ճանաչել ներկա ժամանակին վերապահված ամբողջ մասնակին. հետագայում նրան կհայտնվի կատարյալը, որը կփոխարինի մասնակիին, երբ դեմհանդիման գալով դյուրընկալելի բաների հետ՝ միտքը կթափանցի դրանց մեջ առանց զգայության օգնության: Նույնպես Աստծու անունը կատարելապես կսրբանա, և նրա թագավորությունը կատարելապես կգա մեզնից յուրաքանչյուրի համար միայն այն ժամանակ, երբ

մեր մեջ կատարյալ կլինեն գնոսն ու իմաստությունը, անկասկած նաև մյուս առաքինությունները: Մենք կընթանանք դեպի կատարելություն, եթե «մոռանալով անցած ճանապարհը՝ մեր ամբողջ էությամբ ձգտենք դեպի առաջ» (Փիլ. 3:13):

Աստծու թագավորությունը մեր մեջ (մենք, որ անխոնջ քայլողներ ենք) իր կատարելության կհասնի այն ժամանակ, երբ որ իրականանա Պողոս առաքյալի խոսքը. «Երբ իր բոլոր թշնամիներին հնազանդեցնի, Քրիստոս թագավորությունը կհանձնի Հայր Աստծուն, որպեսզի Աստված ամեն բան լինի ամենքի մեջ» (Ա Կորնթ. 15:24-28): Նաև մենք Քրիստոսի միջոցով աստվածային բարձր տրամադրություններով անդադար պիտի աղոթենք՝ դիմելով մեր Հորը, որ երկնքում է. «Թող սո՛ւրբ լինի քո անունը, քո թագավորությո՛ւնը թող գա»:

Աստծու թագավորության մասին պետք է նշել նաև հետևյալը. կարելի չէ արդարությունը հաշտեցնել անիրավության հետ, լույսը՝ ստվերի հետ, Քրիստոսին՝ Բելիարի հետ: Նույնպես մեղքի թագավորությունը անհաշտելի է Աստծու թագավորության հետ: Եթե ուզում ենք, որ Աստված թագավորի մեզ վրա, ապա թող մեղքը երբեք չթագավորի մեր մահկանացու մարմինների վրա: Զհետևենք մեղքի կոչերին, որոնք մեր հոգիները մղում են մարմնավոր գործերի ու այնպիսի արարքների, որ օտար են Աստծուն: Խստամբերությամբ ճնշենք մեր մարմնի բոլոր անդամները, որպեսզի մտքի՛, հոգո՛ւ պտուղներ տանք: Տերը կշրջագայի մեր մեջ, ինչպես հոգևոր դրախտի մեջ. նա միայնակ կթագավորի մեր մեջ իր Քրիստոսի հետ հոգևոր զորության աջ կողմում, մինչև որ նրա թշնամիները մեր մեջ դառնան իր ոտքերի պատվանդանը, և մեզնից հեռացվեն երկրային ամեն իշխանություն և զորություն: Այս բոլորը կարո՛ղ է իրականանալ մեզնից յուրաքանչյուրի մեջ, մահը կարող է պարտվել, որպեսզի Քրիստոս կարողանա ասել մեր մեջ. «Մա՛հ, ո՞ւր է քո հաղթությունը» (Ա Կորնթ. 15:55):

Ուրեմն, ինչ որ ապականացու է մեր մեջ, պետք է հայտնաբերի սրբությունն ու անապականությունը պարկեշտության ու մաքրության մեջ, և ինչ որ մահկանացու է, թոթափելով մահը, պետք է հայտնաբերի Հոր անմահությունը: Այս ձևով Աստված կթագավորի մեր մեջ, և մենք արդեն տիրացած կլինենք նոր ծննդի և հարության բարիքներին:

ՔՈ ԿԱՄՔԸ ԹՈՂ ԼԻՆԻ. . .

26. «Քո կա՛մքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է»: Ղուկասը «Քո թագավորությո՛ւնը թող գա» բառերից հետո լռությամբ անցել է այս խնդրանքի վրայից և գրել է. «Մեր հանապազօրյա (հոգևոր) հացը տո՛ւր մեզ ամեն օր»: Ուրեմն մենք պիտի քննենք այս խոսքերը, որ միայն Մատթեոսն է մեջ բերել, և որոնք հաջորդում են նախորդներին: Մենք, որ աղոթում ենք, դեռևս գտնվում ենք երկրի վրա. կարծում ենք, որ երկնքի բոլոր բնակիչներն այնտեղ կատարում են Աստծու կամքը: Խնդրում ենք, որ մեզ համար ևս երկրի վրա ամեն ինչում կատարվի Աստծու կամքը. ինչ որ անպայման կլինի, եթե ոչինչ չանենք նրա կամքից դուրս: Երբ այդ կամքը լիովին կատարված լինի մեր մեջ երկրի վրա, մենք հար և նման կլինենք երկնքի էակներին. նրանց նման կկրենք երկնային էակի պատկերը, կժառանգենք երկնքի թագավորությունը, և նրանք, որ մեզ կհաջորդեն, իրենց հերթին կխնդրեն, որ դառնան մեզ նման, մեզ, որ արդեն երկնքում կլինենք:

Կարելի է ավելի լայն իմաստով հասկանալ Մատթեոսի կողմից մեջ բերված «Երկրի վրա, ինչպես որ երկնքում է» բառերը: Մեզնից պահանջված աղոթքը կլիներ հետևյալը. «Թող սո՛ւրբ լինի քո անունը երկրի վրա, ինչպես որ երկնքում է, թող քո կա՛մքը լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է»: Աստծու անունը սրբացվել է երկնքի բնակիչների կողմից. Աստծու թագավորությունը հաստատվել է նրանց մեջ. Աստծու կամքը կատարվել է նրանց մեջ: Այս բոլոր բաները, որ անկատար են մնացել երկրի բնակիչների համար, կարող են իրականանալ, եթե կարողանանք մենք մեզ ցույց տալ, թե արժանի ենք լսելի լինելու Աստծուց:[17]

Ի՞նչ է նշանակում երկինք և երկիր

«Քո կա՛մքը թող լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է»: Այս բառերի մասին կարող ենք հարց տալ մեզ. Աստծու կամքը ինչպե՞ս կարող է կատարվել մի երկնքում, որտեղ բնակվում են չար ոգիները,[18] որոնցով «հարբել է Աստծու սուրը երկնքում» (Եսայի 34:5): Ուրեմն, եթե մենք խնդրենք, որ Աստծու կամքը կատարվի երկրի վրա, ինչպես որ երկնքում է, ապա անխոհեմաբար չե՞նք խնդրի, որ երկինքը լցնող չար զորությունները նույնպես մնան երկրի վրա: Իրականում բազմաթիվ մարդիկ ապականվել են երկրի վրա չար ոգիների պատճառով, որոնք բնակվում են երկնային տեղերում:

Բայց նա, ով հոգեպես է մեկնաբանում երկինքն ու երկիրը՝ այնտեղ հայտնաբերելով Քրիստոսին և նրա Եկեղեցին (ո՞վ է Հոր արժանի գահը, եթե ոչ՝ Քրիստոս, և ո՞րն է նրա ոտքերի պատվանդանը, եթե ոչ՝ Եկեղեցին) կարող է հեշտությամբ լուծել դժվարությունը: Եկեղեցու յուրաքանչյուր անդամ պետք է պահանջի, որ կատարվի Հոր կամքը, ինչպես Քրիստոս ինքը կատարեց, Նա, որ եկավ հենց այդ նպատակով և այն կատարեց ամբողջապես: Հարելով Նրան՝ մենք կարող ենք նրա հետ դառնալ մեկ հոգի և այդպիսով կատարել նրա կամքը: Այնպես որ Հոր կամքը կկատարվի երկրի վրա, ինչպես որ երկնքում է. որովհետև ով միանում է Տիրոջը, ըստ սուրբ Պողոսի, նրա հետ կազմում է մեկ հոգի: Ձեմ կարծում, որ նրանք, ովքեր ուշի ուշով խորհրդածում են իմ այս մեկնաբանման մասին, կարողանան մերժել այն:

Այսուհանդերձ կարող են առարկել Տիրոջ այն խոսքին, որ նա ուղղեց իր տասնմեկ աշակերտներին իր հարությունից հետո. «Ամեն զորություն տրված է ինձ երկնքում և երկրի վրա» (Մատթ. 28:18): Տրված լինելով, որ նա զորություն ունի երկնային բաների վրա, ուրեմն ասում է, որ զորություն է ստացել նաև երկրի վրա:

Երկնային բաները՝ առաջինները, լուսավորվել են Աստծու խոսքով. դարի լրումից հետո երկրային բաները, Աստծու Որդուն տրված զորության շնորհիվ, ընդօրինակեցին այն բաները, որ Փրկչի զորությունն ստացավ երկնքում, և որոնք արդեն կատարյալ են:

Քրիստոս ուզում է աղոթքով Հոր մոտ զուգակից դարձնել նրանց, ում ուսուցանում է:

Այսպիսով երկրային էակները՝ հնազանդվելով ճշմարտությանն ու Աստծու խոսքին և կերպարանափոխվելով այն զորությամբ, որ Հիսուս ստացել է երկրի վրա, ինչպես և երկնքում, կլինեն նման երկնային էակներին և կառաջնորդվեն դեպի իրենց երանական վերջնակետը, որը գտնվում է նրա իշխանության տակ:

Երկինքը, Փրկիչը, երկիրը, Եկեղեցին

Ուրեմն, եթե Փրկչին հասկանանք որպես երկինք և Եկեղեցին՝ որպես երկիր՝ ասելով, որ բոլոր արարածների անդրանիկը (որի վրա հանգչում է Հայրը, ինչպես մի գահի վրա) երկինքն է, ապա պետք է եզրակացնել, որ մինչև մահ իր խոնարհությամբ և հնազանդությամբ զորություն ստացած Մարդը իր հարությունից հետո կարո՞ղ էր ասել հետևյալ խոսքը. «Ամեն զորություն տրված է ինձ երկնքում և երկրի վրա»: Աստծու կողմից ճանաչված Մարդը իշխանություն ստացավ երկնային բաների վրա, որոնք պատկանում են միածին Որդուն, որպեսզի միանա և մասնակցի նրա աստվածությանը:

Մնում է լուծել երկրորդ դժվարությունը. ինչպե՞ս Աստծու կամքը կատարված է երկնքում, երբ երկնային վայրերում բնակվող չար ոգիները կռվում են երկրային էակների հետ:

Ահա մեր պատասխանը. ով բնակվում է դեռևս երկրի վրա, նա արդեն ունի իր քաղաքը երկնքում և այնտեղ գանձեր է կուտակում ոչ թե այդ տեղի պատճառով, այլ՝ ներքին տրամադրությունների, որովհետև նրա սիրտը երկնքում է, և նա իր մեջ կրում է երկնային էակի պատկերը. նա այլևս երկրից չէ և ոչ էլ երկնային բարձր աշխարհից: Նույնպես և չար ոգիները. ապրելով հանդերձ երկնքում՝ նրանք ունեն իրենց քաղաքը երկրի վրա: Նրանք որոգայթ են լարում մարդկանց համար և պայքարում նրանց դեմ. նրանք գանձեր են կուտակում երկրի վրա և իրենց մեջ կրում երկրային էակի պատկերը՝ սկզբնապատկերը Տիրոջ արարածի, որն ստեղծված է հրեշտակների ձեռքում խաղալիք դառնալու համար: Այս չար ոգիները երկնային չեն և չեն բնակվում երկնքում, որովհետև նրանց տրամադրությունները չար են:

Եզրակացնելով՝ «Թող քո կա՛մքը լինի երկրի վրա, ինչպես որ երկնքում է» խոսքը չի նշանակում, որ երկնքում են գտնվում նրանք, ովքեր իրենց մտածումով ընկել են «նրա հետ, ով երկնքից ընկել է ինչպես փայլակը» (Ղուկ. 10:18):

Կերպարանափոխել երկիրը

Հանձնարարելով աղոթել, որպեսզի կատարվի Հոր կամքը երկրի վրա, ինչպես որ երկնքում է, մեր Փրկիչը բոլորովին չի պատվիրում աղոթել երկրի վրա բնակվողների համար, որպեսզի նմանվեն երկնքում քաղաք ունեցողներին: Դրանով նա պարզապես ցանկանում է, որ երկրի վրա գտնվող բոլոր էակները, այսինքն՝ վատերը, երկրայինները՝ նմանվեն նրանց, ովքեր քաղաք ունեն երկնքում և դարձել են երկինք:

Մեղավոր մարդը, ով էլ նա լինի, երկիր է. եթե չի զղջում, ապա կդառնա երկիր: Բայց ով որ կատարում է Աստծու կամքը և անհնազանդ չի լինում փրկության և հոգու օրենքներին, երկինք է: Ուրեմն, եթե մենք մեր մեղքի պատճառով դեռևս երկիր ենք, ապա խնդրենք մեզ համար, որ Աստծու կամքը բարեփոխի մեզ, ինչպես բարեփոխել է մեր միջից նրանց, ովքեր դարձել են երկինք կամ արդեն երկինք են: Եվ եթե Աստծու աչքին արդեն մենք այլևս երկիր չենք, ապա խնդրենք գոնե, որ երկրի վրա, ինչպես որ երկնքում է, այսինքն՝ վատերի մոտ, կատարվի Աստծու կամքը, որպեսզի նրանք դառնան երկինք, երբ մի օր այլևս չի լինի երկիր, այլ ամեն ինչ կդառնա երկինք:

Ըստ այս մեկնաբանության, եթե Աստծու կամքը կատարվում է երկրի վրա, ինչպես որ երկնքում է, ապա եր-

կիրն ալևս երկիր չի մնա: Ըստ մեկ ուրիշ օրինակի, եթե Աստծու կամքը կատարվում է ժուժկալ մարդկանց մոտ, ապա անժուժկալ մարդիկ կդառնան ժուժկալ. եթե այն կատարվի անարդարների մոտ, ինչպես արդարների, ապա անարդարները կդառնան արդար: Եվ հետևաբար, եթե նրա կամքը կատարվում է երկրի վրա, ինչպես կատարվել է երկնքում, ապա մենք բոլորս կլինենք երկինք: Մարմինը, որ ոչնչի չի ծառայում, և արյունը, որ ագգակից է դրան, չեն կարող ժառանգել Աստծու թագավորությունը: Սակայն նրանք կժառանգեն այն դեպքում, եթե երկրից, փոշուց և արյունից կերպարանափոխվեն երկնային գոյացության:

ՏՈՒՐ ՄԵԶ ԱՅՍՕՐ ՄԵՐ ՀԱՑԸ

«Տո՛ւր մեզ այսօր մեր հոգևոր հացը» կամ, ըստ Ղուկասի՝ «Տո՛ւր մեզ ամեն օր մեր հոգևոր հացը»: Որոշ մեկնիչներ ենթադրում են, որ պետք է աղոթենք նյութական հացի համար[19]: Տեղին է այստեղ հերքել նրանց սխալը: Նա, ով մեզ պատվիրում է խնդրել մեծագույն և երկնային բարիքները (մինչ մարմնավոր հացը ո՛չ երկնային բարիք է և ո՛չ էլ մեծագույն խնդրանքի առարկա), ինչպե՞ս կարող էր մոռանալ իր ուսուցումը և պատվիրել մեզ, որ աղոթենք իր Հորը չնչին և երկրային մի բարիքի համար:

Ճշմարիտ հացը

Մենք պիտի հետևենք հենց մեր Տիրոջը՝ տեսնելու համար, թե Նա ի՛նչ է սովորեցնում մեզ հացի վերաբերյալ. մենք դա ցույց կտանք մանրամասնորեն: Սուրբ Հովհաննեսի ավետարանում Հիսուս իր խոսքն ուղղելով նրանց, ովքեր եկել էին Կափառնաում տեսնելու իրեն, ասում է.

«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, դուք ինձ փնտրում եք ոչ թե նրա համար, որ հրաշքներ տեսաք, այլ որոհետև կերաք այն հացից և կշտացաք» (Հովհ. 6:26): Ով ուտում է Հիսուսի օրհնած հացը և դրանով սնվում, աշխատում է ավելի լավ ճանաչել Աստծու Որդուն և շտապել դեպի նա: Ահա թե ինչու Հիսուս պատվիրում է. «Գնացեք աշխատե՛ք ոչ թե կորստյան ենթակա սննդի համար, այլ այն սննդի, որ մնում է մինչև հավիտենական կյանքը, և որը մարդու Որդին կտա ձեզ»(Հովհ. 6:27):

Ունկնդիրները հարցնում էին նրան և ասում. «Ի՞նչ անենք, որ Աստծու ուզած գործերը գործենք»: Եվ Հիսուս պատասխանում է նրանց. «Աստծու ուզած գործը ա՛յս է. որ հավատաք Նրան, ով ինձ ուղարկեց»(Հովհ. 6:28-29): Եվ Աստված «ուղարկեց իր Որդուն և բժշկեց նրանց»(Սաղմ. 101:20), ինչպես գրված է սաղմոսներում, որոնք ակնարկում են հիվանդներին: Ովքեր հավատում են Որդուն, Աստծու գործերն են անում. սրանք այն սնունդն են, որը գոյատևում է մինչև հավիտենական կյանքը:

Մի քիչ ավելի ներքև՝ «Իմ Հայրն է, որ ձեզ տալիս է ճշմարիտ կենաց հացը, որովհետև Աստծու հացը նա է, ով իջնում է երկնքից և կյանք է տալիս աշխարհին» (Հովհ. 6:32-33): Ճշմարիտ հացը նա է, ով սնում է ըստ Աստծու պատկերի ստեղծված ճշմարիտ մարդուն, բարձրացնում նրան, ով սնվում է այդ հացով, մինչև որ նա նման լինի իր Արարչին: Ի՞նչ կա ավելի արժեքավոր մտածող մարդու համար, որը հավանում է Աստծու իմաստությունը, հասկանում է, որ ճշմարտությունը համապատասխանում է խելամիտ մարդկային բնությանը:

ԵՎ ՄՅՈՒՍ ՀԱՑԸ

Մեկնումեկը գուցե կառարկի մեզ՝ ասելով, որ Վարդապետը մեզ չի սովորեցնում խնդրել հոգևոր հացը, այլ՝ մյուս հացը: Նույնիսկ սուրբ Հովհաննեսի ավետարանում Հիսուս այդ հացի մասին մերթ խոսում է ասես իրենից դուրս մեկ ուրիշի մասին և մերթ՝ ինքն իր մասին: Մեկ ուրիշի մասին, երբ ասում է. «Մովսեսը ձեզ տվեց երկնքից եկած հացը, ոչ թե ճշմարիտ հացը. որովհետև իմ Հայրն է, որ ձեզ տալիս է ճշմարիտ հացը երկնքից»: Ինքն իր մասին, երբ պատասխանում է նրանց, ովքեր այն խնդրում են իրենից՝ ասելով. «Տե՛ր, ամեն ժամ տո՛ւր մեզ այդ հացից». - «Ե՛ս եմ կենաց հացը. ով դեպի ինձ գա, քաղց չի զգա, և ով ինձ հավատա, չի ծարավի» (Հովհ. 6:34-35): Եվ քիչ հետո՝ «Ե՛ս եմ կենդանի հացը, որ իջած է երկնքից. եթե մեկն այս հացից ուտի, հավիտյան կապրի, և այն հացը, որ ես կտամ, իմ մարմինն է, որը ես կտամ, որպեսզի աշխարհը կյանք ունենա»(Հովհ. 6:51-52):

Սուրբ Գիրքը հաց է կոչում ամեն տեսակի սնունդը: Այսպես, Մովսեսի մասին ասված է. «Քառասուն օր մնաց լեռան վրա առանց հաց ուտելու և առանց ջուր խմելու» (Բ Օր. 9:9): Բանն Աստված կերակրում է բազում ձևերով. որովհետև ոչ բոլորն են կարողանում տանել աստվածային ուսուցումների զորությունն ու կազդուրիչ ուժը: Հաստատուն սնունդ տալու համար ամենակատարյալ անձանց՝ Հիսուս ասում է. «Այն հացը, որ ես կտամ, իմ մարմինն է, որը ես կտամ, որպեսզի աշխարհը կյանք ունենա»: Եվ մի քիչ ավելի ներքև՝ «Եթե դուք չուտեք մարդու Որդու մարմինը և չըմպեք նրա արյունը, կյանք չեք ունենա ձեր մեջ: Ով ուտում է իմ մարմինը և ըմպում իմ արյունը, նա հավիտյան կյանք ունի, և ես վերջին օրը հարություն առնել կտամ նրան, քանի որ իմ մարմինը ճշմարիտ սնունդ է, և իմ արյունը՝ ճշմարիտ ըմպելիք: Ով ուտում է իմ մարմինը և ըմպում իմ արյունը, կբնակվի իմ մեջ, և ես՝ նրա մեջ: Ինչպես իմ Հայրը, որ ինձ ուղարկեց, ապրում է, և ես ապրում եմ Հոր միջոցով, այնպես էլ ով ուտում է ինձ, նա ևս կապրի իմ միջոցով»(Հովհ. 6:53-57):

Աստծու որդին՝ հաց դարձած

Ուրեմն ճշմարիտ սնունդը մարմինն է Քրիստոսի, որը, որպես Աստծու Բան, դարձել է մարմին՝ ըստ հետևյալ խոսքի. «Եվ բանը մարմին եղավ»(Հովհ. 1:14): Երբ մենք այն ուտում և ըմպում ենք, «նա իր օթևանը հաստատում է մեր մեջ»: Երբ նա բաշխվում է, իրականանում է հետևյալ խոսքը. «Մենք տեսանք նրա փառքը»(Հովհ. 1:14): «Ա՛յս է հացը, որ երկնքից է իջած: Այն նման չէ այն հացին, որ կերան ձեր հայրերը. . . Նրանք կերան և մեռան. ով ուտում է այս հացը, նա կապրի հավիտյան»(Հովհ. 6:58):

Երբ Պողոս առաքյալը խոսում է կորնթացիների հետ, ինչպես փոքր երեխաների, որոնք քայլում են մարմնավոր էակների նման, ասում է. «Կաթ տվեցի ձեզ և ոչ թե պինդ կերակուր, քանի որ դեռ այն չէիք կարող տանել: Բայց հիմա առավել ևս չեք կարող տանել, քանզի դեռ մարմնավոր եք» (Ա Կորնթ. 3:2-3): Իսկ եբրայեցիներին ուղղած թղթում ասում է. «Դուք կաթի կարիք ունեք և ոչ թե պինդ կերակրի: Ով դեռևս կաթնակեր է, անգիտակ է արդարության վարդապետությանը. նա սոսկ փոքրիկ երեխա է: Պինդ կերակուրը հասուն մարդկանց համար է, որոնց կարողությունները ձևավորված են լավն ու վատը զատորոշելու փորձառությամբ» (Եբր. 5:12-14): Ըստ իմ դատողության՝ «Մեկը հավատում է, թե կարող է ուտել ամեն բան, իսկ

մյուսը, որ տկար է, միայն բանջարեղեն է ուտում»(Հռոմ. 14:2) խոսքը էապես չի վերաբերում նյութական սննդին, այլ՝ Աստծու խոսքերին, որոնք հոգին են սնում: Ով իսկապես հավատարիմ է և կատարյալ, կարող է ամեն ինչ ընդունել, ինչպես ապացուցում է հետևյալ խոսքը. «Մեկը հավատում է, որ կարող է ուտել ամեն բան, բայց մյուսը, որ տկար է և անկատար, պետք է գոհանա պարզ ուսուցումներով, որոնք անբավարար են լիովին զորացնելու համար»: Հենց այդպիսի մեկի մասին է, որ խոսում է Պողոսը, երբ ասում է. «Այն մյուսը, որ տկար է, միայն բանջարեղեն է ուտում»:

Առակաց գրքում, ըստ Սողոմոնի, պարզամիտ մարդը, որ չունի միտքն ամրապնդող բարձրագույն վարդապետությունների իմացությունը (սակայն այդ պատճառով չի ընկնում սխալի մեջ), գերիվեր է, քան մեկ ուրիշը, որն ավելի ճարտար է, ավելի խելացի, ճկուն և կորովամիտ, բայց չի թափանցում խաղարարար խոսքի մեջ և չի բացահայտում ամբողջի ներդաշնակությունը: Ահա այդ հատվածը. «Ավելի լավ է հրավիրվել բանջարեղենից պատրաստված ճաշ ուտելու՝ սիրով ու շնորհքով, քան հորթուկի պարարտ միս՝ ատելությամբ» (Առակ. 15:17): Պարզ և համեստ ճաշը, որ հոժարակամ մատուցվում է նրանց կողմից, ովքեր ավելին տալ չեն կարող, ավելի հաճելի է մեզ համար, քան բարձրագոչ ճառերն այն մարդկանց, որոնք չեն ճանաչում Աստծուն և քարոզում են մի վարդապետություն, որ տարբեր է մեր Տեր Հիսուս Քրիստոսի վարդապետությունից, մեր Փրկչի, որը մեզ տվեց Օրենքը և Մարգարեները:

Ուրեմն խնդրենք մեր Հորից կենաց հացը, որը հոգևոր հաց է, որպեսզի մեր հոգիները չհյուծվեն քաղցից և չմահանան Տիրոջ խոսքից զրկված լինելու համար:

«Էպիուսիոս» (գերգոյացական) բառը

Այժմ պետք է քննենք, թե ի՞նչ է նշանակում գերգոյական բառը: Էպիուսիոս բառը բնավ չի գործածվել հույն վարդապետների կողմից. առավել ևս այն գործածական չէ խոսակցական լեզվում: Թվում է, թե այս բառն ստեղծվել է ավետարանիչների կողմից: Մատթեոսը և Ղուկասը համաձայն են այս բառի կապակցությամբ և ոչ մեկ տարբերակ չեն տալիս: Նույնն է պարագան նաև ուրիշ բառերի համար, որոնք գործածվել են Աստվածաշնչի եբրայական բնագիրը թարգմանողների կողմից: Ո՞ր հույնը երբևէ գործածել է, օրինակի համար, էնոտիզու կամ ակուստիթետի բառերը՝ արտահայտելու համար «ընդունիր ականջներիդ մեջ» կամ «լսել տուր» իմաստները:

Մովսեսի գրքում մենք հանդիպում ենք էպիուսիոս-ի նման մի բառի, որ դրված է Աստծու շրթների վրա. «Դուք կլինեք ինձ համար էպիուսիոս» (Ելից 19:6): Թե՛ մեկը և թե՛ մյուսը թվում է, թե առաջացել են ուսիա արմատից: Առաջինը ցույց է տալիս մեր գոյացությանը փոխակերպված հացը, երկրորդը՝ այդ աստվածային գոյացության շուրջն ապրող ժողովուրդը, որը մասնակից է դրան:

Մենք պրպտումներ կատարեցինք գոյացություն հասկացության շուրջ՝ էպիուսիոս հացի պերիուսիոս ժողովրդի պատճառով: Մենք բացատրեցինք բառի տարբեր նշանակությունները: Նախապես ցույց էինք տվել, որ այն հացը, որը պետք է խնդրեինք, հոգևոր հաց էր: Այդ հացով սնվողի մարմնի գոյացությունը, ինչպես երկնքից իջած կենաց հացը, իր սեփական զորությունը տալիս է նրա՛ մտքին և հոգուն, ով այն ուտում է: Այդպիսով նա դառնում է այն հոգևոր, գերգոյացական հացը, որը մենք խնդրում ենք: Կերակուրները, դրանք վերաբերեն ըմբիշների պինդ

սննդին, կաթին թե բանջարեղենին, տարբեր ձևով են սնում և զորացնում այն մարդկանց, որոնք ուտում են դրանք: Նույնն է պարագան Աստծու խոսքի համար. այդ խոսքը կաթ է երեխաների համար, բանջարեղեն՝ տկարների համար և միս՝ ուժեղների համար: Յուրաքանչյուր ոք, ըստ իր կարողությունների, օգտվում է դրանից: Սակայն կան նաև մահառիթ, վնասակար կամ արգելված կերակուրներ, որ, նմանողությամբ, կարելի է պատշաճեցնել ուսուցումների այլազանությանը՝ դրանք նկատի ունենալով որպես սնունդ: Գերգոյացական հացը պատշաճեցված է մեր բանական բնությանը և մերձավորություն ունի հենց մեր գոյացության հետ. նա հոգուն տալիս է առողջություն, կենսունակություն և ուժ: Նա հաղորդում է իր սեփական անմահությունը, քանզի Բանն Աստված անմահություն է նրա համար, ով այն ուտում է:

Կենաց ծառը

Աստվածաշնչում հացը, ինձ թվում է, կոչվել է մի ուրիշ՝ կենաց ծառ անունով, որի շնորհիվ ով իր ձեռքը երկարում է՝ վերցնելու համար այդ հացից, կապրի հավիտյան: Սողոմոնն այն կոչում է «Աստծու իմաստություն»: Այդ իմաստությունը կենաց ծառ է բոլոր նրանց համար, ովքեր փարվում են նրան. երանի՜ նրանց, որոնք գնում են դեպի այդ ծառը, ինչպես դեպի Տերը» (Առակ. 3:18): Հրեշտակներն իրենք իսկ սնվում են Աստծու իմաստությամբ, դրանից են ուժ ստանում կատարելու համար իրենց առաքելությունը՝ սևեռելով իրենց միտքը ճշմարտության և իմաստության վրա: Ըստ Սաղմոսաց գրքի՝ հրեշտակները սնվում են, իսկ Աստծու մարդիկ, որ եբրայեցիներ են կոչվում, այսպես ասած՝ ուտում են նրանց հետ: Գրված է. «Մարդը հրեշտակների հացը կերավ» (Սաղմ. 78:25): Մենք այնքան տկարամիտ չենք երևակայելու համար, որ սաղմոսում, երբ ասվում է, թե մարդիկ մասնակցում են Աստծուն ծառայող հրեշտակների սեղանին, խոսքը վերաբերում է նյութական հացին, այն հացին, որը երկնքից ընկավ եբրայեցիների վրա, երբ նրանք դուրս էին գալիս Եգիպտոսից:

Քանի որ ուսումնասիրում ենք գերգոյացական հաց, կենաց ծառ, իմաստություն և հրեշտակների ու մարդկանց համար ընդհանուր սնունդ բացատրությունները, գուցե անօգուտ չի լինի զբաղվել Աբրահամի կողմից ընդունված այն երեք մարդկանցով, որոնց մասին խոսում է Ծննդոց գիրքը: Նրանք սնվում են երեք կապիճ ազնիվ ցորենի ալյուրով, որ շաղում են՝ դրանով հաց եփելու համար մոխրի մեջ: Այս խոսքը պետք չէ հասկանալ բառացիորեն, այլ՝ փոխաբերական իմաստով: Սրբերը հոգևոր և բանական սնունդը կարող են երբեմն բաժանել մարդկանց և նույնիսկ աստվածային զորությունների հետ՝ դրանից օգտվելու կամ ցույց տալու համար այն, ինչ հագեցնում է նրանց:

Հրեշտակները, իրենց հերթին, ուրախանում են դրանով և թույլ են տալիս սրբերին, որ լավագույնս յուրացնեն իրենց տրված ուսուցումները: Պետք չէ զարմանալ, որ մարդը սնում է հրեշտակներին, քանի որ Քրիստոս ինքը հայտնում է, որ կանգնում է դռան առջև և թակում դուռը, որպեսզի ներս մտնի և միասին ճաշի նրա հետ, ով իր առջև բացել է դուռը: Այնուհետև, իր հերթին, Տերը իր սեփական բարիքներով կհագեցնի նրան, ով իր ունեցած միջոցներով կերակրել էր Աստծու Որդուն:

Այն հացը, որ մեզ դարձնում է Աստծու որդիներ

Ով ընդունում է գերգոյացական հացը, ամրացնում է իր սիրտը և դառնում Աստծու որդի: Ով միանում է վիշապին, նա ուրիշ մեկը չէ, եթե ոչ այն եթովպացին, որ ինքն իսկ վերածվել էր օձի՝ վիշապի խորամանկությունների միջոցով: Եթե նա մկրտություն է խնդրում, ապա լսում է Աստծու Որդու լուտանքները. «Իժի՛ ծնունդներ, օձե՛ր, ո՞վ ձեզ թելադրեց փախչել Աստծու բարկությունից» (Մատթ. 3:8): Վիշապի մարմնի մասին, որ կերել էին եթովպացիները, Դավիթն ասում է. «Դու խորտակեցիր ծովային հրեշների գլուխները ջրերի վրա, դու ջարդուփշուր արեցիր վիշապի գլուխները՝ դրանք կերակուր դարձնելու համար եթովպացի ժողովուրդներին»[20] (Սաղմ. 74:13-14):

Եթե հակասություն չկա այն բանի մեջ, որ Աստծու Որդին և սատանան շարունակում են գոյատևել, որ մեկը և մյուսը դառնում են սնունդ սրա կամ նրա համար, ապա ինչո՞ւ վախենալ և չընդունել, որ մարդիկ կարող են սնվել բարի կամ չար զորությունների կողմից: Պետրոս առաքյալը Տիրոջ կենարար խոսքերը բաժանելու նպատակով Կոռնելիոսի և Կեսարիայում գտնվող նրա շրջապատի հետ հարաբերության մեջ մտնելուց առաջ երկնքում տեսնում է չորս ծայրերից բռնված մի մեծ սփռոց, որի մեջ գտնվում էին երկրի բոլոր չորքոտանիները, սողունները և կենդանիները: Մի ձայն հրամայում է նրան՝ վե՛ր կաց, սպանի՛ր և կե՛ր: Պետրոսը նախ մերժում է և ասում. «Ես ոչ մի պիղծ կամ անմաքուր բան երբեք չեմ կերել»: Ձայնը նրան արգելում է ոչ մի մարդու հասարակ կամ անմաքուր չկոչել, որովհետև նա պետք չէ պիղծ հռչակի այն, ինչ մաքրվել է Աստծու կողմից: Գրվածքն ասում է. «Ինչ որ Աստված մաքուր է հռչակել, դու պիղծ մի՛ կոչիր այն» (Գործք 10:15):*

Ուրեմն Մովսեսի օրենքը տարբերում է մաքուր սնունդն այն սննդից, որն անմաքուր է համարվում բազմաթիվ կենդանիների անուններով, որոնք նմանություն կամ առնչություն ունեն բանական էակների տարբեր սովորությունների հետ: Դրանք օգտակար կամ վնասակար են այնքան ժամանակ, մինչև որ Աստված մաքրած լինի ամեն բան:

Խոսքը ինչպիսի կերակուրների մասին էլ լինի, գերգոյացական հացը միակ սնունդն է. մենք պիտի խնդրենք, որ արժանի լինենք դրան և դրանով աստվածանանք՝ կիրառելով Աստծու Բանը (Խոսքը), որն ի սկզբանե Աստծու մոտ էր:

Էպիուսիոս բառը կարելի է առաջացած համարել էպիենայ (գալ) բայից. այս պարագայում մենք հրաման ստացած կլինենք խնդրելու գալիք դարի հացը, որ Աստված մեզ կտա կանխավ: Ինչ որ մեզ պիտի տրվի, մենք պիտի ստանանք հենց այսօրվանից. այսպիսով այսօր-ը ցույց կտա ներկա դարը, իսկ վաղը՝ գալիք դարը: Բայց առաջին բացատրությունը լավագույնն է:

Այսօր

Այժմ պիտի փորձենք հասկանալ, թե ի՛նչ է նշանակում Մատթեոսի կողմից մեջ բերված այսօր բառը կամ ամեն օր արտահայտությունը, որին հանդիպում ենք Ղուկասի մոտ: Աստվածաշունչը այսօր է կոչում ամբողջ հավիտենությունը: Այսպես, օրինակ, հետևյալ հատվածում. «Նա մովաբացիների նախահայրն է մինչև այսօր» (Ծննդ. 19:37) և «Նա է մովաբացիների նախահայրը, որոնց մենք տեսնում ենք դեռ այսօր» (Ծննդ. 19:38): Մի այլ հատվածում՝ «Այս գրույցը տարածված է հրեաների մեջ մինչև այսօր» (Ծննդ. 28:15): Նաև սաղմոսներում՝ «Այսօր, եթե լսում եք նրա

ձայնը, մի՛ խստացրեք ձեր սրտերը դառնությամբ»(Սաղմ. 95:8): Նույն բանը շատ հստակ կերպով հաստատվում է Հեսուի գրքում. «Այսօր մի՛ հեռացեք Տիրոջից» (Հեսու 24:14):

Եթե այսօր-ը ցույց է տալիս ամբողջ ներկա ժամանակը, ապա երեկ-ը նշում է գուցե անցած դարը: Մեզ թվում է, որ նույնն է պարագան նաև սաղմոսներում և Պողոս առաքյալի՝ եբրայեցիներին ուղղած թղթում: Սաղմոսներում՝ «Հազար տարին քո աչքում երեկվա օրվա պես է, որ անցավ» (Սաղմ. 90:4) (Խոսքը վերաբերում է այն նշանավոր հազարամյակին, որը համեմատվում է երեկվա օրվա հետ և հակադրվում այսօրվան): Պողոս առաքյալի մոտ՝ երեկ և այսօր:

Ղուկասի մոտ մեջբերված ամեն օր արտահայտության իմաստն այսուհետև թվում է հստակ: Նա, ով աղոթում է այսօր հավիտյանս հավիտենից գոյություն ունեցող Աստծուն, որպեսզի պարգևատրվի ոչ միայն այսօր, այլև՝ ամեն օր Նրա կողմից, «որ կարո՞ղ է անհունորեն ավելին անել, քան այն ամենը, ինչ մենք խնդրում ենք և մտածում» (Եփ. 3:20), այդպիսի մեկը կկարողանա ստանալ (չափազանցությամբ արտահայտվելու համար) ավելի մեծ առատաձեռնությամբ պարգևներ, քան այն, «ինչ որ աչքը չի տեսել, ինչ որ ականջը չի լսել և ինչ որ մարդու սիրտը չի երազել» (Ա Կորնթ. 2:9):

Ժամանակը և նրա լրումը

Նորալուսինները պարբերացված են լինում արեգակնային չգիտեմ ինչ համակարգի վրա: Եթե առաջին ամիսը, եթե այդ ամսի տասներորդ օրը և Բաղարջակերաց տոնը՝ 14-րդ օրից 21-րդ օրը (Ելից 12) ներկայացնում են «գալիք

բարիքների ստվերը», ապա ո՞վ է խելացի և Աստծու վստահելի անձը՝ ընդունելու համար այդ «առաջին ամիսը և տասներորդ օրը»:

Ի՞նչ կարելի է ասել յոթ շաբաթների տոնի (Բ Օր. 16:9,29) և այն յոթ ամիսների մասին, երբ նորալուսինը զուգադիպում է այն օրվան, երբ որ հնչում են շեփորները, իսկ տասներորդ օրը՝ Քավության օրվան (Ղևտ. 23:24-28): Միայն Աստված, որ պատվիրել է այդ սուրբ օրերը, միայն Նա՛ գիտե դրանց նշանակությունը:

Ո՞վ գեթ բավարար չափով ունի Քրիստոսի միտքը՝ հասկանալու համար եգիպտացի ստրուկի ազատագրման իմաստը յոթներորդ տարում առանց փրկագնի (Ելից 21-2) կամ պարտքերի չնորհումն ու արտերին տրված մեկ շաբաթվա հանգիստը (Ղևտ. 25:4-7): Գոյություն ունի էլ ավելի հանդիսավոր մի տոնակատարություն, քան յոթներորդ տարվա տոնակատարությունը. դա Հոբելյանական հիսուներորդ տարին է՝ ազատագրման տարին (Ղևտ. 25-8):

Ըմբռնել դրանց նշանակությունը կամ զատորոշել այն պատվերները, որոնք կատարվելու են մի օր, մնում է գաղտնի բոլորի համար, բացի նրանից, ով ծանոթ է Հոր ծրագրերին, որոնք վերաբերում են աշխարհի տնտեսությանը և որոնք իրականանում են ըստ նրա անթափանցելի դատաստանների և անհասկանալի ճանապարհների (Հռոմ. 11:34):

Հաճախ ինձ պատահել է, որ Պողոս առաքյալի թղթերից երկու հատվածներ իրար հետ համեմատելիս շփոթված մնամ և հարցնեմ ինքս ինձ, թե ինչպե՛ս են ավարտվելու դարերը, որոնց ընթացքում Հիսուս հայտնվեց միայն մեկ անգամ՝ վերացնել ջնջելու համար մարդկանց մեղքերը, եթե երբեք այս դարին պետք է հաջորդեն գալիք դարեր: Ահավասիկ խնդրահարույց այդ հատվածները. «Այժմ, դարե-

րի վախճանին, նա հայտնվեց միայն մեկ անգամ՝ իր անձի զոհագործումով մեղքը ջնջելու համար» (Եբր. 9:26): Եվ՝ «Որպեսզի գալիք բոլոր դարերում ցույց տա իր շնորհի անօրինակ գանձերը՝ մեր նկատմամբ իր ունեցած բարությամբ» (Եփ. 2:7):

Ահա՛ իմ մտածումը այսպիսի մի դժվարության դիմաց. տարին ավարտվում է, վերջին ամիսը, որից հետո գալիս է մի ուրիշ ամսվա սկիզբը. այսպես գուցե, երբ բազում դարեր (որոնք դարերի մեջ մեկ տարվա պես են) անցած լինեն, ավարտված կլինի ներկա դարը: Դրանից հետո կգան ապագա դարերը, որոնք կսկսվեն գալիք դարից:

Այս ապագա դարերում Աստված ցույց կտա իր շնորհի գանձերը իր բարությամբ: Ներկա դարի ընթացքում ամենամեծ մեղավորը, նա, որ հայհոյեց Հոգուն, ամբողջապես կընկնի մեղքի տակ, բայց ապագայում, գալիք դարի սկզբից մինչև վախճանը, չգիտեմ, թե ինչպիսի՛ վերաբերմունքի կարժանանա:

Ով մտորում է այս բաների մասին, ով իր մտքում անցկացնում է դարերի մեջ եղած շաբաթը, որպեսզի դրա մեջ տեսնի սուրբ Շաբաթը, դարերի մեջ եղած ամիսը, որպեսզի դրա մեջ տեսնի Նորալուսնի սուրբ տոնը, դարերի մեջ եղած տարին, որպեսզի դրա մեջ տեսնի տարեկան այն տոները, երբ բոլոր արու զավակները պետք է հայտնվեին Տեր Աստծու առջև, այնքան դարերին համեմատական եղող տարիները, որպեսզի հասկանա յոթներորդ և սուրբ տարին, վերջապես դարերի մեջ եղած տարիների յոթ շաբաթները, որպեսզի գովաբանի նրան, ով հաստատել է այնքան հրաշալի օրենքներ. այդպիսի մեկը, ասում եմ, կարո՞ղ է հարց տալ իրեն, թե ինչպե՞ս մարդ կարող է բարեխղճորեն զբաղվել ներկա դարի մեկ օրվա, մեկ ժամվա ամենափոքր, ամենաչնչին մասով և ամեն ինչ ի գործ չդնել, որպեսզի պատրաստվի և արժանի դառնա ստանալու դերգոյացական հացը, այն ստանալու ամեն օր:

Ամեն օր արտահայտության իմաստն այսուհետև թվում է հստակ: Ով որ այսօր աղոթում է Աստծուն, որը գոյություն ունի հավիտյանից հավիտյան, որպեսզի պարգևատրվի ոչ միայն այսօր, այլև՝ ամեն օր Նրա կողմից, ով «կարո՞ղ է ավելին անել, քան այն ամենը, ինչ մենք խնդրում ենք և մտածում» (Եփ. 3:20), այդպիսի մեկը կկարողանա ստանալ (չափազանցությամբ արտահայտվելու համար) ավելի մեծ առատաձեռնությամբ պարգևներ, քան այն, ինչ որ աչքը չի տեսել, ինչ որ ականջը չի լսել և ինչ որ մարդու սիրտը չի երազել» (Ա Կորնթ. 2:9):

Ինձ թվում է, որ այս բոլոր նկատառումները անհրաժեշտ էին՝ հասկանալու համար այսօր և ամեն օր բառերը, երբ մենք խնդրում ենք Հորից, որ մեզ տա դերգոյացական հացը: Եթե քննում ենք մենք բառը երկրորդ ավետարանում, որտեղ գրված է ոչ թե՝ տո՛ւր մեզ այսօր մեր դերգոյական հացը, այլ՝ տո՛ւր մեզ ամեն օր մեր դերգոյացական հացը, պետք է փորձենք նաև իմանալ, թե ինչպե՛ս այդ հացը լինում է մերը: Պողոս առաքյալը սովորեցնում է, որ կյանք, մահ, ներկա և ապագա, ամեն ինչ պատկանում է սրբերին: Բայց այստեղ անհրաժեշտ չէ պարզաբանել այս գաղափարը:

ՆԵՐԻՐ ՄԵԶ ՄԵՐ ՊԱՐՏՔԵՐԸ

28. «Ների՛ր մեզ մեր պարտքերը, ինչպես որ մենք ենք ներել մեր պարտապաններին» (Մատթ. 6:12) կամ, ըստ Ղուկասի, «Ների՛ր մեզ մեր մեղքերը, քանզի մենք ինքներս ներել ենք բոլոր նրանց, որոնք նեղացրել են մեզ» (Ղուկ. 11:4): Պարտքերի մասին Պողոս առաքյալն ասում է. «Հա-

տուցե՛ք յուրաքանչյուրին իրենց պարտքերը. որին հարկ՝ հարկը, որին մաքս՝ մաքսը, որին երկյուղ՝ երկյուղը, որին պատիվ՝ պատիվը: Ոչ ոքի պարտական մի՛ մնացեք, բացի միմյանց սիրելուց» (Հռոմ. 13:7-8): Մենք պարտականություններ ունենք կատարելու՝ ոչ միայն տալով, այլ նաև բարեհաճությամբ խոսելով և որոշ բարի գործեր կատարելով: Պետք է նույնիսկ որոշ հանձնառություններ ունենանք ուրիշների հանդեպ: Այդ պարտքերը մենք վճարում ենք՝ պահպանելով աստվածային օրենքը, կամ հրաժարվում դրանք վճարելուց, եթե արհամարհում ենք առողջ բանականությունը և մնում ենք պարտապաններ:

Ի՞նչ պարտքեր ունենք մենք

Պետք է մտածենք նաև այն պարտքերի մասին, որ ունենք մեր եղբայրների հանդեպ, նրանց հանդեպ, որոնք մեզ հետ վերածնվել են ի Քրիստոս աստվածեղեն խոսքերով, նմանապես նրանց հանդեպ, որոնք մեզ հետ ունեն նույն հայրերն ու մայրերը. կան նաև պարտքեր մեր քաղաքացիների հանդեպ և ուրիշ՝ ընդհանուր պարտքեր բոլոր մարդկանց հանդեպ, նաև այլ պարտքեր մեր հյուրընկալների և մեծահասակ բոլոր հայրերի հանդեպ և վերջապես նրանց հանդեպ, որոնց պետք է պատվենք իբրև որդիներ կամ եղբայրներ: Ով չի հատուցում իր ունեցած պարտքերը իր եղբայրների հանդեպ, մնում է նրանց պարտապանը: Եթե զրկենք մեր եղբայրներին այն բանից, որ մեզ պատվիրում է եղբայրասիրության և խոհականության ոգին, ապա մեր պարտքը կլինի էլ ավելի մեծ: Կարող ենք դեռ պարտապաններ լինել ինքներս մեր նկատմամբ. մենք պետք է օգտագործենք մեր մարմինը ի բարին և ոչ թե սպառենք այն՝ ընկնելով հաճույքների հետևից: Պետք է խնամք տանենք

մեր հոգուն, պետք է հսկենք, որ մեր միտքը լինի առողջ և սրաթափանց, մեր խոսքը՝ կիրթ և սիրազեղուն, երբե՛ք պարծենկոտ և դատարկ: Եթե ծանրաբեռնենք մեզ մեր իսկ անձի հանդեպ մեր ունեցած պարտքերով, ապա մեր հանցանքը կլինի առավել ևս ծանր:

Քանի որ մենք մանավանդ Աստծու ձեռաց գործն ենք և նրա ստեղծագործությունը, պետք է նրա՛ն վերապահենք մեր սերն ու գորովը, սիրենք նրան մեր ամբողջ սրտով, մեր ամբողջ ուժով, մեր ամբողջ մտքով: Եթե չհատուցենք նրան մեր այս պարտքը, ապա կմնանք Աստծու պարտապաններ և կմեղանչենք Տիրոջ հանդեպ: Այդ ժամանակ ո՞վ կաղոթի մեզ համար: «Եթե մի մարդ մեղանչում է Տիրոջ դեմ, ապա ո՞վ պետք է աղոթի նրա համար» (Ա Թագ. 2:25), ասում է Եղիա մարգարեն Թագավորաց գրքում:

Մենք պարտապաններն ենք նաև Քրիստոսի, որը մեզ փրկեց իր սեփական արյունով, ինչպես ամեն ստրուկ պարտապան է մնում իր տիրոջը, որը գնել է իրեն՝ արծաթ դրամ վճարելով իր համար: Մենք պարտք ունենք նաև Սուրբ Հոգու հանդեպ. մենք այն հատուցած կլինենք, երբ որ խուսափենք տրտմեցնել նրան, որի միջոցով կնքվեցինք փրկության օրվա համար (Եփ. 4:30): Չտրտմեցնելով նրան՝ մենք կտանք այն արդյունքները, որ նա սպասում է մեզնից, նրա ներկայության շնորհիվ, որ ապրեցնում է մեր հոգին:

Եթե մեզ համար դժվար է իմանալ, թե ո՞ր մեկն է մեզնից յուրաքանչյուրի հրեշտակը, որը մշտապես տեսնում է երկնքում գտնվող Հոր երեսը (Մատթ. 18:10), այսուհանդերձ հաստատ է, որ նրան նույնպես պարտապան ենք: «Տեսարան դարձանք աշխարհին, հրեշտակներին և մարդկանց» (Ա Կորնթ. 4:9): Թատրոնի տնօրենը ստիպված է ցուցադրել նախատեսված բեմադրությունը, հակառակ դեպքում նա կպատժվի և ծաղրուծանակի կենթարկվի վի-

բավորված հանդիսատեսների կողմից: Նույնն է պարագան նաև մեզ համար. մենք պետք է ցույց տանք աշխարհի, հրեշտակների և մարդկանց առջև այն, ինչ իմաստությունը մեզ սովորեցրեց:

Ընդհանրական այս պարտավորություններից դուրս գոյություն ունի նաև այրի կնոջ պարտքը, որ հանձն է առնում Եկեղեցին, սարկավագի ու քահանայի պարտքը, որ ամենածանրն է, քանի որ, եթե չհատուցվի, Փրկիչն այն կպահանջի ամբողջ Եկեղեցուց:

Պողոս առաքյալն արդեն խոսել է տղամարդու և կնոջ համար ընդհանուր մի պարտքի մասին՝ ասելով. «Թող տղամարդը իր կնոջ հանդեպ կատարի իր պարտքը, նմանապես և կինը՝ իր ամուսնու հանդեպ» և ավելացնում. «Մի՛ խաբեք միմյանց» (Ա Կորնթ. 7:3): Ուրեմն յուրաքանչյուր ընթերցող կարող է կատարել իր պարտքերի հաշվեկշիռը:

Կարի՞ք կա արդյոք ավելացնելու, որ նրա խիղճը ծանրաբեռնվում է այն ամենով, որ նա չի հատուցում, և բեռնաթափվում այն ամենով, որ նա լիովին վճարել է: Այնքան ժամանակ, որ մենք ապրում ենք, օրվա ընթացքում, ցերեկ լինի թե գիշեր, չկա մի ժամ, երբ ինչ-որ բան պարտական չլինենք:

Երբ մեկը պարտք է ունենում, այն ամբողջապես վճարում է կամ չի վճարում. մեկը կամ մյուսը կարող է պատահել այս կյանքում: Մարդկանց մեջ ոմանք ոչ մի բան պարտական չեն ոչ ոքի, ուրիշներ վճարում են իրենց պարտքերի մեծ մասը, կան նաև ուրիշներ, որոնք հատուցում են իրենց պարտքի միայն փոքր մասը, տակավին ուրիշներ, որոնք ոչինչ չեն հատուցում և պարտական են ամեն ինչ: Բայց նա, ով կատարում է իր բոլոր պարտավորությունները, կարող է կարիք ունենալ կանխագույն պարտքերի ներման. տրամաբանորեն նա այդ ներումը կստանա, եթե մշտապես ջանացել է պահանջված ժամանակին վճարել իր պարտքերը: Այն բոլոր խարդախ գործերը, որոնք դրոշմված են մնում մեր բանականության մեջ, դառնում են մեր դեմ հրամանագրված մի պարտամուրհակ (Կող. 2:14), որի հիման վրա դատելու են մեզ. դրանք, այսպես ասած, արձանագրված են այն մատյանում, որ մեջտեղ պիտի հանվի այն ժամանակ, «երբ մենք բոլորս պիտի ներկայանանք Քրիստոսի ատյանի առաջ, որպեսզի յուրաքանչյուրն ստանա իր արժանի վարձն այն բանի, ինչ նա արել է իր մարմնի մեջ եղած ժամանակ՝ լինի բարի թե չար» (Հռոմ. 14:10, Կորնթ. 5:10): Առակաց գիրքն ակնարկում է այդ պարտքերը, երբ գրում է.

«Եթե հարգում ես ինքդ քեզ, գրավի տակ մի՛ դիր անձդ պարտքի դիմաց.

Քանզի եթե ստացածդ վերադարձնելու համար բավարար մի բան չունենաս,

Նրանք կվերցնեն մինչև անգամ վերմակը քո անկողնի» (Առակ. 22:26-27):

Ինչ են պարտական մեզ

Մենք միայն պարտապաններ չենք, մենք նաև պարտատերեր ենք: Մարդկանց մեջ ոմանք մեզ չնորհապարտ են մարդ լինելու մեր հանգամանքի պատճառով, ուրիշներ՝ քաղաքացի, հայր կամ որդի հորջորջվելու պատճառով, մեր կանայք՝ իրենց ամուսինները լինելու պատճառով, մեր բարեկամները՝ փոխադարձության պատճառով: Այսքան պարտապանների նկատմամբ, որոնք թերևս ժամանակին չվճարված պարտքեր ունեն, մենք պիտի վերաբերվենք մարդկայնորեն, չպիտի հիշենք նրանց պարտքերը, այլ՝

մե՛ր պարտքերը, որ հաճախ զանց ենք արել հատուցել մարդկանց և նույնիսկ Աստծուն:

Մենք պիտի հիշենք մեր պարտավորությունները, որ լրիվ չենք կատարել, այն զեղծարարություններն ու խարդավանքները, որ թույլ ենք տվել մեր մերձավորների հանդեպ և հետևաբար ավելի ներողամիտ պիտի լինենք մեր պարտապանների նկատմամբ, որոնք չեն վճարում իրենց պարտքերը: Մենք մեր հիշողությունից չպիտի հեռացնենք մանավանդ այն սխալները, որ գործել ենք Աստծու հանդեպ՝ չարախոսելով նրա մեծության մասին, ուրանալով ճշմարտությունը, անհամբերությամբ տրտնջալով նրա դեմ մեզ վրա հասած դժբախտությունների և չար փորձանքների համար:

Եթե պատահի, որ խստապահանջություն ցուցաբերենք մեր պարտապանների նկատմամբ, ապա մենք բաժանած կլինենք ճակատագիրն այն մարդու, որը չուզեց զիջել հարյուր դահեկանի պարտքը իր ծառայակցին այն բանից հետո, երբ տերը ազատել էր նրան իր պարտքից: Ավետարանի առակը պատմում է, որ այն ժամանակ տերը կապել տվեց նրան և ստիպեց, որ վճարի այն, ինչ նա պարտական էր իրեն: «Զա՛ր և ծո՛ւյլ ծառա, պետք չէ՞, որ գթայիր քո ծառայակցին, ինչպես ե՛ս գթացի քեզ: Բա՛նտ գցեք նրան, մինչև որ նա հատուցի այն ամենը, ինչ պարտական է»: Եվ Տերն ավելացնում է. «Այսպես պիտի վարվի ձեզ հետ իմ երկնավոր Հայրը, եթե ձեզանից յուրաքանչյուրը սրտանց չների իր եղբորը՝ նրա հանցանքները» (Մատթ. 18:23-35):

Մենք նույնպես պետք է ներենք նրանց, որոնք հաստատապես ասում են, թե զղջացել են մեր դեմ գործած իրենց հանցանքների համար՝ վերստին նույն հանցանքի մեջ ընկնելուց հետո: «Եթե քո եղբայրը, - ասում է Տերը, - օրը յոթն անգամ մեղանչի քո դեմ և յոթն անգամ վերադառնա դեպի քեզ ու ասի՝ զղջում եմ, պիտի ներես նրան» (Ղուկ. 17:3-4): Մենք չէ, որ խստապահանջ պիտի լինենք նրանց նկատմամբ, որոնք զղջում են. այդպիսիներն իրենք իրենց են վնասում, որովհետև «ով մերժում է խրատը, արհամարհում է իր Հոգին» (Առակ. 15:32):Պետք է նույնիսկ աշխատել հնարավոր եղած չափով խնամել այն մարդկանց, որոնք այն աստիճան ապականված են, որ այլևս ի վիճակի չեն ըմբռնելու իրենց թշվառությունը, որ կուրացնում է իրենց: Նրանց չարությունն ավելի դաժանորեն հարբեցնում է իրենց, քան գինին:

Պարտքերի ներումը

Երբ Ղուկասն ասում է՝ «Ների՛ր մեզ մեր մեղքերը» (այն մեղքերը, որ առաջ են գալիս մեր պարտքերից), նա նույն բանն է արտահայտում, ինչ որ Մատթեոսը, թեև վերջինս, թվում է, թե նկատի չունի այն մարդու պարագան, որն ուզում է ներել միայն զղջացող պարտապաններին: Արդարև, Ղուկասը մեջ է բերում Փրկչի հրամանը և ավելացնում՝ «որովհետև մենք ներում ենք բոլոր նրանց, որ պարտական են մեզ» (Ղուկ. 11:4): Ուրեմն մեզ իշխանություն է տրված ներելու մեր միջև կատարված հանցանքները, ինչ որ հստակորեն ցույց է տալիս «ինչպես մենք էլ ներում ենք մեր պարտապաններին» խոսքը կամ այս մեկը՝ «որովհետև մենք ներում ենք բոլոր նրանց, որ պարտական են մեզ»:

Նա, ով գործում է Հիսուս Քրիստոսի մղումով, ինչպես առաքյալները, ով իր գործի արդյունքներով ցույց է տալիս, որ ստացել է Սուրբ Հոգին և, դառնալով հոգևոր, հնազանդվում է Սուրբ Հոգու մղումներին որպես Աստծու որդի՝ ամեն ինչում գործելով ըստ իր բանականության, այդպիսի մեկը ներում է այն, ինչ որ ներում է Աստված, և չի

ներում աններելի մեղքերը: Ինչպես մարգարեները, որոնք չէին արտահայտում իրենց սեփական գաղափարները, այլ միայն՝ Աստծու կամքը, նա նույնպես գտնվում է Աստծու ծառայության տակ, և միայն Աստված է, որ իշխանություն ունի մեղքերի վրա:

Ահա թե Ավետարանը, ըստ Հովհաննես ավետարանչի, ինչպիսի բառերով է արտահայտում մեղքերը ներելու այն իշխանությունը, որ տրված է առաքյալներին: «Առե՛ք Սուրբ Հոգին. եթե մեկի մեղքերը ներեք, նրանց ներված կլինի, եթե մեկի մեղքերը չներեք, ներված չի լինի» (Հովհ. 20:23): Ով այս խոսքերը վերցնում է բառացիորեն, առանց մեկնաբանման, կարող է մեղադրել առաքյալներին, որ նրանք բոլոր մարդկանց մեղքերը չեն ներել, որպեսզի բոլորն էլ պարտահատույց եղած լինեն, այլ մի քանիսի մեղքերը չեն ներել, այնպես որ Աստված էլ, իր հերթին, չի ներել նրանց մեղքերը:

Այստեղ Օրենքը մեզ տալիս է մի գեղեցիկ օրինակ՝ ցույց տալու համար, որ Աստված է ներում մեղքերը մարդկանց միջնորդությամբ: Օրենքի պաշտոնյային, որ քահանան է, արգելված է զոհ մատուցել որոշ մեղքերի համար, որպեսզի ջնջի այն մարդկանց մեղքերը, որոնք օգտվում են դրանից: Նա իշխանություն ունի զոհ մատուցելու ակամա կատարված որոշ հանցանքների համար, բայց նա ո՛չ ողջակեզ և ո՛չ էլ զոհ է մատուցում՝ ջնջելու համար շնության, կամովին կատարված մարդասպանության մեղքը կամ ծանրագույն կարգի այլ մեղքեր: Այդպես էլ առաքյալներն ու նրանց հաջորդները՝ քահանաները, ըստ Քահանայապետի, ծանոթ են բուժման աստվածային եղանակին. նրանք սովորել են Սուրբ Հոգուց, գիտեն, թե ինչպիսի՛ մեղքերի համար պետք է զոհ մատուցել, ինչպիսի՛ ժամանակում և ի՛նչ ձևով: Նրանք գիտեն նաև, թե ո՛ր մեղքերի համար պետք է

ձեռնպահ մնան: Այսպես՝ Հեղի քահանան, երբ նրա երկու որդիները՝ Փենեսը և Օփնին, մեղանչեցին, անկարող էր նրանց օգնության գալու, որպեսզի ներեր նրանց հանցանքը: Նա այդ բանը խոստովանում է, երբ որ ասում է. «Եթե մի մարդ մեղանչում է մարդու դեմ, ապա կարելի է միջնորդել Տիրոջը, բայց եթե մի մարդ մեղանչում է Տիրոջ դեմ, ո՞վ պիտի աղոթի նրա համար» (Ա Թագ. 2:25):

Ես ինձ հարց եմ տալիս, թե ինչպե՛ս մարդիկ կարող են անցնել իրենց քահանայության իրավասության սահմանները (գուցե կրոնական կարգապահությանը գիտակ չլինելու պատճառով) և երաշխավորել, որ կներեն շնության, պոռնկության մեղքերը, իբր թե նման ծանր հանցանքների հեղինակների վրա իրենց արտասանած աղոթքները կարողանային ջնջել մահացու մեղքերը: Ուրեմն նրանք անգիտանում են հետևյալ խոսքը. «Մեղք կա, որ առաջնորդում է մահվան. դրա համար չէ, որ խնդրում եմ աղոթել» (Ա Հովհ. 5:16): Հիշենք, որ արիասիրտ Հոբը իր որդիների համար զոհ մատուցելիս ասաց. «Գուցե իմ զավակներն իրենց մտքում մեղանչած լինեն Աստծու դեմ» (Հոբ 1:5): Այս կասկածանքի մեջ Հոբը զոհ է մատուցում, եթե նույնիսկ մտքում գործված մեղքը չի էլ հասել շրթունքներին[21]:

ԵՎ ՍԻ՛ՏԱՐ ՄԵԶ ՓՈՐՁՈՒԹՅԱՆ, ԱՅԼ ՓՐԿԻՐ ՄԵԶ ՉԱՐԻՑ[22]

29. «Այլ փրկի՛ր մեզ չարից» բառերը չկան Ղուկասի ավետարանում: Եթե Փրկիչը մեզ խնդրել չի տալիս անկարելին, ապա լավ կլինի փնտրել, թե ինչպես պետք է աղոթենք, որ փորձության չենթարկվենք այն դեպքում, երբ մարդուս ամբողջ կյանքը շարունակական մի փորձություն է: Այնքան ժամանակ, որ ապրում ենք երկրի վրա, կապված

ենք մնում մարմնին, որը պայքարում է Հոգու դեմ. «Մարմնի ցանկությունը հակառակ է Աստծուն և չի հնազանդվում Աստծու օրենքին» (Գաղ. 5:17), ուստի մենք ենթակա ենք փորձության (Հռոմ. 8:7): Հոբն ինքը ևս մեզ սովորեցնում է, որ մարդուս ամբողջ կյանքը փորձություն է. «Փորձություն չէ՞ միթե մարդու կյանքը երկրի վրա» (Հոբ 7:1): Նույն հաստատումն ենք գտնում նաև 17-րդ սաղմոսում. «Քեզնով կփրկվեմ ես փորձությունից» (Սաղմ. 17:30): Պողոս առաքյալը կորնթացիներին գրած իր թղթում չի ասում, թե մենք փորձության չենք ենթարկվելու, այլ պարզապես ասում է, թե փորձության չենք ենթարկվելու մեր ուժերից ավելի. «Ձեզ վրա չի եկել ոչ մի փորձություն, որ անցած լինի մարդկային սահմանները: Բայց հավատարիմ է Աստված. նա թույլ չի տալու, որ դուք փորձության մեջ ընկնեք ավելի, քան կարող եք տանել: Փորձության կողքին նա կդնի այն միջոցները, որոնք կթույլատրեն ձեզ դիմանալ» (Ա Կորնթ. 10:13):

Մենք զերծ չենք փորձություններից. պետք է պայքարենք մարմնի դեմ, որը տենչում է և կռվում մտքի դեմ, կամ պետք է պայքարենք ամեն մարմնի հոգու դեմ, որը սիրտն է: Ահա այն պայքարը, որի մեջ ներգրավված են փորձություններ կրող մարդիկ: Եվ կամ մենք արդեն հասուն և փորձառու ըմբիշներ ենք, որոնք այլևս չեն պայքարում արյան և մարմնի դեմ, որոնք այլևս չեն կրում արդեն ոտքի կոխան դարձած մարդկային փորձություններ: Մենք պետք է կռվենք Իշխանությունների դեմ, Տիրակալությունների դեմ, այս խավար աշխարհի վեհապետների դեմ և երկնքի տակ եղող չար ոգիների դեմ (Եփ. 6:12):

Փրկիչն ինչպե՞ս կարող է մեզնից պահանջել, որ փորձության մեջ չընկնենք, երբ որ, ճիշտն ասած, Աստված փորձում է ամեն մարդու: Հիշենք, ասում է Հուդիթը ոչ միայն քահանաներին, այլ նաև իր բոլոր ընթերցողներին, թե ի՛նչ պատահեց Աբրահամի հետ, թե Աստված ինչքա՛ն փորձեց Իսահակին, և թե ի՛նչ ապրումներ ունեցավ Հակոբը Ասորիքի միջագետքում, երբ արածեցնում էր իր մորեղբոր՝ Լաբանի ոչխարները: Նա նրանց փորձության ենթարկեց՝ մաքրելու համար նրանց սրտերը: Աստված մեզ փորձում է ոչ թե կորստյան մատնելու, այլ ուղղելու համար (Հուդիթ 9:22-27): Դավիթը հետևյալ հաստատումն է անում բոլոր արդարների մասին՝ ասելով. «Բազում են արդարների նեղությունները» (Սաղմ. 34:20): Իսկ Պողոս առաքյալը Գործք Առաքելոցում նշում է. «Բազում նեղությունների միջով պետք է անցնենք Աստծու արքայությունը մտնելու համար» (Գործք 14:22):

Եթե ժողովրդի զանգվածի դատողությունից վեր բարձրանալ չգիտենք, ապա փորձության մեջ չընկնելու վերոհիշյալ խնդրանքի կապակցությամբ պետք է հաստատենք, որ առաքյալներն իրենք էլ լսելի չեղան Աստծու կողմից, երբ Տերունական աղոթքն էին անում: Նրանք անհաշիվ նեղություններ կրեցին իրենց ամբողջ կյանքի ընթացքում. տարապարհակ աշխատանքներ, բանտարկություններ, գանակոծություններ, հաճախ նույնիսկ մահ: Պողոս առաքյալը մասնավորապես հինգ անգամ երեսունինը հարված ստացավ հրեաներից, երեք անգամ նավաբեկության ենթարկվեց: Պատահեց, որ նա մեկ ցերեկ և մեկ գիշեր ծովի անդունդներում տառապի (Բ Կորնթ. 11:24-25): Նա ճնշված էր ամեն կողմից, հարվածված, հալածված, լքված: Նա խոս-

տովանում է. «Մինչև ներկա ժամը տառապում ենք քաղցից և ծարավից, մնացել ենք մերկ, ապտակվել, քշվել տեղից տեղ և սպառվել չարաչար աշխատելով մեր ձեռքերով. անիծում էին մեզ՝ օրհնում էինք, հալածում էին՝ դիմանում էինք, հայհոյում էին՝ մխիթարում էինք» (Ա Կորնթ. 4:11:13): Ուրեմն, եթե առաքյալները լսելի չեն եղել, ապա նրանց համար, որոնք աստիճանով նրանցից ցածր են, ի՞նչ հույս է մնում, որ Աստված կլսի իրենց աղոթքը:

Առակաց գրքում գրված է. «Փորձի՛ր ինձ, Տե՛ր, և քննի՛ր ինձ. կրակի բովից անցկացրո՛ւ իմ երիկամներն ու իմ սիրտը» (Առակ. 25:2): Եթե մեկը ուշադիր չլինի Տիրոջ հրամանին, կկարծի, թե այս խոսքերը հակառակ են այն բանին, ինչ մեզ սովորեցրել է մեր Տերը աղոթքի մասին: Ո՞վ մարդկանց զերծ կհամարի փորձություններից, երբ լավ գիտե նրանց էությունը: Առանց ջանք գործադրելու մարդ ե՞րբ է պաշտպանված եղել մեղքից: Աղքա՞տ ես՝ զգուշացի՛ր, որ «իզուր չերդվես Աստծու անունով» (Առակ. 30:9): Հարո՞ւստ ես՝ ինքնավստահ մի՛ եղիր դրա համար. հարուստը կարող է ստախոս դառնալ և իր գոռոզության մեջ ասել՝ ո՞վ է ինձ տեսնում: Ինքը՝ Պողոսը, որ ծայր աստիճան հարուստ էր խոսքով ու գիտությամբ և ենթակա իրեն ուրիշներից վեր դասելու վտանգին, կարիք զգաց Սատանայի խթանին, որը հանձն էր առել ապտակել նրան, որ չգոռոզամտի: Եթե մեկի խիղճը մաքուր է, և կարծում է, թե ինքն ազատ է չարից, թող կարդա, ինչ որ գրված է Մնացորդաց երկրորդ գրքում Եզեկիասի մասին, որը սայթաքեց նրա համար, որ մեծամտացել էր (Բ Մնաց. 32:25-26):

Փորձության ենթարկված մարդու կացությունը

Մենք շատ բան չասացինք աղքատների մասին: Եթե մեկը կարևորություն չտա դրան՝ պատճառաբանելով, որ փորձություն չկա աղքատության համար, թող իմանա, որ փորձիչը դավ է նյութում «աղքատի և տնանկի դեմ» (Սաղմ. 37:14), մանավանդ որ, ըստ Սողոմոնի, «աղքատը չի դիմանա սպառնալիքներին» (Առակ. 13:8): Անօգուտ է թվարկել այն մարդկանց, որ չարաշահելով իրենց հարստությունը՝ բաժանում են Ավետարանում հիշված մեծահարուստի ճակատագիրը: Ինչքա՜ն մարդիկ, չտանելով իրենց չքավորությունը, ապրեցին սրբերին անարժան կյանքով և այդ պատճառով կորցրին երկնային կյանքի հույսը: Իսկ նրանք, ովքեր գտնվում են կես ճանապարհին՝ հարստության և աղքատության միջև, առավել ևս ապահովված չեն իրենց միջակ ապրուստի միջոցներով:

Քաջառողջ և ուժեղ մարդը փորձությունից ապահով է կարծում իրեն իր քաջառողջության պատճառով: «Ո՞վ է կործանում Աստծու տաճարը (Ա Կորնթ. 3:17), եթե ոչ առողջ մարդիկ: Ոչ ոք սրա հակառակը չի ապացուցի, որովհետև սրանք ակնհայտ իրողություններ են: Հիվանդ մարդը հեշտությամբ կխուսափի Աստծու տաճարն ապականելու փորձությունից, երբ նրա անգործությունը պատճառ է դառնում, որ շատ շուտ հյուրընկալի պիղծ երազանքներ: Ի՞նչ կարիք կա թվարկելու մյուս բոլոր փորձությունները, որոնք սպասում են նրան, եթե նա զգաստ և արթուն չպահի իր սիրտը: Ուրիշ շատեր կան, որոնք, փորձություններից խորտակված, չկարողանալով քաջությամբ տանել հիվանդությունը, նախընտրեցին ավելի շուտ հիվանդացած տեսնել իրենց հոգին, քան թե մարմինը: Իսկ ուրիշներ, խուսափելու համար խայտառակությունից, ամաչեցին Քրիստոսի անունը կրել ազնվորեն և գահավեժ ընկան հավիտենական ամոթի մեջ:

Մարդկանց փառքը փորձություններից երաշխավորում

է իրենց: Որքա՜ն ճիշտ է ասված նրանց վերաբերող հետևյալ խոսքը. «Այդ իսկ է նրանց վարձը» (Մատթ. 6:2): Այս խոսքն ուղղված է նրանց, որոնք փնտրում են ամբոխի մեծարանքը: Նրանք պետք է վախենան այս մյուս խոսքից. «Դուք ինչպե՞ս կարող եք հավատալ, դուք, որ իրարից եք փառք առնում և չեք փնտրում այն փառքը, որ միակ Աստծուց է գալիս» (Հովհ. 5:44): Ի՞նչ կարիք կա թվարկելու անկումները գոռոզությամբ տառապող այն մարդկանց, որոնք աղնվազարմ են համարում իրենք իրենց, կամ ի՞նչ կարիք կա հիշատակելու ձախավեր քծնանքն այն բազմաթիվ անձանց, որոնք նվաստանալով կորացնում են իրենց ողնաշարը իրենցից բարձր թվացող մարդկանց առջև: Այդպիսի ստորաքարշությունը Աստծուց հեռացնում է նրանց, որոնց մեջ գոյություն չունի անկեղծ սեր. նրանք կեղծում են այն, ինչ գեղեցկագույնն է մարդկանց մեջ՝ եղբայրասիրությունը:

Ճիշտ է, ուրեմն, որ «փորձություն է մարդու ամբողջ կյանքը երկրի վրա»: Աղոթենք, որպեսզի փրկվենք դրանից: Մենք Աստծուն խնդրում ենք ոչ թե զերծ լինելու համար փորձությունից (ինչ որ անկարելի է մանավանդ երկրի վրա ապրող մարդկանց), այլ՝ որպեսզի չընկճվենք, երբ որ փորձվում ենք: Ով ընկճվում է փորձությունից, նա, ըստ իս, ընկնում մնում է նրա մեջ, բռնվում նրա ցանցի մեջ: Մեր Փրկիչն ինքը ևս մտավ այդ ցանցի մեջ նրանց պատճառով, ովքեր բռնված մնում են այնտեղ: «Նա նայում է ճաղերի միջից» (Երգ Երգոց 2:9): Նա զրուցում է նրանց հետ, ովքեր մնում են այնտեղ բռնված, ընկել են այդ ցանցի՝ փորձության մեջ: Նա ասում է նրանց, ովքեր իր նշանածն են. «Վե՛ր կաց, շտապի՛ր, իմ քույր, իմ սիրելի, իմ աղավնյակ» (Երգ Երգոց 2:10):

Ես ուզում եմ դեռ շարունակել՝ ցույց տալու համար, որ

մարդ արարածը փորձվում է անընդհատ. նույնիսկ այն մարդը, որը գիշեր ու զոր խորհրդածում է Աստծու օրենքի մասին և ճգնում գործադրել այն խոսքը, թե՝ «Արդարի բերանը իմաստություն պիտի բխեցնի» (Առակ. 10:31), զերծ չէ փորձությունից:

Քանի՜ քանիներ նվիրվել են Աստվածային Գրոց ուսումնասիրմանը և վատ են մեկնաբանել այն խոստումները, որ գտնվում են Օրենքում և մարգարեների գրքերում: Նրանք ընկել են անաստվածության և սրբապիղծ վարդապետությունների կամ երբեմն տխմար ու ծիծաղելի հավատալիքների մեջ: Ուրիշներ, որոնք արժանի չեն նույն մեղադրանքներին, այնուհանդերձ ընկել են միևնույն սխալների մեջ:

Նույն դժբախտությունն են ունեցել նաև ավետարանական և առաքելական գրքերի շատ ընթերցողներ. նրանք հնարել են ուրիշ մի Որդի կամ ուրիշ մի Հայր, քան այն Որդին և այն Հայրը, որ մեզ ուսուցանում են սրբերը, և որ հաստատում է ճշմարտությունը: Ով մոլորված թափառում է Աստծու և Քրիստոսի հետքերի վրա, նա հեռանում է ճշմարիտ Աստծուց և նրա միակ Որդուց: Նա իրականում չի պաշտում իր հիմար մտքի հնարանքը եղող Աստծուն և նրա Որդուն՝ երևակայելով, որ դրանք են Հայրը և Որդին: Նա տառապում է, որ չի հասկացել այն փորձությունը, որ պարունակում է Սուրբ Գրքերի ընթերցումը. նա զինված չի եղել դիմագրավելու համար թշնամու բախումը:

Աստծու կողմից թույլատրված փորձությունը

Ուրեմն մենք պետք է խնդրենք և չխուսափենք փորձությունից (ինչ որ անկարելի է), անակնկալի չգանք, ինչը պատահում է նրանց հետ, ովքեր խաղալիք են դառնում

փորձության ձեռքին և պարտվում: Աղոթքից բացի մեզ պատվիրվում է «փորձության մեջ չընկնել» (Ղուկ. 22:40), ինչ որ հստակ է՝ ըստ ասվածի: Աղոթքի մեջ, ընդհակառակը, պետք է ասենք Աստծուն. «Մեզ փորձության մեջ մի՛ գցիր»:

Տեսնենք, ուրեմն, թե Աստված ինչպես կարող է փորձության մեջ գցել նրան, ով չի աղոթում կամ լսելի չի եղել Աստծուց: Երբ մեկը փորձությունից պարտվել է, անհնար է, որ Աստված ինքը նրան փորձության մեջ գցած լինի, ասես ուզենար խորտակել նրան: Դժվարությունը մնում է դժվարություն, ինչ ձևի բացատրություն էլ փորձենք տալ «Աղոթեցե՛ք, որ փորձության մեջ չընկնեք» խոսքին: Եթե վատ բան է փորձության մեջ ընկնելը (որից զերծ մնալու համար աղոթում ենք Աստծուն), ապա անհեթեթ բան չէ՞ երևակայել, թե բարի Աստվածը, որը վատ պտուղներ չի կարող տալ, ուզենար մեկին գցել չարիքի մեջ:

Անօգուտ չէ նշել այստեղ Պողոս առաքյալի խոսքերը հռոմեացիներին ուղղված թղթում. «Պարծենալով, թե իմաստուն են, հիմարացան և անմահ Աստծու փառքը փոխարինեցին մահկանացու մարդուն, թռչուններին, չորքոտանիներին և սողուններին ներկայացնող պատկերներով: Դրա համար Աստված, ըստ իրենց սրտի մոլեկան ցանկությունների, նրանց մատնեց պղծության, որպեսզի անարգեն իրենց սեփական մարմինը» (Հռոմ. 1:22-24): Եվ մի քիչ ներքևում շարունակում է. «Ահա թե ինչու Աստված նրանց մատնեց ամոթալի կրքերի: Նրանց կանայք իրենց բնական կարիքները փոխանակեցին անբնական կարիքներով. նույնպես տղամարդիկ, թողնելով կնոջ հանդեպ իրենց բնական կարիքները, իրենց ցանկություններով բորբոքվեցին միմյանց հանդեպ» (Հռոմ. 1:26-27): Եվ տակավին՝

«Քանի որ նրանք չկամեցան պահել Աստծու ճշմարիտ ճանաչումը, Աստված նրանց մատնեց անարգ մտքերի, որ անեն անվայել բաներ» (Հռոմ. 1:28):

Այս բոլոր խոսքերը հարկ եղավ նշել նրանց համար, ովքեր բաժանում են աստվածությունը: Պետք է հարց տալ այն մարդկանց, որոնք մեր Տիրոջ բարի Աստվածը տարբերում են Օրենքի Աստծուց[23], թե արդյոք բարի Աստվա՞ծն է փորձության մեջ գցում նրան, ում աղոթքը լսելի չի եղել, Տիրոջ Հա՞յրն է, որ պղծության է մատնում նրանց, որոնք իրենց մոլեկան ցանկությունների պատճառով նախապես մեղանչել են՝ անարգելով իրենց սեփական մարմինը, և թե, արդյոք, ինչպես պնդում են նրանք, մոռացած դատաստանն ու չարչարանքները, Նա՞ է, որ նրանց մատնում է ամոթալի կրքերի, որպեսզի անեն բաներ, որ վայել չէ, և որպեսզի հենց դրա համար էլ դատապարտի նրանց:

Ես լավ գիտեմ, որ այս խորհրդածությունները մեծ խռովություն են առաջացնելու այդ մարդկանց սրտում: Այս պատճառով է, որ նրանք երևակայել են մի ուրիշ Աստված, քան այն Աստվածը, որ ստեղծել է երկինքն ու երկիրը: Օրենքի և Մարգարեների մեջ գտնելով նույնօրինակ շատ հատվածներ՝ նրանք պնդում են, որ նա, ով արտասանում է նման խոսքեր, բարի չէ:

Ինչ վերաբերում է մեզ, այն դժվարությունների առջև, որ հարուցում են մի՛ գցիր մեզ փորձության մեջ բառերը, որոնց կապակցությամբ մեջբերեցինք Պողոս առաքյալի խոսքերը, պետք է տեսնենք, թե ինչպես կկարողանանք պատասխանել նրանց առարկություններին:

Մեզ թվում է, թե Աստված խելացի մարդկանց հոգիները տնօրինում է՝ նկատի ունենալով նրանց հավիտենական կյանքը: Բայց այդ հոգիները մնում են ազատ[24]: Այդ ազատության շնորհիվ մարդկանց հոգիները կարող են բարձ-

բանալ և հասնել կատարելության բարձրակետին և կամ, անփութության պատճառով, խրվել մնալ չարի այս կամ այն ձևի մեջ: Որոշ մարդիկ շատ արագ և հեշտությամբ ապաքինվելով՝ սկսում են արհամարհել իրենց անցյալի հիվանդությունները: Նրանց թվում է, թե շատ հեշտ է բուժել այդ հիվանդությունները, և ի վերջո նորից են ընկնում նույն հիվանդությունների մեջ: Ահա թե ինչու Աստված իրավունք ունի արհամարհելու նրանց չարությունը, որը մեծանում է այն աստիճան, որ դառնում է անբուժելի: Հարատևելով չարիքի մեջ՝ մարդիկ ի վերջո փսխելու աստիճան կշտանում են մեղքից, կրում են դրա վատ հետևանքները և ատում այն, ինչի հետ նախապես գրկախառնվել էին: Այսպիսով նրանք կկարողանան բուժվել և ավելի ամուր պահել իրենց վերագտած հոգեկան առողջությունը:

Հրեա ժողովրդի օրինակը անապատում

Այսպես «իսրայելացիների խառնամբոխը այրվում էր մի մեծ ցանկությամբ. նրանք լաց լինելով նայեցին և ասացին. "Ո՞վ մեզ միս կտա ուտելու. մենք հիշում ենք ձկները, որ համարյա ձրի էինք ուտում Եգիպտոսում. վարունգը, սեխը, պրասը, սոխն ու սխտորը անընդհատ գալիս են մեր միտքը: Մեր աչքերը մանանայից բացի ուրիշ ոչ մի բան չեն տեսնում"»: Եվ մի քիչ ներքևում՝ «Մովսեսը լսեց իր ժողովրդին, որը լաց էր լինում՝ յուրաքանչյուրն իր ընտանիքում, իր վրանի մուտքին» (Թվոց 11:4-6,10): Ավելի ներքևում՝ «Տերն ասաց Մովսեսին. "Կասես ժողովրդին՝ մաքրվեցե՛ք, վաղը միս կուտեք, որովհետև լաց լինելով ասում էիք, թե՝ ո՞վ մեզ միս կտա ուտելու, Եգիպտոսում մենք լավ էինք: Ուրեմն Տերը ձեզ միս կտա, որ ուտեք ոչ թե միայն մեկ օր, ոչ թե երկու, հինգ, տասը, քսան օր, այլ ամբողջ մեկ ամիս, մինչև որ այն դուրս գա ձեր քթից և խառնի ձեր սիրտը, որովհետև դուք մերժեցիք Տիրոջը, որ միշտ ձեր մեջ է, և լաց եղաք նրա առջև՝ ասելով. ինչո՞ւ դուրս ելանք Եգիպտոսից"» (Թվոց 11:18-20):

Տեսնենք, ուրեմն, թե ճի՞շտ արեցինք մեջ բերելով այս պատմությունը, որպեսզի լուծենք այն դժվարությունը, որ հարուցում է հետևյալ խոսքը. «Մի՛ գցիր մեզ փորձության մեջ»: Այրվելով մի մեծ ցանկությամբ՝ իսրայելացիների չփոթված խառնամբոխը միասին լաց էր լինում: Բնականաբար այնքան ժամանակ, որ չունեին իրենց ցանկացածը, նրանք չէին կարող զզվանք զգալ դրանից և ոչ էլ դադարել դրանով տառապելուց: Բայց Աստված բարի է և սիրում է մարդկանց: Նա բավարարում է նրանց քաղցը՝ առանց թողնելու, որ մշտապես մնան ցանկության մեջ: Այսպես, ասում է Սուրբ Գիրքը, նրանք միայն մեկ օր չմնացին առանց միս ուտելու. նրանց սաստիկ ցանկությունը, թեկուզ կարճ ժամանակ, կշարունակեր այրել և մաշեցնել նրանց հոգին: Ոչ էլ Աստված երկու օրում խաղաղեցրեց նրանց ցանկությունը. նա ուզեց զզվանք առաջացնել նրանց մեջ: Ուրեմն նա չգոհացավ խոստումներով, այլ նրանց մի տեսակ խեղդեց իր պարգևներով՝ ասելով. դուք միս կուտեք ոչ թե երկու անգամ հինգ օր, ոչ թե չորս անգամ հինգ օր, այլ ամբողջ մեկ ամիս, մինչև որ այն դուրս գա ձեր քթից, և դուք մաղձացավությամբ տառապեք, որպեսզի անհետանա ձեր միջից այդ անկարգ և վտանգավոր ցանկությունը:

Այսպես ձեզ դուրս կբերեմ կյանքից առանց ցանկության: Հիշողությունն այն բանի, որով դուք տառապեցիք, որպեսզի մաքրվեք մոլի ամեն ցանկությունից, կարգելի ձեզ, որ այլևս երբեք չընկնեք ցանկությունների մեջ: Եթե հետագայում պատահաբար մոռանաք ցանկության հետևանքով ձեր կրած այս բոլոր փորձությունները և կատա-

բելապես չընդունեք այն խոսքը, որ ձեզ ազատում է, դուք նորից կընկնեք ձեր դժբախտությունների մեջ: Վերջապես եթե ուզում եք վերապրել, դուք կրկին կխնդրեք այն, կարհամարհեք ինչ որ ցանկացել եք, կփնտրեք երկնային սնունդը և այն, ինչ գեղեցիկ է. դրանք աչքաթող արած լինելը ձեզ փնտրել տվեց վատագույնը[25]*:*

Աստվածաշնչական այլ օրինակներ

Դա նաև ճակատագիրն է բոլոր նրանց, ովքեր «անմահ Աստծու փառքը փոխարինեցին մահկանացու մարդուն, թռչուններին, չորքոտանիներին և օձերին ներկայացնող պատկերներով» (Հռոմ. 1:23) և Աստծուն լքելով ու իրենց սրտի տենչանքներին անսալով՝ անձնատուր եղան պղծության այն աստիճան, որ անարգեցին իրենց սեփական մարմինը: Նրանք անկենդան և անզգա մարմնին տվեցին Նրա անունը, ով բոլոր զգայուն և բանական էակներին տալիս է ոչ միայն զգայություն և բանականություն, այլև ոմանց նույնիսկ կատարյալ զգայություն և իմացականություն: Հիրավի, Աստծուն լքած այս մարդիկ, իրենց հերթին, լքվել են Աստծուց. նրանք անձնատուր են եղել ամոթալի կրքերի և ստանում են արդար հատուցումն այն հանցանքի, որ իրենց սիրել է տվել աղտեղի հաճույքը: Եվ հանցանքի այդ հատուցումը, երբ անձնատուր են լինում ամոթալի կրքերի, շատ ավելի դաժանորեն է հարվածում նրանց, քան եթե մաքրված լինեին հոգևոր կրակով ու բանտ նետված, մինչև որ ստիպված լինեին վճարել իրենց պարտքերի վերջին նաքարակիտը:

Երբ նրանք անձնատուր են լինում պղծությանը, շաղախվում են բնության համաձայն, ինչպես նաև բնության հակառակ ծանրագույն հանցանքներով: Նրանք խոշտանգվում են իրենց սեփական մարմնով: Կրակի մեջ և բանտում նրանք ստանում են ոչ թե հանցանքի հատուցումը, այլ չարիքներից մաքրված լինելու բարիքը, այն չարիքներից, որ ուղեկցում են հանցանքին: Այսպիսով, ովքեր սիրել էին հաճույքը, փրկվում են աղտեղությունից և արյունից, որոնցով ծանրաբեռնված էին, առանց իմանալու, թե ինչպես պիտի կարողանային խույս տալ կորստից:

Ուրեմն «Տերը պիտի լվանա Սիոնի տղաների և աղջիկների աղտեղությունը և պիտի մաքրի թափված արյունը կործանման շնչով» (Եսայի 4:4): «Քանզի նա պիտի լինի ինչպես այն կրակը, որը հալեցնում է մետաղները, և այն խոտը, որ թակում են տոփանները» (Մաղաք. 3:2): Նա պիտի լվանա և մաքրի նրանց, ովքեր կարիք ունեն այդ դեղերին նրա համար, որ չցանկացան պահել Աստծու ճշմարիտ ճանաչումը: Այդ մարդիկ կամովին անձնատուր պիտի լինեն այս փորձություններին և պիտի ատեն իրենց չար հոգին, որովհետև Աստված չի ուզում պարտադրել բարին, նա ուզում է ազատ էակներ: Որոշ մարդիկ, անընդհատ անձնատուր լինելով չարին, այլևս գրեթե բնավ ամոթ չեն զգում, նրանք այն մերժում են՝ սխալմամբ բարու տեղ դրած լինելու համար:

Աստված փարավոնի սիրտը չխստացրե՞ց, որպեսզի վերջինս կարողանար ասել այն, ինչ հայտարարել էր իր խստությունից առաջ. «Տերը արդար է, իսկ ես և իմ ժողովուրդը ամբարիշտներ ենք» (Ելից 9:27): Նա կարիք ունի էլ ավելի խստանալու և տառապելու, ասես նրա խստասրտությունը շատ շուտ վերջացած լիներ, նա այլևս այն չէր արհամարհի որպես չարություն և հենց դրանով էլ արժանի կլիներ էլ ավելի խստասիրտ դառնալու: Ուրեմն, ինչպես ասված է Առակաց գրքում, եթե «անարդար բան չէ թակարդ լարել թռչունների համար» (Առակ. 1:17), ապա

Աստված իրավունք ունի մեզ թակարդի մեջ գցելու ըստ այն խոսքի, թե՝ «Դու որոգայթի մեջ գցեցիր մեզ» (Սաղմ. 65:11): Նույնիսկ թռչունների մեջ ամենից արհամարհվածը՝ ճնճղուկը, թակարդի մեջ չի ընկնի առանց Հոր կամքի: Եթե ընկնում է, ապա նրա համար է, որ վատ է գործածել իր թևերը, որոնք իրեն պետք է բարձրացնեին դեպի օդը: Ուրեմն մեր աղոթքի մեջ խնդրենք չանել ոչ մի բան, որ մեզ գցի Աստծու արդար դատաստանին ենթակա փորձության մեջ, ինչ որ պատահում է ամեն մարդու, որը Աստծու կողմից, ըստ իր սրտի մոլի ցանկությունների, անձնատուր է եղել աղտեղության, ամոթալի կրքերի, հոռի դատողության՝ անելու համար այն, ինչ վայել չէ:

Փորձության օգտակարությունը

Փորձությունը լավ է ինչ-որ բանի: Աստծուց բացի բոլորն անգիտանում են, ինչ որ մեր հոգին ստացել է Աստծուց, նույնիսկ մենք: Բայց փորձությունն այն ցույց է տալիս մեզ՝ սովորեցնելու համար ճանաչել մեր անձը, այդպիսով բացահայտելու մեր թշվառությունը և ստիպելու մեզ գոհություն մատուցել այն բարիքների համար, որ մեզ ցույց է տվել փորձությունը: Արդեն Հոբի գրքում և Երկրորդ Օրենքում Տերը հայտնում է, որ փորձությունը ծառայում է ցույց տալու մեր սրտերի թաքուն զգացումները: Նա ասում է. «Ի՞նչ պատճառով կարծում ես, որ պատասխանեցի քեզ, եթե ոչ նրա համար, որ դու արդար երևաս» (Հոբ 40:3): Իսկ Երկրորդ Օրենքում՝ «Նա քեզ տանջեց քաղցով, իբրև սնունդ քեզ մանանա տվեց և քեզ առաջնորդեց անապատի միջով, ուր ահագդու օձը, կարիճն ու սողուններն են բնակվում, որպեսզի հայտնի լինեն քո սրտի մտածումները» (Բ Օր. 8:3,15):

Պատմությունից մի օրինակ ևս վերցնելու համար հիշենք, որ Եվայի հոգին տկար և խոցելի չդարձավ այն պահին, երբ նա չհնազանդվեց Աստծուն և լսեց օձին, նա այդպիսին էր նախապես. օձը նրան մոտեցավ, որովհետև իր սրաթափանց միտքը նախապես բացահայտել էր կնոջ տկարությունը: Աստված, որ զննում է սրտերը «ուշադրություն չդարձրեց Կայենին և ոչ էլ իրեն մատուցած նրա ընծաներին» (Ծննդ. 4:5): Բայց Կայենի չարությունը հայտնի դարձավ, երբ նա կորստյան մատնեց իր եղբորը: Նույնը կարելի է ասել Նոյի համար. եթե նա խմած չլիներ իր տնկած այգու գինուց մինչև իր հարբելն ու մերկանալը, Քամի անպատկառությունն ու ամբարշտությունը, ինչպես նաև նրա մյուս եղբայրների հարգանքն ու մեծարանքը իրենց հոր հանդեպ առիթ չէին ունենա ի հայտ գալու (Ծննդ. 9:20-24):

Նույնպես և այն թակարդները, որ Եսավը լարում է Հակոբի դեմ, թվում է, թե առաջ են եկել հայրական օրհնությունը գողանալու պատճառով: Բայց դրանց արմատները թաղված էին նրա հոգու մեջ, որը «պիղծ էր և մեղանչական» (Եբր. 12:16): Հովսեփի հոգու հիանալի մաքրությունը, որ գերիվեր էր ամեն պիղծ ցանկությունից, հայտնի չէր լինի, եթե նրա տիրուհին ցանկությամբ վառված չլիներ նրա համար (Ծննդ. 39):

Ահա թե ինչու այլազան փորձություններն իրարից բաժանող ժամանակամիջոցի մեջ մենք պետք է նայենք ապագային և նախապատրաստվենք տանելու այն ամենը, ինչ ապագան վերապահում է մեզ, որպեսզի հանկարծակիի չգանք և միշտ մեզ գտնենք պատրաստ վիճակում: Ինչ որ պակասի մեզ մեր մարդկային տկարության պատճառով, երբ կատարած լինենք մեր կարելին, այն կլրացնի Աստված, Նա, որ ամեն ինչում գործակցում է բոլոր նրանց, ովքեր

սիրում են իրեն, բոլոր նրանց, ում, անսխալական կանխագիտությամբ, նախապես գիտե, թե ինչ են լինելու[26]:

ՓՐԿԻ՛Ր ՄԵԶ ՉԱՐ ՈԳՈՒՑ

30. «Մի՛ գցիր մեզ փորձության մեջ» խոսքից հետո ինձ թվում է, թե Ղուկաս ավետարանիչը սովորեցրել է նաև «Փրկի՛ր մեզ չար Ոգուց» խոսքը[27]: Հավանաբար Տերը ավելի հակիրճ ձևով է խոսել մտքով բավականաչափ առաջացած իր աշակերտների հետ, իսկ ժողովրդի բազմության հետ, որը կարիք ուներ ավելի ընդլայնված ուսուցման, խոսում է ավելի մանրամասն ձևով: Աստված մեզ փրկում է չար Ոգուց ոչ թե այն ժամանակ, երբ թշնամին չի հարձակվում մեզ վրա իր ճարտար հնարքներով և չար գործակալներով, այլ երբ ձախողության ենք մատնում նրան մեր կատաղի դիմադրությամբ: Այսպես ենք հասկանում մենք հետևյալ խոսքը. «Բազում են արդարի նեղությունները, բայց Աստված փրկում է նրան այդ բոլորից» (Սաղմ. 34:20): Աստված մեզ փրկում է նեղությունից ոչ թե այն աստիճան, որ դրանք վերացնի (թեև Պողոս առաքյալն ասում է՝ «ամեն կողմից ճնշված»), այլ՝ նեղությունների մեջ մենք չճնշվենք շնորհիվ Աստծու օգնության: Ըստ եբրայական բնագրի՝ նեղություն բառն արտահայտում է մեր կամքից անկախ մի վիճակ, մինչդեռ ճնշումը կախված է մեզանից, երբ նեղությունը ճզմում է մեզ: Նաև Պողոս առաքյալը կարողացել է գրել. «Ամեն կողմից նեղությունների մեջ ենք, բայց ընկճված չենք» (Բ Կորնթ. 4:8): Ըստ իս, այս միտքը մենք գտնում ենք Սաղմոսաց գրքում. «Նեղության մեջ ինձ հանգստություն ես տալիս» (Սաղմ. 4:2): Հանգստություն տալու փաստը ցույց է տալիս հոգեկան ուրախությունը, փորձությունների մեջ այն անդորրը, որը

գալիս է Աստծուց, և դա շնորհիվ աստվածային Բանի օգնության և ներկայության:

Ահա այս ձևով է, որ մենք «փրկվում ենք չար Ոգուց»: Աստված Հոբին փրկեց ոչ թե այն աստիճան, որ արգելի սատանային փորձության ենթարկել նրան, այլ որովհետև Հոբը բնավ չի մեղանչել Տիրոջ առջև և անընդհատ երևացել է որպես արդար մարդ: Սատանան ասել էր. «Միթե Հոբը անշահախնդրորե՞ն է երկյուղում Աստծուց: Չէ՞ որ պատնեշի նման դու ես պարփակել նրա անձը, նրա տունը և ամբողջ ունեցվածքը: Բայց մեկնի՛ր մի քիչ քո ձեռքը և փորձիր դիպչել նրա ամբողջ ունեցվածքին՝ տեսնելու համար, թե նա դարձյալ կօրհնի՞ քեզ դեմառդեմ» (Հոբ 1:9-11): Եվ Սատանան ամոթահար եղավ, որ զրպարտել է Հոբին: Վերջինս, անչափ նեղությունների մատնվելով հանդերձ, ոչ մի խոսք չասաց Աստծու դեմ, ինչպես այդ մասին հավակնել էր Հակառակորդը: Չնայած որ անձնատուր էր եղել փորձիչին, Հոբը շարունակեց օրհնել Աստծուն: Նա հանդիմանեց իր կնոջը, որն ասում էր իրեն. «Անիծի՛ր Տիրոջը և մեռի՛ր»: Հոբը սաստեց նրան՝ ասելով. «Դու խոսում ես անզգամ կնոջ նման. եթե Տիրոջ ձեռքից բարիքներն ընդունեցինք, ինչո՞ւ չընդունենք նաև նեղությունները» (Հոբ 2:9-10):

Երկրորդ անգամ Սատանան ասում է Տիրոջը Հոբի մասին. «Մարդը միշտ կտա մորթի դեմ մորթ և կթողնի, ինչ որ ունի՝ փրկելու համար իր կյանքը: Հապա մեկնի՛ր ձեռքդ և դիպչի՛ր նրա ոսկորներին և մսին, ու կտեսնես, թե նա կօրհնի՞ քեզ դեմառդեմ» (Հոբ 2:4-5): Սատանան պարտվեց կորովի ըմբիշի առաքինությունից, և նրա սուտը բացահայտվեց: Հոբը երբեք չմեղանչեց և ոչ մի խոսք չարտաբերեց Աստծու դեմ: Նա երկու անգամ պայքարի մեջ մտավ և դուրս ելավ հաղթական: Երրորդ մի պարտավորություն

խնայվեց նրան: Երեք անգամ կռվի դուրս գալու փորձությունը վերապահվեց Փրկչին (ինչպես այդ մասին մեզ հիշատակում են երեք ավետարանիչները), և մարդացած Փրկիչը երեք անգամ հաղթեց թշնամուն:

Մենք ուշի ուշով քննության առանք և վերլուծեցինք Տիրոջ խոսքերը, որպեսզի, իմանալով փաստերը, խնդրենք Աստծուն, որ փորձության մեջ չընկնենք և փրկվենք չար Ոգուց: Մենք արժանի ենք լսելի լինելու Աստծուց նրա համար, որ լսել ենք նրան: Ուրեմն աղոթենք Տիրոջը, որ եթե փորձվում ենք՝ չընկճվենք, և եթե չար Ոգու բոցավառ սլաքները մեզ վրա են ուղղվում, դրանց զոհը չդառնանք: Բոցերի զոհ են դառնում նրանք, որոնց սրտերը, ըստ տասներկուսից մեկի խոսքի, «հնոցի պես են» (Օսե 7:6): Ովքեր իրենց ձեռքում են պահում հավատի վահանը, խուսափում են չար Ոգու հրավառ սլաքներից: Արդարև, նրանք իրենց մեջ ունեն «ժայթքող ջրի աղբյուր հավիտենական կյանքի համար» (Հովհ. 4:14), որը կասեցնում է չար Ոգու կրակը և այն հանգցնում աստվածային կեցուցիչ մտածումների հեղեղով: Այդ մտածումները դրոշմված են մնում այն մարդու հոգու մեջ, ով աշխատում է դառնալ ոգեղեն ճշմարտության հայեցողությամբ:

III. ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԱՂՈԹՔԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԱՂՈԹՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

31. Ամբողջացնելու համար մեր այս ուսումնասիրությունը՝ կարծում եմ անօգուտ չի լինի հստակեցնել մի քանի մանրամասնություններ աղոթքի համար պահանջվող պայմանների վերաբերյալ: Նախ՝ այն տեղը, որ պետք է ընտրել, այնուհետև՝ այն դիրքը կամ ուղղությունը, որ հարկավոր է գտնել, երբ ոչ մի արգելք չի խանգարում դրան, նաև այն ժամանակը, որ հարմար է աղոթքի համար և այլ նկատառումներ:

Որոշ պայմաններ վերաբերում են աղոթողի հոգուն, այլ պայմաններ՝ նրա մարմնին: Պողոս առաքյալը պարզաբանում է դրանք վերևում նշված հատվածներից մեկում: Ամենից առաջ պետք է աղոթել առանց բարկության, առանց երկմտության՝ մաքուր ձեռքեր բարձրացնելով դեպի երկինք (Ա Տիմ. 2-8): Թվում է, թե Առաքյալը ներշնչվել է սաղմոսերգուի հետևյալ խոսքից. «Ձեռքերիս կարկառումը քեզ է ուղղվում իբրև երեկոյան պատարագ» (Սաղմ. 141:2): Տեղի մասին նշված է. «Ուզում եմ, որ տղամարդիկ աղոթեն ամեն տեղ» (Ա Տիմ. 2-8): Սողոմոն իմաստունը հստակորեն նշում է այն դիրքը, որ պետք է ընտրի աղոթողը. «Թող իմանան, որ պետք է վեր կենալ արեգակի ծագելուց առաջ և աղոթելիս նայել դեպի արևածագը» (Իմաստ. 16:28):

Ինչ տրամադրություններով պետք է աղոթել

Ինձ թվում է, որ նա, ով տրամադրվում է աղոթելու, պետք է ինքնամփոփվի և որոշ չափով նախապատրաստվի, որպեսզի լինի ավելի փութաջան ու ժիր, ավելի ուշադիր աղոթքի ամբողջությանը: Պետք է նմանապես իր մտքից վանի բոլոր նեղություններն ու խռովքները և աշխատի հիշել Աստծու մեծությունը, որին ինքը մոտենում է, մտածի, որ ամբարշտություն է նրան ներկայանալ առանց ուշադրության, առանց ջանքի, մի տեսակ անհոգությամբ, արձակհամարձակ: Վերջապես պետք է դեն գցել ամեն տեսակ օտարոտի մտածում:

Աղոթքի կանգնելիս աղոթողը ձեռքերն Աստծուն ներկայացնելուց առաջ պետք է իր հոգի՛ն ներկայացնի նրան, աչքերը Բարձրյալին ուղղելուց առաջ պետք է իր մի՛տքը ուղղի նրան, նախքան վեր կենալը պետք է երկրային ամեն բանից անջատի իր միտքը՝ այն ամբողջությամբ մատուցելու համար տիեզերքի Տիրոջը. վերջապես նա անհիշաչարությամբ պետք է մի կողմ դնի ու մոռանա այն բոլոր վիրավորանքները, որ կարծում է, թե հասցրել են իրեն, եթե ուզում է, որ Աստված մոռանա իր դեմ, իր մերձավորների դեմ և ողջամտության դեմ գործված չարիքը:

Քանի որ մարմինը կարող է շատ դիրքեր ընդունել, այն դիրքը, երբ մենք մեկնում ենք մեր ձեռքերը վեր և բարձրացնում մեր աչքերը դեպի երկինք, վստահաբար պետք է նախընտրելի լինի մյուս բոլոր դիրքերից, որպեսզի աղոթքի ժամանակ մարմինն արտահայտի պատկերը հոգու բոլոր տրամադրությունների: Մենք ասում ենք, որ այս ձևով պետք է անել, երբ արգելքներ չկան: Բայց երբեմն հանգամանքները կարող են ստիպել մեզ, որ աղոթենք նստած, օրինակ՝ երբ ոտքերի ցավ ունենք, կամ նույնիսկ պառկած, երբ ջերմություն ունենք: Նույն պատճառով, եթե, օրինակի համար, նավի մեջ ենք, կամ մեր գործերը թույլ չեն տալիս մեզ առանձնանալ՝ կատարելու համար աղոթքի մեր պարտականությունը, կարելի է աղոթել առանց արտաքին որևէ դիրք ընդունելու:

Աղոթել ծնրադրելով

Ծնկաչոք աղոթքն անհրաժեշտ է, երբ աղոթողը իր սեփական մեղքերն է խոստովանում Աստծու առաջ՝ աղաչելով նրան, որ բժշկի իրեն կամ թողություն տա իր մեղքերին: Այս ձևի աղոթքը խորհրդանիշն է այն ծնրադրության և հնազանդության, որի մասին արտահայտվում է Պողոս առաքյալը, երբ գրում է. «Ահա թե ինչու ծնկներս խոնարհեցնում եմ Հոր առջև, որից իր անունն է ստանում ամեն հայրություն երկնքում և երկրի վրա» (Եփ. 3:14 և 15): Հենց սա է, այսպես կոչված, հոգեկան ծնրադրությունը, քանզի ամեն արարած պաշտում է Աստծուն Հիսուսի անունով և խոնարհաբար հնազանդվում նրան: Թվում է, թե Առաքյալի ակնարկությունը սրան է վերաբերում, երբ ասում է. «Հիսուս Քրիստոսի անունով թող խոնարհվի ամեն ծունկ թե՛ երկնքում, թե՛ երկրի վրա և թե՛ դժոխքում» (Փիլ. 2:10):

Պետք չէ երևակայել, որ երկնային էակներն ունեն մարմիններ և ծնկներ մեր մարմինների և ծնկների նման, որովհետև այս հարցը հմտորեն ուսումնասիրող անձանց կողմից ապացուցված է, որ նրանք ունեն գնդաձև մարմիններ[28]: Ով չի ընդունում այս դրույթը, պետք է գոնե ընդունի (եթե միայն անմիտ չէ), որ մարմնի յուրաքանչյուր անդամ ունի իր օգտակարությունը, և որ Աստված չի կարող

ստեղծել որևէ բան առանց օգտակարության և առանց նպատակի:

Նմանապես սխալվում է նա, ով պնդում է, թե մարմնի տարբեր մասերը մեզ չեն տրված հատուկ գործողություններ կատարելու համար, կամ երկնայինների մարմինները պատկերացնում է մեր մարմինների նման որովայնով և աղիներով, որոնք բնական գործողություններ են կատարում: Անհեթեթ չէ՞ր լինի նաև նրանց երևակայել որպես արձաններ, որոնք արտաքուստ մարդկային ձև ունեն և կայուն չեն: Այս բոլորը նշեցինք ծնրադրության կապակցությամբ, որի մասին ասում է վերոհիշյալ հատվածը. «Հիսուս Քրիստոսի անունով թող խոնարհվի ամեն ծունկ թե՛ երկնքում, թե՛ երկրի վրա և թե՛ դժոխքում»: Նաև մյուս խոսքը՝ «Ամեն ծունկ խոնարհվելու է իմ առջև» (Եսայի 45:23):

Աղոթքի տեղը

Գալով աղոթքի տեղին՝ պետք է գիտենալ, որ աղոթքի համար ամեն տեղ հարմար է նրա համար, ով լավ է աղոթում: «Ամեն տեղ խունկ մատուցեք իմ անվան»(Մաղ. 1:11), ասում է Տերը: Նաև՝ «Ուզում եմ, որ մարդիկ աղոթեն ամեն տեղ» (Ա Տիմ. 2-8): Սակայն աղոթքի պարտականությունը ավելի հանգստությամբ և նվազ մտացրիվ կատարելու համար կարելի է որոշակի մի անկյուն ընտրել տանը, եթե դա հնարավոր է և բնակարանը՝ ընդարձակ, մի տեղ, որ, այսպես ասած, վերապահված լինի աղոթքին: Բայց անհրաժեշտ է նախապես քննել, թե որևէ անպատեհ բան չկա՞ աղոթքի համար նախատեսված տեղի վերաբերյալ: Կարող է Աստված իր հայացքը չեղել ոչ միայն մեզնից, այլև՝ ընտրված տեղից:

Այս հարցի մասին հաճախակի մտածելով՝ իմ մտքում

ծագեց մի գաղափար, որ կարող է ծայրահեղ թվալ, բայց գուցե մեկնումեկը կբաժանի այն, եթե լրջորեն մոտենա հարցին: Մի աղոթք, որ կատարվում է ամուսնական սենյակում, ուր տեղի է ունենում մարմնական գործողությունը, ոչ թե այն գործողությունը, որ արգելված է բարոյապես, այլ այն, որ Պողոս առաքյալը թույլատրում է ներողամտորեն և ոչ պարտավորվածությամբ, արդյո՞ք մաքուր և սուրբ գործ է թվում Աստծու աչքին: Հարցը մնում է բաց, քանի որ Առաքյալը խոսում է նրանց մասին, ովքեր, փոխադարձ համաձայնությամբ, միառժամանակ հրաժարվում են մոտենալ միմյանց, որպեսզի նվիրվեն աղոթքի (Ա Կորնթ. 7:5):

Համայնական աղոթք

Աստվածային առանձնահատուկ մի շնորհ և օգտակարություն կա աղոթքի տեղում, ուզում եմ ասել՝ հավատացյալների ժողովատեղում: Անտարակույս, հրեշտակների զորությունները մասնակցում են հավատացյալների հավաքին. այնտեղ ներկա է մեր Տիրոջ և Փրկչի սրբությունը, ներկա են սրբերի հոգիները, կարծում եմ ներկա են նաև ննջեցյալների հոգիները, որոնք նախորդել են մեզ, և, իհարկե, այն սրբերի հոգիները, որոնք ապրում են դեռ, թեև հեշտ չէ ասել, թե ինչպե՛ս են ներկա:

Ահա թե ինչ պետք է մտածել հրեշտակների մասին. «Տիրոջ հրեշտակը պատվում է իր երկյուղածների շուրջը և վտանգից փրկում է նրանց» (Սաղմ. 34:8): Հակոբը ճիշտ է ասում ոչ միայն ինքն իր մասին խոսելիս, այլև բոլոր նրանց մասին, ովքեր ծառայում են Աստծուն, երբ ասում է. «Հրեշտակն ինձ փրկեց ամեն տեսակ չարիքից» (Ծննդ. 48:16): Ուրեմն կարող ենք հաստատել հետևյալը. բազմա-

թիվ եղբայրների ժողովում, որոնք հավաքվում են Քրիստոսի փառքի համար, յուրաքանչյուրն ունի իր հրեշտակը, որը շրջապատում է նրանց, որոնք երկյուղում են Աստծուց և մնում նրա կողքին, ում հանձն է առել պաշտպանել և պահպանել: Սրբերի ժողովում հավաքվում են երկու եկեղեցիներ՝ մարդկանց եկեղեցին և հրեշտակների եկեղեցին:

Եթե Ռափայել հրեշտակը կարող էր ասել Տոբիթին, որն իր աղոթքն էր առաքում առ Աստված, իսկ հետագայում նաև նրա հարս Սառային, թե իրենց աղոթքների հիշատակը մատուցել է Աստծուն, ապա ի՞նչ կարող է ասել այն մեծ ժողովի մասին, որտեղ հավատացյալները, նույն ոգով և նույն մտածումով հավաքված, մեկ մարմին են կազմում ի Քրիստոս Հիսուս: Տիրոջ զորության մասին, որը կենդանացնում է իր Եկեղեցին, սուրբ Պողոսն ասում է. «Իմ հոգով և մեր Տեր Հիսուս Քրիստոսի իսկ զորությամբ ես գտնվում եմ ձեր ժողովում» (Ա Կորնթ. 5:4), որպեսզի լսել տամ, թե Տիրոջ զորությունը միայն եփեսացիների հետ չէր, այլ նաև՝ կորնթացիների հետ:

Ուրեմն, եթե Պողոս առաքյալը, որը մարմնով դեռ կենդանի էր, հավատացել է, թե հոգով կարող է մաս կազմել կորնթացիների ժողովին, ապա մենք կարող ենք մտածել, որ կյանքից հեռացած սրբերը ևս իրենց հոգով մասնակցում են հավատացյալների ժողովներին գուցե ավելի, քան նա, ով միայն ֆիզիկապես է գտնվում այնտեղ: Ուստի պետք չէ ստորագնահատել համայնական աղոթքը, որովհետև առանձին մի շնորհ է կապված դրան արդար և ուղղամիտ հոգիների համար:

Հրեշտակների ներկայությունը աղոթքի ժամանակ

Հիսուս Քրիստոսի զորությամբ Պողոս առաքյալի և մյուս սրբերի հոգիները, նաև Տիրոջ հրեշտակները, որոնք հսկում են հավատացյալներից յուրաքանչյուրի վրա, հավաքվում և միասնաբար աղոթում են նրանց հետ: Ուրեմն պետք է ամեն ոք զգուշանա, որ անարժան չլինի իր սուրբ հրեշտակին և Աստծուն դառնացնող սխալ վարքով չհանձնվի խավարի հրեշտակին: Ովքեր կգտնվեն այդ վիճակում, ինչքան էլ փոքրաթիվ լինեն նրանք, երկար ժամանակով չեն վրիպի հրեշտակների ուշադրությունից, որոնք Աստծու տնօրինությամբ Եկեղեցու պահպանության վրա կարգված լինելով որպես վերակացուներ, բոլոր հավատացյալներին ճանաչել կտան նրանց մոլորությունները:

Եթե այդպիսի մարդիկ մեծ թիվ կազմեն և մարդկային ընկերությունների նման հավաքվեն՝ խոսելու համար իրենց ժամանակավոր գործերից, ապա Աստծու հրեշտակներն այլևս չեն հսկի նրանց վրա: Աստված Եսայի մարգարեի բերանով կասի նրանց. «Ո՛չ, եթե դուք գաք ու կանգնեք իմ առաջ, ես չեմ նայի ձեզ վրա, եթե բազմապատկեք ձեր աղոթքները, չեմ լսի ձեզ բնավ» (Եսայի 1:12-13): Այն ժամանակ սրբերի և հրեշտակների ժողովի փոխարեն, որի մասին խոսեցինք, կկազմվի մեղավորների և չար հրեշտակների մի խառնաժողով: Այդպիսի մի խառնաժողովի մասին հրեշտակներն ու հավատացյալները կկարողանան ասել. «Ես չեմ նստի ունայնության ժողովի աթոռին, չեմ խառնվի անօրենների ամբոխին: Ատում եմ չարագործների ժողովը և ամբարիշտների կողքին չեմ նստի» (Սաղմ. 26:4-5):

Իմ կարծիքն այն է, որ Երուսաղեմում և ամբողջ Հրեաստանում գտնվող ժողովուրդը շատացրել է իր մեղքերը և

ընկել թշնամիների իշխանության տակ: Ովքեր անտեսել են օրենքը, անտեսվել են Աստծուց, պահապան հրեշտակներից և սրբերից, որոնք կարող էին փրկել նրանց: Այսպիսով ժողովներն ընկնում են փորձության մեջ այն աստիճան, որ կորցնում են այն, ինչ որ կարծում էին ունենալ:Դրանք նմանվում են այն անիծված և արմատախիլ եղած թզենուն, որ պտուղ չէր տվել Հիսուսին, որը քաղցած էր: Դրանք կզրկվեն իրենց հավատի կենսական այն քիչ ուժից, որ ունեն տակավին:

Ես հարմար դատեցի աղոթքի տեղի մասին այս մի քանի դիտարկումներն անել՝ ցույց տալու համար, որ աղոթքի հարմարագույն տեղը սրբերի հավաքավայրն է եկեղեցում:

Աղոթք՝ ուղղված դեպի արևելք

32. Ինձ մնում է մի քանի խոսք էլ ասել աղոթքի ուղղվածության մասին: Երկրի չորս ծագերին (հյուսիս, հարավ, արևելք, արևմուտք) անդրադառնալիս ո՞վ իսկույն համաձայն չի լինի, որ աղոթելիս մեր դեմքը պետք է դարձնենք դեպի Արևելք (որ հոգու խորհրդանիշն է) և նայենք դեպի ճշմարիտ լույսը: Եթե մի տան դուռը տարբեր ուղղվածություն ունի, և աղոթելու համար նախընտրելի է նայել դեպի դռան բացվածքը՝ երկինքը տեսնելու համար, որովհետև այդ տեսարանը մեզ ավելի է աղոթքի մղում, քան պատը, ապա ես կպատասխանեմ, որ տան ուղղվածությունը պայմանական է, մինչդեռ արևելքը իր բնությամբ գերակշռում է մյուս բոլոր կողմերի համեմատությամբ: Ավելի լավ է նկատի առնել բնությունը, քան պայմանականությունը: Այլապես ինչո՞ւ իր արտում աղոթող գյուղացին պիտի աղոթեր իր դեմքը դեպի արևելք դարձրած, քան դեպի արևմուտք: Ուրեմն եթե ավելի լավ է նախընտրել արևելքը, ապա ինչո՞ւ նույն բանը չանել ամենուր: Ահա այն ամենը, ինչ վերաբերում է աղոթքի ուղղվածությանը:

Աղոթքի զանազան մասերը

33. Աղոթքի զանազան մասերի վերաբերյալ մի քանի խոսք ասելուց հետո ես ավարտած կլինեմ իմ ուսումնասիրությունը: Կարծում եմ՝ պետք է նկատի ունենալ աղոթքի չորս մասեր, որոնց ես հանդիպել եմ Աստվածաշնչի տարբեր տեղերում, և որոնք հարկավոր է ի մի բերել ամբողջական մի աղոթք ունենալու համար: Ահա թե որո՛նք են այդ մասերը.

Աղոթքի սկզբում, ինչքան հնարավոր է, պետք է փառք տալ Աստծուն Հիսուս Քրիստոսով և Սուրբ Հոգով: Այնուհետև շնորհակալություն հայտնել նրան իր պարգևած բոլոր բարիքների համար ընդհանրապես և մասնավորապես: Գոհաբանությունից հետո, ինձ թվում է, աղոթողը դառնորեն զղջալով՝ պետք է իր մեղքերը խոստովանի Աստծուն և խնդրի նրան, որ բժշկի իրեն այն հակվածությունից, որը քշում տանում է դեպի չարը, և թողություն տա անցյալի իր բոլոր հանցանքներին: Ապա չորրորդ մասում, ըստ իս, պետք է հայցել երկնային մեծ բարիքները մեզ համար, մեր ծնողների համար, մեր բարեկամների և բոլոր մարդկանց համար: Վերջապես աղոթքը պետք է ավարտվի՝ փառաբանելով Աստծուն Քրիստոսով և Սուրբ Հոգով:

Փառաբանության աստվածաշնչական մի օրինակ

Աստվածաշունչը մեզ տալիս է աղոթքի զանազան մասերի վերաբերյալ օրինակներ: Ահա փառաբանության մի օ-

րինակ, որ գտնվում է 104-րդ սաղմոսում.

Տե՛ր իմ Աստված, անչափ մեծ ես դու,
Զգեստավորվել ես պատվով և մեծափառությամբ.
Կրում ես լույսը ինչպես վերարկու
և փռում երկինքն ինչպես մի օթոց:
Նա բարձունքներն իր կամարում է ջրերով
և վարում է ամպերն իբրև կառք:
Շրջում է նա հողմերի թևերին,
քամիներն իր հրեշտակներն է դարձնում
և հրակեզ բոցերը՝ սպասավորներ:
Նա հաստատել է երկիրն իր հիմքերի վրա,
որը չի սասանվի հավիտյան:
Դու այն ծածկում ես ծովային անդունդներով,
որոնք կարծես վերարկուները լինեն նրա:
Ջրերը կանգնում են լեռների վրա,
փախուստ են տալիս քո սաստից
և վեր թռչում որոտահունչ քո ձայնից:

Այս սաղմոսը համարյա ամբողջովին մի փառաբանություն է՝ ուղղված Հորը: Ամեն ոք կարող է ընտրել և հավաքել մեծ թվով ուրիշ հատվածներ այս նյութի վերաբերյալ:

Գոհաբանության օրինակ. Դավթի գոհաբանությունը Տիրոջը

Որպես գոհաբանության օրինակ մենք ընտրում ենք Դավթի խոսքերը Թագավորաց երկրորդ գրքում, երբ Նաթանը նրան է փոխանցում Աստծու խոսքերը: Դավիթը զարմանում է ի տես աստվածային բարիքների և գոհություն մատուցում Տիրոջը հետևյալ խոսքերով. «Ո՞վ եմ ես, Տե՛ր իմ Աստված, և ի՞նչ է իմ տունը, որ ինձ հասցրիր մինչև այստեղ: Տե՛ր իմ, Տե՛ր, ես դույզն չափով իսկ նվաստացած չէի լինի քո աչքին, եթե ապահոված չլինեիր քո ծառայի տունը գալիք դարերի համար: Այսպիսին է մարդկային օրենքը, Տե՛ր իմ Աստված: Ավելի ի՞նչ կարող է ասել քեզ Դավիթը: Դու ճանաչում ես քո ծառային, Տե՛ր իմ: Քո խոսքի պատճառով և ըստ քո սրտի՝ դու իրականացրիր այս փառավոր գործը, որպեսզի բարձրացնես քո ծառային: Ահա թե ինչու դու փառավորվում ես, Տե՛ր իմ Աստված» (Բ Թագ. 7:18-22):

Խոստովանության և խնդրանքի օրինակ

Ահա խոստովանության մի օրինակ. «Փրկի՛ր ինձ իմ բոլոր մեղքերից» (Սաղմ. 39:9): Մի ուրիշ տեղ՝ «Վերքերն իմ փտում և նեխվում են իմ հիմարության հետևանքով: Իսկ ես, կքած և ծայր աստիճան խորտակված, օրնիբուն քայլում եմ մռայլադեմ » (Սաղմ. 38:6-7):

Ահա մի ուրիշ օրինակ էլ խնդրանքի վերաբերյալ. «Ինձ մի՛ շփոթիր մեղավորների հետ, կորստյան մի՛ մատնիր ինձ անօրենություն գործողների հետ» (Սաղմ. 28:3): Կան նաև նմանօրինակ ուրիշ շատ հատվածներ:

Վերջապես արդար է, որ Աստծու փառաբանությամբ սկսվող աղոթքը փառաբանությամբ էլ ավարտվի՝ գովերգելով և պանծացնելով տիեզերքի Տիրոջը՝ Հիսուս Քրիստոսով և Սուրբ Հոգով, որին և փառք հավիտյանս հավիտենից:

Եզրակացություն

Սիրելի՛ Ամբրոսիոս և սիրելի՛ Տատիանա, նախանձախնդրության և բարեպաշտության մեջ եղբա՛յր իմ և քո՛ւյր իմ, ես ձեզ համար ուսումնասիրեցի աղոթքի հարցը Աստվածաշնչում և մասնավորապես Մատթեոսի ավետարանում: Եթե դուք շարունակեք ընթանալ ձեզ խոստացված բարիքներին տիրանալու ճանապարհով՝ մոռանալով այն, ինչ ձեր հետևում է մնացել, և երբեմն էլ աղոթելով ինձ համար, ապա ես չեմ կասկածում, որ շնորհների և բարության Աստծուց կստանամ ավելի առատ և ավելի սուրբ լույսեր՝ զբաղվելու համար այս նյութերով: Այն ժամանակ ես կկարողանամ ձեզ հետ նորից խոսել այս նյութերի շուրջ ավելի հստակ, ավելի վսեմ և ավելի գեղեցիկ ձևով: Առայժմ ընդունեք իմ այս աշխատությունը այնպես, ինչպես որ այն կա:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1 Որոգինեսը Ամբրոսիոսին դարձի էր բերել գնոստիկականությունից: Քանի որ վերջինս շատ հարուստ էր, իր ուսուցչի տրամադրության տակ դրեց սղագրողներ և դպիրներ, որոնք գրում էին, ինչ որ նա թելադրում էր: Եվսեբիոսը խոսում է վեց սղագրողների մասին, որոնք որոշակի ժամերին փոխարինում էին միմյանց: Հնարավոր է, որ Ամբրոսիոսն ի վերջո դարձած լինի սարկավագ, եթե հավատանք Հերոնիմոսի վկայությանը: Իսկ ո՞վ էր Տատիանան: Արդյոք Ամբրոսիոսի քո՞ւյրն էր կամ նրա կի՞նը: Նա կոչվում էր Մարցելլա՝ ըստ Որոգինեսի՝ Աֆրիկանուսին ուղղած մի նամակի:

** Հերոնիմոս (347 - 420) - Լատինական Եկեղեցու սուրբ Հայրերից: Իր կյանքն անցկացրել է Արևելքում և եռանդուն կերպով մասնակցել ժամանակի աստվածաբանական վեճերին: Եղել է վանական կյանքի տարածման ջերմ կողմնակիցներից: Իր կյանքի մեծ մասը նվիրել է Աստվածաշնչի ուսումնասիրմանը և եբրայերեն բնագրից կատարել լատիներեն մի նոր թարգմանություն, որը հիմք է հանդիսացել լատինական Եկեղեցու կողմից ընդունված Աստվածաշնչի պաշտոնական թարգմանությանը՝ Վուլգատային (Ծնթ. թարգմ.):*

2 Այս խոսքը, որ վերագրվում է Քրիստոսին, չկա ավետարաններում: Գուցե դա մի հավելված է՝ կատարված Մատթեոսի կողմից: Այս խոսքը կարող է նաև մեջ բերված լինել նազարեացիների ավետարանից: Դրան հանդիպում ենք Կղեմես Ալեքսանդրացու* մոտ. Հաճախապատում (ճառք սրբոց հարց), 1, 24: Որոգինեսը հաճախ է հիշում այս խոսքը. օրինակ՝ «Աղոթքը», գլ. 14:

** Կղեմես Ալեքսանդրացի - (150-216) - Գրող, փիլիսոփա և քրիստոնյա աստվածաբան: Ծնվել է Աթենքում: Երկար տարիներ Ալեքսանդրիայում դասավանդել է քրիստոնեական վարդապետություն: Որպես հայտնի բարոյագետ և քրիստոնեական կրոնի ջատագով, մեծ հմտությամբ պայքարել է հեթանոսության դեմ: Կղեմեսը պաշտպանում էր այն գաղափարը, թե մեղքը մարդու մեջ ծնունդ է առնում տգիտությունից, ուստի գիտությունն ու ճանաչողությունը պետք է լինի քրիստոնյայի իդեալը: Կղեմես Ալեքսանդրացին եղել է Որոգինեսի ուսուցիչը (Ծան. թարգմ.):*

3 Որոգինեսը գրում է ամուսնացած այն մարդկանց մասին, որոնք բավական առաջացած են տարիքով: Ամուսնության վերաբերյալ իր

դիրքը նման է Կղեմեսի դիրքին, որ ավելի հանդուրժողական է, քան կառուցողական:

3 Իմաստաբանության բնագավառին վերաբերող մի ուսումնասիրություն է սա, որ ցույց է տալիս հեղինակի բանասիրական գիտելիքներն ու մտահոգությունները, մի մարդու, ում շտապում են մեղադրել այլաբանության մեջ:

** Նազիրատ - Ուխտ, որով Աստծուն նվիրված որոշ իսրայելացիներ պարտավորվում էին հրաժարվել գինուց, ամեն տեսակ ոգելից խմիչքից, գլխի մազերը կտրելուց և այլն: Բացի ժամանակավոր Նազիրատից, որը կանոնագրված էր հրեական օրենքով, կար նաև մշտնջենական նազիրատ, որին երբեմն չափահաս իսրայելացիներ կամովին նվիրվում էին, իսկ երբեմն էլ որոշ ծնողներ պարտադրաբար իրենց երեխաներին նվիրում էին այդ ուխտին: (Ծնթ. թարգմ.):*

4 Անկասկած, հեղինակն ուզում է ասել՝ աղոթքի անօգուտ լինելը քչերն են պաշտպանում:

5 Հավանաբար խոսքը վերաբերում է գնոստիկյան աղանդներին, որոնք հրապուրել էին Ամբրոսիոսին:

6 Էպիկուրյան* դրույթ, որին հետևեցին 18-րդ և 19-րդ դարերի բանապաշտ (ռացիոնալիստ) փիլիսոփաները: Այս դրույթին հետևողներ դեռ այսօր էլ կան:

** Էպիկուր (341 -270) - Հույն փիլիսոփա: Աթենքում հիմնել է իր դպրոցը և ունեցել բազմաթիվ հետևորդներ, որոնք հետագայում կոչվեցին էպիկուրյաններ: Ըստ Էպիկուրի՝ մարդու ճանաչողության և բարոյականի չափանիշը նրա զգայություններն են, որոնք երջանկության սկիզբն են, պայմանով որ մարդը կարողանա տիրապետել դրանց (Ծնթ. թարգմ.):*

7 Այս թեմային հանդիպում ենք նաև Կղեմեսի մոտ:

8 Որոգինեսը մերժում է դետերմինիզմը հանուն անձնական փորձառության:

9 Այս թեման շոշափվել է նաև Փիլոն Ալեքսանդրացու* կողմից:

** Փիլոն Ալեքսանդրացի (20 Ք. ա - 50 Ք. հ.) - Հրեա փիլիսոփա: Ապրել է հունական սփյուռքում, գլխավորապես Ալեքսանդրիայում: Աշխատել է ցույց տալ, որ Աստվածաշունչն ու պլատոնականությունը միմյանց լրացնող մի միասնականություն են կազմում: Աստվածաշնչի Ծննդոց գրքի և Մովսեսի Օրենքի նրա այլաբանական մեկնությունից ազդվել են Եկեղեցու առաջին Հայրերը (Ծնթ. թարգմ.):*

10 Սա Կղեմես Ալեքսանդրացու գաղափարն է, որ փոխ է առնված հույն փիլիսոփաներից: Այս գաղափարը գտնում ենք նաև Փիլոն

Ալեքսանդրացու մոտ, որը կարող է այն փոխ առած լինել կինիկյաններից* կամ Արիստոտելից:

** Կինիկյաններ - Հույն փիլիսոփաների մի աղանդի հետևորդներ: Կինիկյան (կամ ցինիկյան) կոչված այս աղանդի հիմնադիրն է եղել Սոկրատի աշակերտներից Անտիսթենեսը (435 - 370 Ք. ա.): Ըստ որոշ պատմաբանների, կինիկյան (շնական, լիրբ, անամոթ) անունն առաջացել է նրա հետևորդների՝ հասարակական կարծիքի ու պատշաճությունների նկատմամբ դրսևորած բացարձակ արհամարհանքից, որը նրանց մղում էր կատարելու հանրային բարոյականին հակառակ լպիրշ, անամոթ գործողություններ: Կինիկյանները պաշտպանում էին այն գաղափարը, որ գիտությունը անօգուտ է և ավելորդ, որ առողջությունը, հարստություններն ու պատիվները իսկական բարիքներ չեն և հետևաբար պետք է արհամարհել դրանք: Այս աղանդի հետևորդներից է եղել հույն նշանավոր փիլիսոփա Դիոգինեսը (Ծնթ. թարգմ.):*

11 Որոգինեսը խորհրդապահորեն ակնարկություն է անում Սուրբ Գրքի հոգևոր իմաստին, այսինքն՝ այն, որ հավատացյալ մարդու միտքը թույլ է տալիս բացահայտել պատգամում: Այս նյութի շուրջ տես Հ. դը Լյուբակ, Պատմություն և Հոգի (Ֆրանս.), Փարիզ, 1950, էջ 139 - 194:

12 Մեկնություն Հովհաննես ավետարանչի, X, 21: Այդ ժամանակաշրջանում Երրորդության հասկացությունը դեռևս հստակորեն չէր բանաձևված:

13 Որոգինեսը պլատոնականների նման հավատում է հոգիների նախագոյությանը:

14 Տատիենը ծննդով միջագետքցի մի հեթանոս էր, որը, գնալով Հռոմ, հանդիպում է Հուստինիան կայսրին և ընդունում է քրիստոնեությունը: Հետագայում նա հեռանում է Քրիստոսի Եկեղեցուց: Հայտնի է նրա «Ճառ հույներին» գործը: Որոգինեսի վերոհիշյալ մեջբերումը, սակայն, այս գրքից չէ:

15 Բանականությունը ստոյիկյան տերմին է: Որոգինեսը զգուշությամբ խուսափելու համար մատերիալիստական ամեն մեկնաբանությունից, կանգ է առնում հոգևոր իմաստի վրա:

16 «Այս դիտարկումով Որոգինեսն ապացուցում է եզակի մի թափանցամտություն, որովհետև Քումրանի ձեռագրերի բանաստեղծական արվեստի վերջին ուսումնասիրությունները լիովին արդարացնում են այս մեկնությունը»: Ժ. Կարմինյակ, Հետազոտություններ... (ֆրանս.), էջ 112:

17 Սուրբ Պողոսից հետո Որոգինեսը երևակայում է, որ չար ոգիները բնակեցնում են երկնային ոլորտները: Տես Եփես. 6:12:

18 Նյութական հացի մեկնաբանությանը կողմնակից են բազմաթիվ հին մեկնիչներ և ժամանակակից բոլոր մեկնիչները: Բայց Որոգինեսը (ինչպես Տերտուղիանոսն* ու Կյուրեղ Երուսաղեմացին**), ըստ իր սովորության, խոտելի է համարում նյութական հացին վերաբերող բացատրությունը և կանգ է առնում հոգևոր հացի վրա:

** Տերտուղիանոս (155-225) - Հեթանոսությունից դարձած կարթագենացի քրիստոնյա ջերմեռանդ հավատացյալ և լատիներենով ստեղծագործող առաջին գրողներից մեկը: Հյուսիսային Աֆրիկայում ծավալել է վարդապետական մեծ աշխատանք: Հայտնի է նրա «Ընդդեմ Մարկիոնի» աշխատությունը, որով հակադրվել է հատկապես գնոստիկյան ուսմունքին (Ծնթ. թարգմ.):*

*** Կյուրեղ Երուսաղեմացի (315-386) - Ընդհանուր Եկեղեցու նշանավոր վարդապետներից: Երուսաղեմում նորընծա եկեղեցականներին երկար տարիներ դասավանդել է քրիստոնեական վարդապետություն: 350 թ. նշանակվել է Երուսաղեմի Աթոռի եպիսկոպոս, սակայն իր պաշտոնավարության շրջանը խաղաղ չի անցել. երեք անգամ ենթարկվել է երկարատև աքսորի: Մասնակցել է 381 թ. Կ. Պոլսի Տիեզերական ժողովին և պաշտպանել Նիկիական հավատը: Երուսաղեմացուց մեզ են հասել մի քանի «Քրիստոնեականներ», որ նա գրել է իր ուսանողների համար (Ծնթ. թարգմ.):*

19 Այստեղ (ինչպես և այլ հատվածներում) գոյություն ունեն տարբերակներ Որոգինեսի տրամադրության տակ եղած աստվածաշնչական բնագրի և այն բնագրի միջև, որ այսօր մենք ունենք մեր ձեռքի տակ: Ակնարկությունը հասկանալու համար պետք է հիշել, որ եբրայերեն syime բառը (որը Յոթանասնիցը, ինչպես և Վուլգատան թարգմանում են եթովպացի բառով, նշանակում է անապատի բնակիչներ, այսինքն՝ վայրի կենդանիներ, որոնք սնվում են դիակներով: Ըստ հրեական ավանդության՝ Աստված, ընդհակառակը, պահպանել է Լևիաթանի (Եգիպտոսի թագավորի) մարմինը՝ գալիք դարի նավակատիքի ճաշի ժամանակ այն մատուցելու համար արդարներին:

** Կոռնելիոս - Հռոմեացի հարյուրապետ, որի դարձը դեպի քրիստոնեություն Պետրոս առաքյալի կողմից օրինականացրեց քրիստոնեության քարոզությունը ոչ հրեաներին: Տես Գործք Առաքելոց, գլուխ Ժ: (Ծնթ. թարգմ.):*

20 Այս հատվածը, չնայած իր մթության, չափազանց արժեքավոր է ապաշխարության խորհրդի պատմության համար սկզբնական

Եկեղեցում: Որոգինեսն այստեղ հանդես է բերում նույն խստակրոնությունը, ինչ որ Տերտուղիանոսը, երբ գործում էր Աֆրիկայում:

21 Հարց չի կարող լինել այն ենթադրության մասին, որ Աստված է եղել դրական փորձության (և ոչ թե փորձանքի) պատճառը բառիս բուն իմաստով: «Փորձիչը դևն է և ոչ թե Աստված», ասում է Տերտուղիանոսը: Պետք է մեկնաբանել հետևյալ խոսքը. «Զգուշացրո՛ւ մեզ, որ հոժար չլինենք փորձության»: Տես Ժ. Կարմինյակ, «Հետազոտություններ Հայր մեր-ի մասին» (Ֆրանս.), էջ 237-304:

22 Խոսքը վերաբերում է հերետիկոս Մարկիոնին, որը տարբերում է երկու սկիզբներ. մեկը բարի սկիզբ, մյուսը՝ չար, և Հիսուս Քրիստոսի Հորը հակադրում է Հին Կտակարանի Աստծուն: Որոգինեսը մերժում է չարի ամեն նախասահմանվածություն: Նա հավատում է բոլոր մարդկանց դարձին և նրանց վերջնական փրկությանը:

23 Որոգինեսը մի անգամ ևս վերադառնում է ազատության գաղափարին, որը զարգացրել է այլուր:

24 Այս հատվածը ենթադրել է տալիս հոգեփոխությունը (մի մարմնից ուրիշ մարմնի մեջ), հոգիների բնակափոխությունը և մաքրագործություններից հետո համայնական փրկությունը, դրույթներ, որոնք հավանաբար դատապարտված կլինեին 553 թվականին:

25 Այս հատվածը կարևոր է՝ ուսումնասիրելու համար շնորհի վարդապետությունը Որոգինեսի մոտ:

26 Որոգինեսը (ինչպես հույն Հայրերն ամբողջությամբ) չար բառը կարդում է որպես արական սեռի բառ, մինչդեռ լատին Հայրերից հետո մենք ընդհանրապես դրա մեջ տեսնում ենք չեզոք սեռի մի բառ՝ չարը:

27 Պլատոնական ըմբռնում (Timée* 7, 33), որի համար ժամանակակիցները մեղադրել էին Որոգինեսին:

** Timée – Պլատոնի վերջին դիալոգներից մեկը (Ծնթ. թարգմ.):*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Որոգինես 5

Աղոթքի մասին 27

Ներածություն աղոթքի 38

Որոգինեսի պատասխանները 48

«Հայր մեր»-ի բացատրությունը 87

Քրիստոնեական աղոթքի կատարումը 155

Ծանոթագրություններ 167

Խմբագիր՝ Ասողիկ եպիսկոպոս
Գեղ. խմբագիր՝ Ղևոնդ քահանա
Շապիկը՝ Ա. Օհանջանյանի
Սրբագրիչ՝ Ս. Բուլաթյան